



**ՀՀ - ԵՄ**

**Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագրի**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ**

**Մշտադիտարկման աշխատանքների վերլուծական գնահատական  
տարեկան զեկույց**

**2021**

**Չեկույցը պատրաստվել է** «ՀՀ-ԵՄ միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրականացման քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկումն ու ջատագովությունը հանուն Հայաստանում վստահելի և համակարգային բարեփոխումների» Թբիլիսիում Նիդերլանդների թագավորության դեսպանության աջակցությամբ ծրագրի շրջանակներում:

**Չեկույցը պատրաստել են՝**

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան  
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ  
Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ  
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ  
Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն  
Խորականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա  
Իրավունքի զարգացման կենտրոն ՀԿ  
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ  
Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ  
Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն ՀԿ

**Չեկույցի բովանդակության մեթոդաբանությունը՝**

Այս զեկույցում ներկայացված են ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ով (այսուհետ Համաձայնագիր) պայմանավորված ՀՀ կառավարության կողմից գործողությունների քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկման արդյունքում վերլուծական գնահատականներ: ՀՀ կառավարության կողմից մշտադիտարկման ենթակա գործողությունները բխում են ՀՀ և ԵՄ-ի միջև Համաձայնագրի շրջանակում մշակված և ընդունված փաստաթղթերից, ներառյալ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը, հակակոռուպցիոն ռազմավարությունը: Մշտադիտարկման զեկույցը նույնպես ներառում է վերը նշված փաստաթղթերում գործողությունների համատեքստում քաղաքացիական հասարակության կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված առաջարկները ու դրանց վերլուծական գնահատականը:

## Քովանդակություն

---

Սահմանադրական բարեփոխումներ	4
Դատական իշխանության անկախություն, անաչառություն	5
Բարձրագույն Դատական խորհրդի գործունեություն	13
Իրավապահ համակարգի բարեփոխումներ` քննչական կոմիտե	17
Իրավապահ համակարգի բարեփոխումներ` քրեական և պարեկային ոստիկանություն, սահմանապահ ծառայություն	19
Քրեակատարողական, քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումներ	21
Վարչական արդարադատության և վարչական վարույթի բարեփոխումներ	37
Ընտրական օրենսդրության բարեփոխումներ	41
Կոռուպցիայի դեմ պայքար	46
Հավաքների ազատություն, Լրատվամիջոցների, տեղեկատվության և կարծիքի արտահայտման ազատություն	54
Առողջության պահպանման իրավունք	58
Իրավահավասարություն, խտրականության արգելք	76
Խոշտանգումների արգելք	78
Գործի արդար քննության իրավունք	78
Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցեր	80

# Սահմանադրական բարեփոխումներ

- **Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակում**

27.09.2020թ. Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով և դրանից հետո ՀՀ-ում (ՀՀ) ստեղծված քաղաքական լարվածության պատճառով Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքները փաստացի կասեցվել են<sup>1</sup>: Հանձնաժողովի անդամների մոտ բացակայում էր ընդհանուր համաձայնություն շարունակելու աշխատանքները: 2021թ. փետրվարին նոր հանձնաժողով ստեղծելու հարցը ներկայացվել է ՀՀ վարչապետին:

17.12.2021թ. վարչապետի որոշմամբ սահմանվել է սահմանադրական փոփոխությունների նոր հանձնաժողով կամ «խորհուրդ» ձևավորելու իրավական գործընթացի սկիզբը, որով նախկին հանձնաժողովի<sup>2</sup> փաստացի դադարեցված գործունեությունը իրավաբանորեն ևս դադարեցվում է: ՀՀ վարչապետի նոր որոշման համաձայն ԱՆ կողմից 21.12.2021թ. հայտարարվել էր Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամների թեկնածուների մրցույթ: 12.01.2022թ. ՀՀ ԱՆ կողմից հրապարակված հայտարարության<sup>3</sup> համաձայն՝ մրցույթային կարգով ընտրվել են 3 ՀԿ-ների և երկու արտախորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչներ: Հրապարակվել է նաև սահմանադրական բարեփոխումների խորհրդի կազմում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների թեկնացության հայտեր ներկայացնելու վերաբերյալ հայտարարությունը<sup>4</sup>: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հունվարի 27-ի 111 Ա որոշմամբ հաստատվել է Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը<sup>5</sup>:

Փաստացի սահմանադրական փոփոխությունների բովանդակային կողմն, ըստ էության, ձևականորեն փոխվում է նոր խորհրդի ձևավորմամբ: Այս առումով, ինչպես նախորդ, այնպես էլ նախատեսվող նոր հանձնաժողովի կազմի ներկայացուցչականության իրավական կողմը ապահովված է: Բովանդակային մասով խիստ խոցելի է սահմանադրական փոփոխությունների գործընթացի պետական քաղաքականությունը: Ոչ նախորդ, ոչ ներկայիս հանձնաժողովները չունեն պետական իշխանության ուսումնասիրություն, հետազոտություն-ազդակ ուղենիշները, որոնց հիման վրա ինքնանպատակ չի դարձվի սահմանադրական փոփոխությունները: Պետական կառավարման ձևի փոփոխության վերաբերյալ հնչող տեսակետները չունեն խորը վերլուծություններ և փաստարկներ, կրում են մակերեսային և իրադրային բնույթ: Որևէ պատճառաբանություն առկա չէ նախորդ հանձնաժողովի գործունեության դադարեցման մասին, ավելին՝ բացակայում է որևէ պահանջ հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ, որով կփաստվեր հանրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը կամ անարդյունավետությունը: Նախորդ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ իրականացված մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ հանձնաժողովում թիմային աշխատանքը, համակարգված, միմյանց հետ փոխկապակցված իրավակարգավորումներով ինստիտուցիոնալ լուծումները բացակայել են և հանձնաժողովը հիմնարար խնդիրների վերաբերյալ համակարգված լուծումներ չի առաջարկել:

- **Անցումային արդարադատություն**

<sup>1</sup> Հասանելի է այստեղ՝ <https://reforms.am/reforms/constitution/#>

<sup>2</sup> ՀՀ վարչապետի 30.12.2019թ. N 1986-Ա որոշումը

<sup>3</sup> Հասանելի է այստեղ՝ <https://moj.am/article/3044>

<sup>4</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.moj.am/article/3038>

<sup>5</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.moj.am/article/3057>

*Գործողությունը՝ Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագծի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում*

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ նախատեսված էր 2020թ. առաջին եռամսյակում ստեղծել փաստահավաք հանձնաժողով: Սակայն փաստահավաք հանձնաժողովի մասին օրենսդրական ակտի նախագիծը ՀՀ ԱՆ կողմից շրջանառության մեջ դրվեց 2020թ. մայիսին՝ առաջարկներ ներկայացնելու համար: Ըստ նախագծի հեղինակ նախարարության՝ նախագիծը գտնվում է լրամշակման փուլում: Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման և գործունեության վերաբերյալ պետական քաղաքականությունը, ավելի ճիշտ՝ քաղաքականության բացակայությունը վկայում է անցումային արդարադատության այլ գործիքների՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, դատաիրավական համակարգի վեթինգի, կառավարման համակարգի բարեվարքության ստուգման հեռանկարի վտանգումը: Փաստահավաք հանձնաժողովի հիմնարար խնդիրը ոչ թե պատժիչ գործողությունների իրականացումն է, այլև քաղաքական և հանրային ասեկոսեներից բարձր աստիճանի իրականության բացահայտումն ու իրավական արձանագրումը և դրա հիման վրա պետական համակարգի արդյունավետության բարձրացմանը միտված քաղաքականության մշակումը, ինչը սակայն որևէ կերպ չի գիտակցվում հանրային իշխանության կողմից: Փաստացի պետք է արձանագրել, որ իշխանությունները տապալել են վերոնշյալ քաղաքականությունը:

Նախագծի վերաբերյալ ՀՀ ԱՆ կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի (e-draft.am) միջոցով քաղաքացիական հասարակության կողմից ներկայացվել է 32 առաջարկություն: E-draft.am կայքը օրենսդրությամբ համարվում է հանրային քննարկման պարտադիր անցկացման հարթակներից մեկը: Չնայած նրան, որ ՀՀ կառավարության 10.08.2018թ. N 1146-Ն որոշմամբ նախագծի հեղինակը հանրային քննարկումների ավարտից հետո 15-օրյա ժամկետում պարտավորություն ունի ամփոփելու ստացված դիտողությունները և առաջարկությունները և հրապարակելու հանրային քննարկման արդյունքերի ամփոփաթեթերը և հանրային քննարկումների արդյունքում լրամշակված նախագծի տարբերակը, 2021թ. օգոստոսի ամսվա դրությամբ նախագծի հեղինակը չի ամփոփել ներկայված առաջարկությունները և չի հրապարակել լրամշակված տարբերակը:

## **Դատական իշխանության անկախություն, անաչառություն**

### **• Դատական իշխանության անկախություն, անաչառություն**

Դատական համակարգի անկախության առումով արձանագրվում է որոշակի առաջընթաց, ինչը պայմանավորված է դատական համակարգի այսպես կոչված երկփեղկմամբ՝ իշխանական և ընդդիմադիր դատավորների: Մի կողմից երևույթը խիստ դատապարտելի է, քանի որ դատավորի անկախության սկզբունքը ենթադրում է բացառապես օրենքով առաջնորդվելու գործոն, մյուս կողմից իրականության մեջ նման հակադրությունը կարող է՝ և հանգեցնում է միջավայրի որոշակի առողջացման, որակյալ դատական ակտերի կայացման: Դատական համակարգի բարեփոխումների իմփտացիոն քաղաքականությունը ցավոք չի ուղեկցվում նախաքննական մարմիններում անկախության համակարգերի ներդրման անհրաժեշտության գիտակցմամբ, իսկ բարեվարքության ստուգման գործընթացն ըստ էության չի կիրառվում:

*Գործողությունը՝ Փոխիություններ կատարել ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում՝ դատավորների աշխատանքի գնահատման չափանիշները անկախության երաշխիքների*

*շրջանակներում հստակեցնելու, դատավորների քննության գործընթացի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական մեխանիզմները կատարելագործելու ուղղությամբ*

«ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք»-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ ձևավորվել են դատավորների աշխատանքի գնահատման, ուսումնական և էթիկայի հարցերով հանձնաժողովները, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է գործառույթ վարքագծի կանոնների պահպանման, գործունեության մասնագիտական չափանիշների ապահովման և մասնագիտական որակների ապահովման ոլորտներում: Հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման առումով ընդունված իրավակարգավորումները միանշանակ գնահատվում են դրական, քանի որ նրանցում ապահովված է ՀԿ ներկայացուցիչների մասնակցությունը և իրական ազդեցության ապահովման մեխանիզմները: 2021թ. ընթացքում կառավարության կողմից ներկայացվել է «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք»-ում փոփոխությունների երեք նախագիծ՝ ուղղված դատական համակարգի ծանրաբեռնվածության հարցի լուծմանը, ինչպես նաև դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցման առիթների ընդլայնմանը: Ներկայացված նախագծերը նույնիսկ հատվածական լուծումներ չեն պարունակում և խախտում են դատական համակարգի անկախությունը: Գործերը դատավորներին մակագրելու մեխանիզմը խիստ անընդունելի արձանագրումներ է ունեցել 2021թ., մասնավորապես՝ քրեական գործերը ձեռքով դատավորներին մակագրելու արատավոր և կոռուպցիոն հստակ ռիսկեր պարունակող գործընթացը շարունակվում է: Խնդիրը հատկապես սրացել է այսպես կոչված «քաղաքական բնույթ ունեցող» դատավարությունների հետ կապված, ինչպես նաև մի շարք դեպքերում կալանքի կիրառման միջնորդությունները մերժած դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ արդարադատության նախարարի կողմից հարուցելու դեպքերով պայմանավորված: Դատական համակարգի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու քաղաքականությունն, նույնիսկ հատվածական գնահատել հնարավոր չէ, քանի որ այդ քայլերը հաշվարկված չեն վիճելի իրավահարաբերություններ ծնող օրենսդրության բարեփոխումների համատեքստում: Մասնավորապես, վարչական դատարանի գերծանրաբեռնվածությունը նվազեցնելու քաղաքականությունը սահմանափակվում է բացառապես դատավորների թվի ավելացմամբ, ինչը միանշանակ չի կարող լուծել խնդիրը: Վարչաիրավական բնույթ ունեցող հարկային, քաղաքաշինական, տեղեկատվության հասանելիության և այլ ոլորտային հարաբերությունները կանոնակարգող գործող օրենսդրությունն ինքնին նպաստավոր միջավայր է ձևավորում վիճելի հարաբերությունների քանակի ավելացման համար: Այս ուղղությամբ որևէ պետական մարմին չի նախաձեռնել համակարգային խնդիրների լուծման ռազմավարական քաղաքականության իրականացում, այս առումով բացակայում են վերլուծական կարողությունները:

Մինչև 25.03.2021 թ. «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում իրականացված փոփոխությունները՝ Դատավորների գործունեության գնահատումն իրականացնում էր ԲԴԽՐ՝ «ՀՀ դատական օրենսգրքով» սահմանված չափանիշների հիման վրա: «Դատական օրենսգրքի» 138-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշները ներառում են՝ դատական ակտը հիմնավորելու կարողությունը: Նշված չափանիշի կիրառումը խնդրահարույց է և սույն մշտադիտարկումը իրականացնող կազմակերպությունները իրենց նկատառումները ներկայացրել են «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ հրապարակված կարծիքում, համաձայն որի՝ «Չբացառելով առանձին դատական ակտերում հիմնավորվածության չափանիշի հետ կապված դատավորների կողմից թույլ տրվող միտումնավոր կամ անփույթ խախտումները՝ նշված չափանիշի սահմանումը որպես աշխատանքի արդյունավետության գնահատում անթույլատրելի և խիստ ռիսկային է:

Դատական ակտի հիմնավորվածության գնահատումը ենթադրում է դատավարական առումով բողոքարկման իրավական ընթացակարգերի սահմանում, ինչը դրված է դատական համակարգերի կառուցման հիմքում: Նման չափանիշի սահմանումը հակասում է դատավորի

անկախության կարևորագույն սկզբունքին և հիմքեր ստեղծում դատավորների նկատմամբ ազդեցության լծակներ ապահովելու համար: Պետք է փաստել նաև, որ դատական ակտի հիմնավորվածության չափանիշի տեսանկյունից դատավորի կողմից միտումնավոր կամ անփութությամբ որոշ դեպքերում խախտումներ կատարելու իրավական որակյան խնդիրն իր լուծումը ստացել է քրեական օրենսդրությամբ համապատասխան հողվածներով՝ ինչպես օրինակ ՀՀ քրեական օրենսգրքի 352 հոդվածում՝ ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը հանցակազմի սահմանմամբ»<sup>6</sup>:

Վենետիկի հանձնաժողովն անդրադարձել է դատավորների գործունեության գնահատման կարգավորումներին<sup>7</sup> և արձանագրել, որ դրանք պետք է հստակ սահմանեն, որ դատավորի՝ արդարադատությունը կառավարելու, կարգավորելու կարողությունների գնահատումը, օրինակ՝ առավելագույն ժամկետները պահելը, ժամանակացույցին հետևելը, և այլ պայմաններ, պետք է հաշվի առնվեն ծանրաբեռնվածության և համանման այլ հանգամանքների հետ միասին<sup>8</sup>: Միաժամանակ հարկ է նշել, որ կատարված օրենսդրական փոփոխությունները չեն նախատեսում գնահատման արդյունքների վերաբերյալ որոշումը բողոքարկելու կարգավորում և ընթացակարգ, ինչը նույնպես խնդրահարույց է<sup>9</sup>:

«Դատական օրենսգրքի» 139-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 1. Դատավորի գործունեության գնահատումն իրականացնում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝ սույն օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա: 2. ԲԴԽը սահմանում է դատավորի գործունեության գնահատման մեթոդաբանությունը, ներառյալ՝ սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորի գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասներ:

2020թ. օգոստոսին ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվել է «Դատավորի գործունեության գնահատման կարգը և ժամկետները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը, մեթոդաբանությունը, սանդղակները և գնահատման թերթի ձևը

<sup>6</sup> «ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ հրապարակված կարծիքը հասանելի է՝ [այստեղ](#)

<sup>7</sup> Վենետիկի հանձնաժողովի արձանագրման համաձայն՝ կարևոր է, որ գնահատումը լինի մեծապես որակական և կենտրոնանա դատավորի մասնագիտական կարողությունների վրա: Դատավորի գնահատումը չպետք է հիմնված լինի դատավորի կայացրած վճիռների կամ որոշումների բովանդակության վրա: Ավելին, որպես գնահատման չափանիշ պետք է խուսափել այնպիսի քանակական ցուցանիշների կիրառումից, ինչպիսիք են հայցերի վերադարձնելը և արդարացումները (CDL-AD(2014)007, Joint opinion on the draft law amending and supplementing the judicial code (evaluation system for judges) of Armenia): Վենետիկի հանձնաժողովը սահմանել է, որ դատավորի հերթական գնահատման նպատակն է պարզել դատավորի անհատական կարիքները՝ ապահովելու նրա որակավորման զարգացումն ու խթանումը (CDL-AD(2015)007-e): Պարբերական գնահատումները դատավորի գործունեության կարևոր գործիքներ են, որպեսզի վերջինս բարելավի իր աշխատանքը և կարող են նաև ծառայել որպես առաջխաղացման հիմք: Կիևի հանձնարարականի համաձայն՝ դատավորների գնահատումը կարող է օգտագործվել՝ ի սպասարկումն դատավորի աշխատանքային գործունեության տարբեր ասպեկտների բարելավման, ինչպես նաև հնարավոր առաջխաղացման համար: Դատավորների պարբերական գնահատումները, որոնք կարող են հանգեցնել աշխատանքից հեռացման կամ այլ սանկցիաների, չեն համապատասխանում դատավորների ցմահ պաշտոնավարմանը (OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe):

<sup>8</sup> Տե՛ս CDL-AD(2017)018, Bulgaria - Opinion on the Judicial System Act

<sup>9</sup> ԵԴԽԽ-ն նշել է, որ պետք է նախատեսվի նաև ընթացակարգ, որը թույլ կտա վիճարկել գնահատումներն անկախ մարմնի կամ դատարանի առջև: Ուստի՝ գնահատվող դատավորը հնարավորություն պետք է ունենա իր ներդրումը կատարելու գնահատման գործընթացում այնպես, որ նման ներդրումն օգտակար լինի: (...) Գնահատվող դատավորը պետք է իրավունք ունենա արդյունավետորեն վիճարկելու ոչ բարենպաստ գնահատումը, հատկապես, երբ դա վերաբերում է դատավորի «քաղաքացիական իրավունքներին»՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով: Արդյունավետ վերանայման՝ նման իրավունքները հատկապես կարևոր են, երբ գնահատումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ դատավորի համար (Տե՛ս ԵԴԽԽ N 17 (2014) կարծիքը, պարբերություն 4 հասանելի է այստեղ՝ <https://rm.coe.int/no17-in-armenian-17-2014-/16808e6529>):



սահմանելու մասին» ԲԴԽ-53-Ն-9 որոշումը: Վերջինիս համաձայն սահմանվել են Դատական օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները: Հարկ է նկատել, որ ցուցիչները որոշ դեպքերում շեղվում են սահմանված չափանիշներից և ԵԴԽԽ կողմից արտահայտված դիրքորոշումներից, մասնավորապես, որոշմամբ սահմանվել են Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման բաժնի աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակության և աշխատանքի պլանավորման ցուցիչները, որոնցում, ի թիվս այլնի նախատեսվել են բողոքարկված և բեկանված (վերացված) դատական ակտերի հարաբերակցությունը և բեկանման անվերապահ հիմքերով բեկանված (վերացված) դատական ակտերի քանակը և ըստ դրա սահմանվել են միավորներ: Նախ անհասկանալի է, թե բեկանված դատական ակտերի քանակը և բողոքարկումների նկատմամբ վերջիններիս հարաբերակցությունը ի՞նչ առնչություն ունի աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակության և աշխատանքի պլանավորման հետ: Բացի այդ, N 11 (2008) և N 17 (2014) կարծիքներում ԵԴԽԽ-ն խնդրահարույց է համարել գնահատումը բեկանված կամ բողոքարկված դատական ակտերի թվի կամ տոկոսի վրա հիմնելը<sup>10</sup>:

Այսպիսով, գնահատման հանձնաժողովի գործունեության և դատավորի գործունեության գնահատման կարգերը փոփոխվել են, սակայն սույն ենթակետում արտահայտված և միջազգային չափանիշների հիման վրա առաջ քաշված դիրքորոշումների (գնահատման արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրման, «դատական ակտը հիմնավորելու կարողության» չափանիշի փոփոխման և բեկանված դատական ակտերը որպես գնահատման ցուցիչ չհամարելու) հաշվառման դեպքում միայն կապահովվի դատավորների գործունեության գնահատման և դատավորների անկախության և կամայական միջամտությունների անթույլատրելիության չափանիշների միջև ողջամիտ հարաբերակցությունը:

««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.2020 թ.ն ընդունված օրենքի 31-րդ հոդվածով նախատեսվեց օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 105.1-ին հոդվածով. «1. Գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: 2. Համապատասխան մասնագիտացմամբ բողոքարկման հանձնաժողովը կազմավորվում է տվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, երկու դատավորի և մեկ իրավաբան գիտնականի կազմով, որոնք վիճակահանությամբ ընտրվում են Ոստումնական հարցերի հանձնաժողովի կողմից առաջարկված տվյալ մասնագիտացման հինգ և Լիազոր մարմնի կողմից առաջարկված իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն երեք իրավաբան գիտնականի թեկնածուների կազմից՝ նրանց համաձայնությամբ: Գնահատման հանձնաժողովի անդամները չեն կարող ընդգրկվել բողոքարկման հանձնաժողովի կազմում: 3. Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու, հանձնաժողովի աշխատանքն իրականացնելու կարգի, հանձնաժողովի անդամների վարձատրության, նրանց լիազորությունների դադարեցման, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության դադարման նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով, իսկ բողոքարկման արդյունքների վերանայման նկատմամբ՝ 105-րդ հոդվածով սահմանված դրույթները: 4. Բողոքարկման հանձնաժողովը բողոքը քննում և դրա վերաբերյալ կայացնում է որոշում բողոքարկման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Բողոքարկման հանձնաժողովը կարող է քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել կամ բավարարել՝ մասնակի կամ ամբողջությամբ: 5. Գրավոր քննության արդյունքները դատական կարգով կարող են բողոքարկվել ընթացակարգային խախտումների հիմքով, եթե դրանք բողոքարկվել են բողոքարկման հանձնաժողով:»:

<sup>10</sup> Տե՛ս ԵԴԽԽ N 11 (2008) կարծիքը, պարբերություն 57 և N 17 (2014) կարծիք պարբերություն 35



Այսպիսով, թեև ներդրվել է քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգ, սակայն հարկ է նշել, որ այն սահմանափակում է քննության արդյունքների դատական կարգով բողոքարկման հնարավորությունը: Մասնավորապես 105.1 հոդվածի 5-րդ մասը իրավունք է վերապահում քննության արդյունքները բողոքարկել դատական կարգով միայն ընթացակարգային խախտումների մասով և ոչ թե ըստ էության, այն էլ բողոքարկման հանձնաժողով բողոքարկելուց հետո: Քննության արդյունքները վիճարկելու հիմքերի սահմանափակումն այնքանով, որքանով չի նախատեսում այդ արդյունքները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրացման արգելափակմանը: Անդրադառնալով այն հարցին, որ որպես քննության արդյունքների բողոքարկման այլընտրանքային հնարավորություն, նախատեսվել է բողոքարկման հանձնաժողովը, նշենք, որ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1571 որոշմամբ քննարկելով վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառմամբ դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման և/կամ այլ իրավաչափ նպատակ հետապնդող նկատառումներից ելնելով տարբեր արտադատական ինստիտուտների և ընթացակարգերի ներդրմանը՝ հայտնել է, որ «այն պետք է իրականացվի դատարանի մատչելիության և արդար դատաքննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո»<sup>11</sup>:

Բացի այդ, չի սահմանվել գնահատման հանձնաժողովի անդամների պարտականությունը հիմնավորել և պատճառաբանել հավակնորդի պատասխանին նշանակված կոնկրետ գնահատականը, ինչը պրակտիկայում կարող է հանգեցնել հավակնորդի աշխատանքի կամայական գնահատման:

««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.2020 թ.ն ընդունված օրենքով փոփոխվել է Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման կարգը, մասնավորապես, օրենքի 23-րդ հոդվածով փոփոխություն կատարվեց Օրենսգրքի 94-րդ հոդվածում՝ սահմանելով, որ «Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի»: Նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսվեց, որ «Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ (...):

«Դատական օրենսգրքի» 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման ավարտից հետո անցկացվում է բաց քվեարկություն՝ խորհրդակցական սենյակում քվեարկություն, որի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»»:

«Դատական օրենսգրքի» 108-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի համաձայն. «6. Հարցազրույցի ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամներին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են սույն հոդվածով և Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված գնահատման ենթակա հատկանիշները: Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ գնահատում է յուրաքանչյուր հավակնորդի՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: 8. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և

<sup>11</sup> Հասանելի է այստեղ՝ <https://concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1571.pdf>

հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը»:

Այսպիսով, թեև «ՀՀ դատական օրենսգրքով» սահմանվել է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, այնուամենայնիվ, Օրենսգրքով գնահատման պատճառաբանվածության օրենսդրական պահանջի բացակայության պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից դատավորների թեկնածուների հավակնորդների գնահատումը թողնված է յուրաքանչյուր անդամի ներքին համոզմանը: Արդյունքում, գնահատումն անկանխատեսելի է, հավակնորդի համար անհստակ և չպատճառաբանված:

Թափանցիկության տեսանկյունից խնդրահարույց ենք համարում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նախատեսված կարգավորումը, համաձայն որի՝ «7) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման»:

Այսպիսով, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ ներկայացված եզրակացությունները հրապարակային չեն, ինչը խոչընդոտում է այդ գործընթացի թափանցիկ իրականացմանը: Բացի այդ, եզրակացությունը Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից հաշվի է առնվում դատավորների հավակնորդների ցուցակի կազմման համար, մասնավորապես Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «8. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը»: Այսպիսով, ԲԴԽը պարտավոր է հաշվի է առնել մի փաստաթուղթ, որը հրապարակային չէ, ինչը նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացվող որոշումների թափանցիկության սկզբունքի խախտում է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք փոփոխել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նախատեսված կարգավորումը՝ սահմանելով, որ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա են հրապարակման:

*Դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության ապահովում*

ՀԲԱՎ գրասենյակը հարցում էր ուղարկել ՀՀ ԱՆ, սակայն վերջինս միայն ծավալուն ներկայացրել էր Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում

միջազգային փորձագետների ներգրավվածության հարցը, մինչդեռ մյուս դատավորների, այսինքն ընդհանուր առմամբ դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության հարցը թողնվել է անպատասխան:

Միաժամանակ 2020 թ. 2-րդ կիսամյակային Հաշվետվությունում սույն գործողության կատարման վերաբերյալ «նշումներ» առկա է հետևյալ տեղեկատվությունը. ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ: Այնուամենայնիվ, դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության ապահովմանը ուղղված նախատեսվում է համապատասխան փոփոխություններն իրականանել այլ նախագծերի փաթեթով»: Կազմակերպության այն հարցին, թե ո՞ր իրավական ակտում է նախատեսվում կատարել փոփոխություն՝ ՀՀ ԱՆը թողել է անպատասխան:

Ազային ժողովի կողմից 14.04.2021թ. երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները<sup>12</sup>, որոնցով նախատեսվում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը: Նշված օրենքների փաթեթի սահմանադրականությունը ՀՀ Նախագահի կողմից ներկայումս վիճարկվում է Սահմանադրական դատարանում:

««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն.

«44.1) դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների մասնակցության անհրաժեշտության դեպքում սահմանում է փորձագետների ներգրավման կարգը և նրանց ներկայացվող պահանջները.»:

Օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ԲԴԽը սահմանում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման կարգը՝ սույն հոդվածի 11-15-րդ մասերով սահմանված կարգին համապատասխան: Հակակոռուպցիոն դատարանի և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների առաջխաղացման ենթակա համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման նպատակով հարցազրույց անցկացնելու օրվան նախորդող տասն օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան հարցազրույցից հինգ օր առաջ Դատական Դեպարտամենտը կազմակերպում է հավակնորդների նախնական հարցազրույցը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով ներգրավված փորձագետների հետ»:

3. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը 14.04.2021 թ.ն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ<sup>13</sup>: Նշված օրենքի սահմանադրականությունը «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների հետ

<sup>12</sup> Հասանելի է այստեղ՝ <http://www.parliament.am/register.php?ID=606#r9374>

մեկտեղ ՀՀ նախագահի դիմումի հիման վրա քննարկվում է ՀՀ Սահամանադրական դատարանում: Օրենքների սահամանադրության համապատասխանության վերաբերյալ որոշում դեռևս չի ընդունվել:

Նախագծերը դրվել են հանրային քննարկման 31.07.2020-15.08.2020 ժամանակահատվածով ՀՀ ԱՆ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Նախագծերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության կողմից ներակայացվել է 26 առաջարկություն, որոնց վերաբերյալ արդյունքերը ներառվել են ամփոփաթեթում<sup>14</sup>: 03.06.2021թ. Կառավարությունը համաձայնություն է տվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով և ՀՀ սնանկության դատարանի դատավորների թվակազմը 4 դատավորով ավելացնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի 11.05.2021թ. առաջարկությամբ:

08.07.2021թ. Կառավարությունը համաձայնություն է տվել ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թվակազմն ավելացնելու վերաբերյալ առաջարկությամբ և հաստատել «ՀՀ 2021 թ. պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը, որով նախատեսվել է ավելացնել քրեական մասնագիտացման 17 դատավոր ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում (Երևան քաղաքում և մարզերում) և 3 դատավոր ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում:

Նշենք, որ ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի Հաշվետվության մեջ նշվել էր, որ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկության հիման վրա կազմվել է վերաքննիչ վարչական դատարանը 6 դատավորով և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 6 դատավորով ավելացնելուն համաձայնություն տալու մասին Կառավարության որոշման նախագիծ, սակայն ինչպես նշվեց վերը, Նախագիծը սահմանել է վերաքննիչ վարչական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով և ՀՀ սնանկության դատարանի դատավորների թվակազմը 4 դատավորով ավելացնելու կարգավորում:

Անորոշ է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում (Երևան քաղաքում և մարզերում) քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թվակազմի ավելացման հարցը, քանի որ այս կապակցությամբ Նախագիծ դրված չէ հանրային քննարկման, իսկ ԱՆ կողմից հրապարակված հաշվետվությունները այս մասով հստակ տեղեկատվություն չեն պարունակում, մինչդեռ ակնհայտն է, որ դատավորների ծանրաբեռնվածության և թվակազմի ավելացման հիմնախնդիրը առկա է նաև ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական մասնագիտացմամբ դատարաններում: Ընդ որում, Ռազմավարության ուղենիշային հանդիսացող 1-ին Հավելվածում նշված գործողության կապակցությամբ ներկայացված է քաղաքացիական գործերով դատավորի ծանրաբեռնվածության օրինակը, մասնավորապես. «Երևան քաղաքում քաղաքացիական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թ.ն կազմել է 632 գործ, այնինչ՝ 2018թ.՝ 1290 գործ, իսկ մարզերում՝ 2013թ.՝ 469 գործ, այնինչ՝ 2018թ.՝ 1447 գործ: Երևան քաղաքում քրեական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013թ. կազմել է 66 գործ, իսկ 2018թ.՝ 81 գործ, մարզերում՝ 2013 թ.՝ 74 գործ, 2018թ.՝ 84 գործ»:

<sup>14</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-draft.am/projects/2644/digest?page=1>

# Բարձրագույն Դատական Խորհրդի գործունեություն

## • «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք

*Գործողությունը՝ ՀՀ դատական օրենսգրքով նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները դատավորի կողմից բողոքարկելու հնարավորությունը:*

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում բացակայում է ՀՀ-ում գործող դատարաններից որևէ մեկում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին ԲԴԽ որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն, քանի որ դա կհակասի ԲԴԽ՝ որպես անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակին: Բացի դրանից, տվյալ որոշումների վերանայումը, դրանով իսկ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը դուրս է ՀՀ-ում դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակներից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը քիչում է առկա սահմանադրական իրավակարգավորումներից և չի խախտում անձի դատական պաշտպանության և արդար դատաքնության իրավունքները:

*Գործողությունը՝ Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանը:*

Գործողության կատարողականի վերաբերյալ 14.09.2021թ. ՀՀ արդարադատության նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն, որի համաձայն՝ 03.09.2020թ. ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է պատասխանատու ստորաբաժանում՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը:<sup>15</sup> Դատախազների թվաքանակի ավելացում է նախատեսվում ՀՀ ԱԺԻ կողմից 14.04.2021թ. երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված՝ «Դատախազության մասին օրենքում» լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով:<sup>16</sup> Նախատեսվում է ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծել պատասպանատու ստորաբաժանում, որն իրականացնելու է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն: Ռազմավարական փաստաթղթերով նախատեսվում է դատախազների վարձատրության բարձրացում, որը իրականացվում է փուլային սկզբունքով:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին 16.04.2020թ. ՀՕ-247-Ն և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին 25.06.2020թ. ՀՕ-342-Ն օրենքներով Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազների համար սահմանվել է առավել բարձր վարձատրություն: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող վարչության պետի վարձատրության դրույքաչափի գործակիցը կազմում է 10.00, իսկ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազի վարձատրության

<sup>15</sup> Հետևյալ կազմով՝ չորս դատախազ, երկու ավագ դատախազ, վարչության պետի տեղակալ և վարչության պետ, հինգ տնտեսագետ և վարչությանն աջակցող բաժին:

<sup>16</sup> Նշված օրենքի սահմանադրականությունը «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների հետ մեկտեղ ՀՀ նախագահի դիմումի հիման վրա քննարկվում է ՀՀ Սահմանադրական դատարանում:

դրույքաչափի գործակիցը կազմում է 9.00: Ներկա պահին, Երևան քաղաքի դատախազի վարձատրության դրույքաչափի գործակիցը կազմում է 9.00, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազի վարձատրության դրույքաչափի գործակիցը կազմում է 8.00, մարզերի, Երևան քաղաքի տարածքների դատախազների վարձատրության դրույքաչափի գործակիցը կազմում է 6:00:

24.03.2021թ. ընդունվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-152-Ն օրենքը, որի 4-րդ հոդվածով սահմանվել է, որ «Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոններում, առանձնահատկություններով պայմանավորված, տրվում են հավելումներ»:

Հանրային քննարկման է դրվել 01.11.2021 - 16.11.2021 ժամանակահատվածով «Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների առանձնահատկություններով պայմանավորված տրվող հավելումների վճարման չափերը, կարգը, ինչպես նաև առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:<sup>17</sup> Նախագծով առաջարկվում է պաշտոնների համար նախատեսել հավելումներ՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ տոկոսային ավելացմամբ: Առաջարկվում է ՀՀ գլխավոր դատախազի հավելումը սահմանել 95%, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 100%, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքները համակարգող) 120%, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող) 90%, և ստեղծվելիք ՀՀ գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների՝ 100%: Դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանը չպետք է սահմանափակվի միայն կոռուպցիոն բնույթի քրեական գործերով հսկողություն և վերահսկողություն կատարելով: Ստացվում է, իշխանությունների նպատակն է, ոչ թե առհասարակ դատախազների աշխատավարձի բարձրացումն ապահովելը, այլ առավել բարձր աշխատավարձի չափ սահմանելը, քան նախատեսված է նույն կարգավիճակն ունեցող այլ դատախազների դեպքում: Սահմանադրական դատարանը բազմիցս նշել է, որ «խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»: Գտնում ենք, որ սույն գործողության շրջանակներում պետք է քայլեր ձեռնարկվեն ՀՀ դատախազության համակարգի բոլոր դատախազների աշխատավարձերի դրույքաչափերի, հավելավճարների վերանայման, ինչպես նաև համաչափ, արդարացված և հիմնավորված բարձրացումն ուղղությամբ:

Գործողություն՝ Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում

Սույն մշտադիտարկման շրջանակում հարցմանն ի պատասխան՝ ԱՆ հայտնել է, որ 2020-21թթ. ընթացքում իրականացվել են քննիչների հետևյալ վերապատրաստումները (դասընթաց՝ քննիչների քանակ)՝ Կոռուպցիոն դեպքերի քննություն (45), Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն (124), Կիրեռահանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկություններ (53), Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար (38), Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան (45), Ստավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքար (17), էլեկտրոնային

<sup>17</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-draft.am/projects/3685/justification>



ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում (88), Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդր ազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար (31), Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան (12), Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան (12), Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հիմնախնդիրներ (12): Հարկ է նշել, որ «Քննչական մարմինների բարեփոխում» ռազմավարական նպատակը վերաբերում է նաև ԱԱԾ քննչական դեպարտամենտին: ՀՔԱՎ գաբսենյակը բազմիցս անդրադարձ կատարել է ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) համակարգային փոփոխության, այն ժողովրդավարական և իրավական պետության պահանջներին համափատասխանեցնելու և այդ մարմնի քննչական դեպարտամենտի քննիչների ոչ թափանցիկ և հակաիրավական աշխատանքներին<sup>18</sup>:

• **ԲԴԽ դատավորի լիազորություններ**

*Գործողությունը՝ ՀՀ դատական օրենսգրքով նախատեսել ԲԴԽ՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները դատավորի կողմից բողոքարկելու հնարավորությունը:*

[www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքում 09.08.2019-26.08.2019թթ. հանրային քննարկման են դրվել<sup>19</sup> «ՀՀ դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերը: ՀՀ ԱԺ 25.03.2020թ. երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունեց «ՀՀ դատական օրենսգրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծով փոփոխություն է նախատեսվել նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները դատավորների կողմից բողոքարկելու հնարավորությունը: Ընդունված կարգավորումը չի հանդիսանում ԲԴԽ որոշման բողոքարկում, այլ նույն մարմնի կողմից գործի վերանայում միայն նոր երևան եկած հանգամանքների բերումով և որոշման իրավաչափությունն ու բովանդակությունը քննության չի առնվում այլ մարմնի կողմից նույն փաստերի և ապացույցների հիման վրա:

Ընդունված կարգապահական որոշումների համար պետք է բողոքարկման արդյունավետ հնարավորություն նախատեսել: Վենետիկի հանձնաժողովը կարևորում է, որպեսզի բողոքարկման մարմին սահմանված լինի օրենքով: Որոշումները պետք է այնպիսի մարմնի կողմից վերանայվեն, որն անկախ է և ապահովում է դատական գործընթացների/արդար դատաքննության բոլոր երաշխիքները:<sup>20</sup> Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ ողջունում է այնպիսի կարգավորումներ, որոնք նախատեսում են բողոք ներկայացրած անձի մասնակցությունը վարույթին: Սակայն պետք է նախատեսել նաև մասնակցության որոշակի ցուցանիշներ և տեղեկությունները տարածելու հետևանքները: Դատավորը պետք է վարույթի նախնական փուլից տեղյակ լինի դրա մասին և հնարավորություն ունենա խորհրդատվություն ստանալ վարույթի բոլոր փուլերում<sup>21</sup>:

<sup>18</sup> Տե՛ս հետևյալ հղումները՝ <https://hcav.am/15-01-19/>; <https://hcav.am/13-5-19-lragir/>; <https://hcav.am/mamul-29-11-19/>; <https://hcav.am/azatutyun-12-12-19/>; <https://hcav.am/sashik-sultanyan-30-07-21/>

<sup>19</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-draft.am/projects/1852>

<sup>20</sup> Տե՛ս Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015.

<sup>21</sup> Տե՛ս Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe on the Draft Law on Making Changes to the Law on Disciplinary Liability and Disciplinary Proceedings of Judges of General Courts of Georgia.



Օրենսդրական մակարդակում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի հետ կապված ամենամեծ բացթողումն ու խնդիրը կապված է կայացված որոշման բողոքարկման մեխանիզմների բացակայության հետ: Այսպես, Դատական օրենսգիրքը սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին ԲԴԽ որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է: Հատկանշական է, որ սույն մոտեցումն ու մտահոգությունը արտահայտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված կարծիքում (194): Մասնավորապես, Հանձնաժողովը նշել է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը Սահմանադրական դատարան բողոքարկելը վերանայում չի կարող համարվել: Նախ, բողոքարկման նման հնարավորությունը բավականին նեղ շրջանակ ունի և սահմանադրականության հարցը նման դեպքերում հաճախ չի ծագում: Ավելին, ինչպես արդեն հայտնել է Վենետիկի հանձնաժողովը, կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման քննությունը Սահմանադրական դատարանի հիմնական գործառնություններից չէ: Հետևաբար, Սահմանադրական դատարանը նման բողոքներ քննող մարմին չէ, և կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի կողմից սահմանադրական դատարան բողոքի ներկայացումը կարգապահական պատասխանատվության որոշման բողոքարկման պատշաճ մեխանիզմ չէ: Հետևաբար, բողոքարկման համակարգի բացակայությունը մտահոգության տեղիք տվող հարց է: Հանձնաժողովը կրկին հաստատել է բողոքարկման մեխանիզմի անհրաժեշտությունը: Որպես լուծում քննարկվել է կամ Վճռաբեկ դատարանը, սակայն Սահմանադրությունը նման հնարավորություն չի տալիս, կամ ԲԴԽ կազմում առանձին պանելի ձևավորումը: Նախագծի հեղինակն ԱՆՆ է:

#### • ԲԴԽ դատավորի անկախությունը

Գործողություններ` «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում հստակեցնել դատավորի վարքագծի կանոնները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, ավելացնել այնպիսի վարքագծի կանոններ, որոնց խախտումը կասկածի տակ է դնում դատավորի անկախությունը, անկողմնակալությունը և անկաշառությունը, սահմանել դատավորների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ կառուցակարգեր` ուղղված.

ա. ՀՀ բոլոր դատավորների, ԲԴԽ խորհրդի անդամների կողմից օրենքով սահմանված ժամկետում իրենց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնելուն.

բ. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ՀՀ-ում գործող բոլոր դատավորների և ԲԴԽ անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրությանը.

գ. ԲԴԽ անդամների` բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման համար համապատասխան նյութերը ԲԴԽ ներկայացնելուն.

դ. Դատավորների` բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական վարույթի հարուցմանը և ԲԴԽ ներկայացնելուն.

ե. ԲԴԽ կողմից վերոգրյալ հայտարարագրերի արդյունավետ քննությանը:

ՀՀ ԱԺը 25.03.2020թ. երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունեց «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը,<sup>22</sup> որով նախատեսվել է որպես դատավորների վարքագծի ընդհանուր կանոն ներառել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի ներկայացումը, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ

<sup>22</sup> Հասանելի է այստեղ` [http://parliament.am/draftreading\\_docs7/K-428\\_DR2.pdf](http://parliament.am/draftreading_docs7/K-428_DR2.pdf)

նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է: Սրանք վերաբերելի են նաև ԲԴԽ անդամներին: Վերոգրյալ վարքագծի կանոնների խախտման առնչությամբ դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական պատասխանատվության վարույթ կարող է հարուցել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

## Իրավապահ համակարգի բարեփոխումներ՝ քննչական կոմիտե

- **Դատախազների թվակազմի ավելացումը, աշխատավարձը, հավելավճարները**

*Գործողություն՝ Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանը:*

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում 25.06.2020թ.-ից ի վեր կատարվել են նաև հետևյալ փոփոխություններն ու լրացումները. Ընդունված է 29.12.2020թ.: Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ մասով. «2.2. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը 2021 թ. համար չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 70 տոկոսից»: Ընդունված է 10.12.2021թ. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.3-րդ մասով. «2.3. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը 2022 թ. համար չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 70 տոկոսից»:»:

*Գործողություն՝ Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և քննիչների թվակազմի ավելացմանը:*

Այսպես, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 1-ին հավելվածի աղյուսակի «Քննչական կոմիտե» բաժնում կատարվել են հետևյալ փոփոխություններն ու լրացումները. Ընդունված է 01.07.2021թ. Լրացում է կատարվել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝ «Քննչական կոմիտեի նախագահի խորհրդական- 4.75 (գործակիցը), քննչական կոմիտեի նախագահի օգնական- 4.50, քննչական կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար- 4.50, քննչական կոմիտեի նախագահի տեղակալի օգնական- 3.50. Ընդունված է 24.03.2021թ.. Օրենքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 14.4-րդ հոդվածով՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրությունը. 1) Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի 1-ին հավելվածով: 2) Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վճարվում է հավելավճար՝ հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և (կամ) հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ այդ պաշտոնը որպես պետական

հատուկ ծառայող զբաղեցնելու), դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ երկու տոկոսի չափով: 3) Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար: 4) Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը: 5) Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին, որպես առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձ, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի հարյուր տոկոսի չափով:»:

Օրենքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 16.1-ին հոդվածով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարձատրությունը. 1) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների, բացառությամբ սույն օրենքի 14.4-րդ հոդվածում նշված անձանց (այսուհետ՝ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներ), պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի 1-ին հավելվածով: 2) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար: 3) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին, որպես առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձ, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի հարյուր տոկոսի չափով:»:

«Դատական դեպարտամենտ» բաժնից հետո լրացում է կատարվել հետևյալ բովանդակությամբ նոր բաժնով. Հակակոռուպցիոն կոմիտե. Հակակոռուպցիոն կոմիտեի վարչության, այդ թվում՝ տարածքային վարչության պետ - 8.00, հակակոռուպցիոն կոմիտեի վարչության, այդ թվում՝ տարածքային վարչության պետի տեղակալ, Հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ - 7.75, հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննիչ, հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետ- 7.50, հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետի տեղակալ, հակակոռուպցիոն կոմիտեի ավագ քննիչ - 7.25, հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ - 7.00, հակակոռուպցիոն կոմիտեի ավագ օպերիվագոր - 5.00, հակակոռուպցիոն կոմիտեի օպերիվագոր- 4.50, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի խորհրդական - 5.00, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար - 5.00, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի օգնական- 4.50 Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի օգնական- 3.50:

#### • **Քննիչների կարողությունների զարգացումը**

*Գործողություն՝ Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում:*

ՀՀ արդարադատության ակադեմիայի 2021թ.-ի ուսուցման ծրագրերում ի Nu այլնի ներառվել են նաև հետևյալ թեմաները՝ 1) «ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիր»՝ Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան, Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները և այլն: 2) «ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստման ուսուցման ծրագիր»՝ Կոռուպցիոն դեպքերի քննությունը, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար, Կիբեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկությունները, Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Երեխայի նկատմամբ

<sup>23</sup> Հասանելի է այստեղ՝ [https://www.justiceacademy.am/assets/attachments/hatuk\\_qnnch\\_qnnich.pdf](https://www.justiceacademy.am/assets/attachments/hatuk_qnnch_qnnich.pdf)

բռնության բնութագիրը և բնության առանձնահատկությունները, Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում և այլն:<sup>24</sup>

## Իրավապահ համակարգի բարեփոխումներ՝ քրեական և պարեկային ոստիկանություն, սահմանապահ ծառայություն

### • Ներքին գործերի նախարարությունը

Գործողությունը՝ Ներքին գործերի նախարարության ստեղծում: Պարեկային ոստիկանության (Պարեկային ծառայության՝ ՊԾ) ստեղծում: Ոստիկանության ռազմականացված ստորաբաժանման ֆունկցիաներից պարեկային ծառայության ֆունկցիաների հանում: Պետական սահմանին անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների ու այլ իրերի բացթողնման ֆունկցիաների իրականացման հանրային հաշվետվողականության օրենսդրական ավելացում (ֆունկցիաները ՆԳՆ փոխանցելու կամ այլ եղանակով): ՕԿԿ կողմից քաղաքացիների անձնական տվյալների հարգման օրենսդրական երաշխիքների ստեղծում: Ոստիկանության մի շարք գործառույթների և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ապառազմականացում և փոխանցում ՆԳՆ քաղաքացիական ծառայողներին:

2020-2022թթ. ոստիկանության բարեփոխումների ծրագրով նախատեսվում էր, որ արդեն 2021թ.-ին պետք է ստեղծված լինեին ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ) որը իր մեջ կներառեր միգրացիայի ծառայությունները և Ոստիկանությանը, ինչը ենթադրում էր որ պետք է Ազգային ժողովի կողմից ընդունված լինեին ՆԳՆ ձևավորմանն ուղղված՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը<sup>25</sup>: Չնայած նրան, որ փաթեթը ներկայացվել էր և արժանացել կառավարության հավանությանը<sup>26</sup>, այնուամենայնիվ 7-րդ գումարման ԱԺ օրակարգում չէր ներառվել, իսկ 8-րդ գումարման ԱԺ-ից հետո այն կրկին վերադարձվել է վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ, ՀՀ կառավարության 18.11.2021թ. «ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման 1-ին հավելվածով ՆԳՆ ձևավորման նոր ժամկետ է սահմանվել<sup>27</sup>: Չնայած օրենսդրական փաթեթի շրջանառմանը փաստացի դեռևս չի ստեղծվել ՆԳՆ, ավելին այդ գործընթացի ավարտը սահմանվել է 2023թ.:

Համաձայն 2020-2022թթ. ոստիկանության բարեփոխումների ծրագրի պետք է պարեկային ծառայության փուլային գործարկումը ամբողջ հանրապետությամբ ավարտվեր 2022թ. առաջին կիսամյակում<sup>28</sup> իսկ Լոռի և Շիրակի մարզերում 2022թ. հունվարից: Սակայն պարեկային ծառայությունը 2021թ. հուլիսից գործարկվել է Երևան քաղաքում, իսկ Շիրակի և Լոռու մարզերում այն ենթադրաբար կգործարկվի ոչ շուտ քան 2022թ. ապրիլից: Այս պահին ընթացքում է Շիրակի և Լոռու սովորողների ուսուցման փուլը իսկ ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության

<sup>24</sup> Հասանելի է այստեղ՝ [https://www.justiceacademy.am/assets/attachments/gnnich\\_verap\\_%202021.pdf](https://www.justiceacademy.am/assets/attachments/gnnich_verap_%202021.pdf)

<sup>25</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-draft.am/projects/2980/justification>

<sup>26</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/35996/>

<sup>27</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/37300/>

<sup>28</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=141877>

միջոցառումների ծրագրի համաձայն<sup>29</sup> ժամկետը կրկին հետաձգվել է՝ ՀՀ ողջ տարածքում Պարեկային ծառայության ներդրման նոր վերջնաժամկետ է սահմանվել 2024թ.:

Պարեկային ծառայողների գործարկման տարբեր փուլերում ի հայտ են եկել մի շարք, տարբեր բնույթի խնդիրներ: Իրավական խնդիրներից էին մեքենաների հետ կապված խնդիրը: Պարեկային ծառայության ավտոմոբիլները կահավորված էին կապույտ և կարմիր առկայծող փարոսիկներով, ինչը կառավարության որոշման խախտում էր: Միայն սույն մշտադիտարկման շրջանակում ՔՀԿի կողմից խնդրի բարձրաձայնումից հետո 30.09.2021թ. փոփոխություն կատարվեց ՀՀ կառավարության 29.12.2005թ. n 2329-ն որոշման մեջ ըստ որի կարող են նաև ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայության և ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության գունագրաֆիկ երանգավորում ունեցող տրանսպորտային միջոցները կարող են կահավորվել կապույտ կամ կապույտ և կարմիր առկայծող փարոսիկներով: Նմանատիպ խնդիր էր առկա պարեկային ծառայողների թևքանշանների հարցում: Պարեկային ծառայությունը ոստիկանության միակ ստորաբաժանումն է, որի թևքանշանը որևէ իրավական ակտով սահմանված չէ՝ ի հեճուկս օրենքի պահանջների: Այս մասով, թեև ամիսների ուշացմամբ ոստիկանությունը շրջանառել է համազգեստն ու թևքանշանը սահմանող որոշման նախագիծը, սակայն այն դեռ չի ընդունվել, և ստացվում է, որ պարեկները ապօրինի համազգեստով ու թևքանշանով են ծառայություն իրականացնում: Այս ամենից զատ նաև առկա են մի շարք խնդիրներ կապված պարեկային ավտոմեքենաների տեխնիկական հագեցվածության հետ՝ ուշացվել են կապի միջոցները, արագաչափերը, մեքենաների համարների ճանաչման տեսախցիկ համակարգիչները:

Երևան քաղաքի Պարեկային ծառայողների հավաքագրումն իրականացվել է բաց մրցույթով, որի հայտարարությունը<sup>30</sup> տրվել է 06.07.2020թ. թե՛ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի, թե՛ ՀՀ ԱՆ պաշտոնական կայք էջերում<sup>31</sup> և այլ հարթակներում: Լոռու և Շիրակի մարզերի պարեկային ծառայողների հավաքագրումը նույնպես իրականացվել է բաց մրցույթով: Մրցույթի բոլոր փաստաթղթերի հաստատման, գործընթացի մշտադիտարկման ու վերջնականացման նպատակով ստեղծվել է Ընդունող հանձնաժողով, որում ներկայացված են գործադիր իշխանության, ոստիկանության, օրենսդիր մարմնի ու ՀԿ-ների ներկայացուցիչները:<sup>32</sup>

ՊԾ դիմորդների ընդունելության քննությունների, ինչպես նաև հարցազրույցների ողջ ընթացքը դիտորդական խմբերի, միջազգային կազմակերպությունների ու ՀԿ-ների համար եղել է բաց ու թափանցիկ: Չուզահեռ գործող հարցազրույցների՝ 7 հանձնաժողովներից յուրաքանչյուրում ներկայացված են եղել մեկական ներկայացուցիչներ ՀՀ ԱՆ-ից, ՀՀ ոստիկանությունից, միջազգային կազմակերպություններից, ՀԿ-ներից, ինչպես նաև մեկական հոգեբաններ:<sup>33</sup> Չնայած բաց և թափանցիկ գործընթացներին այնուամենայնիվ հանրային իրազեկման արշավները եղել են թերի, ինչի ապացույցն է իզական սեռի մասնակցության ցածր տոկոսը թե դիմորդների շրջանում և թե պարեկային ոստիկանների և սովորողների շրջանում: Թեև ի սկզբանե նախատեսված էր, որ Երևան քաղաքում պարեկների մոտ 30 տոկոսը իզական սեռի ներկայացուցիչներ պետք է լինեն, այդուհանդերձ, դիմորդների մեջ չափազանց փոքր էր իզական սեռի ներկայացուցիչների կշիռը, որի հետևանքով պարեկային ծառայողների միայն 6-7 տոկոսն են իզական սեռի ներկայացուցիչներ: Նույն խնդիրն առկա է նաև Շիրակի և Լոռվա մարզերի արդեն ընդունված սովորողների մասով, որտեղ ընդունելություն-մրցույթի համար սահմանվել էր 570 տեղ, որից՝ 258 տեղը Լոռու մարզի համար ( 77 տեղը՝ իզական սեռի դիմորդների (ծառայողների) համար), 257 տեղը Շիրակի մարզի համար (77 տեղը՝ իզական սեռի դիմորդների (ծառայողների) համար), 55 տեղը Երևան քաղաքի համար (16 տեղը՝ իզական սեռի դիմորդների (ծառայողների) համար): Սակայն արդյունքում

<sup>29</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/37300/>

<sup>30</sup> Հասանելի է այստեղ՝ [https://www.youtube.com/watch?v=3Hx5pfZD5fc&feature=youtu.be&ab\\_channel=POLICERAV\\_ostikanutyun](https://www.youtube.com/watch?v=3Hx5pfZD5fc&feature=youtu.be&ab_channel=POLICERAV_ostikanutyun)

<sup>31</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.moj.am/article/2755>

<sup>32</sup> Այդ թվում սույն համատեղ մշտադիտարկման անդամ կազմակերպությունից՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ

<sup>33</sup> Մյուս հանձնաժողովներում ՀԿ-ների ներկայացուցիչներից եղել են սույն համատեղ մշտադիտարկման անդամ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»-ը

ուսումնական փուլ են անցել Երևան քաղաքի համար 19 իգական սեռի սովորող, Շիրակի համար՝ 10 իսկ, Լոռու համար ընդամենը 8 ուսանող: Նաև որպես դրական քայլ պետք է արձանագրել, որ ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդում «Իրագել քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից ներկայացված գեկույցի արդյունքում վարչապետը որոշում կայացրեց ստեղծել ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խումբ որը պետք է քննարկի բարեփոխումների ուղղությամբ իրականացվող աշխատանքերը և որում ներգրավված են նաև ՀԿ-ներ:

## **Քրեակատարողական, քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումներ**

### **• Քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումներ**

2021թ. ընդունվել են քրեական (Քրեական դատավարության նոր օրենսգիրք) և քրեական դատավարության (Քրեական նոր օրենսգիրք) օրենսգրքերի նախագծերը: Քրեական նոր օրենսգրքով արձանագրվել է Էական առաջընթաց մի շարք հանցատեսակների, հատկապես՝ կոռուպցիոն քնույթի հանցակազմերի տարրերի հստակեցման առումով, իրավաբանական անձը նախատեսվել է որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ:

Քրեական դատավարության նոր օրենսգրքով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների և երաշխիքների տեսանկյունից արձանագրվել է առաջընթաց: Մասնավորապես, ամրագրվել է տնային կալանք խափանման միջոցը, որն Էականորեն կբարելավի քրեական քաղաքականության արդյունավետությունը, կթոթափինաև կալանավայրերի անհարկի ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև կնպաստի ազատության սահմանափակման ծայրահեղ միջոց հանդիսացող կալանք խափանման միջոցին Էական այլընտրանքի ձևավորումը: Լրացուցիչ իրավակարգավորումներ են նախատեսված բերման ենթարկելու ինստիտուտի վերաբերյալ: Մասնավորապես, այն դիտարկվել է որպես դատավարական սանկցիա և նախատեսվել են կառուցակարգեր՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը:

Միաժամանակ հարկ է նշել, որ 2021թ. ԱՆ կողմից ներկայացվել է քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ, որում քննչական ենթակայության հարցի իրավակարգավորումներն ակնհայտ հետընթաց են պարունակել հատկապես խոշտանգումների գործերով քննության քննչական ենթակայության հարցում՝ դրանք վերապահելով ԱԱԾ քննչական ղեկարտամենտին: Բացի այդ, իրավապահ նախաքննական մարմինների ծառայողների կողմից իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ կատարված հանցագործություններով գործերի քննությունը ևս վերապահվել է ԱԱԾ քննչական ստորաբաժանմանը: Առաջարկվող կարգավորումների վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների քննադատությունների արդյունքում հաջողվել է խոշտանգումների գործերով քննությունը վերապահել ՀՀ քննչական կոմիտեի քննչական ենթակայությանը: Սակայն, մյուս մասով ԱԱԾ քննչական ենթակայությունը պահպանվել է, ինչը վիճահարույց է՝ կապված ԱԱԾ կողմից տիրապետվող գործիքակազմի կիրառությամբ հնարավոր ճնշումներ գործադրելու հանգամանքի հետ:

### **• ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը**



Գործողությունը` ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության, ապա` ՀՀ ԱԺ քննարկմանը

05.05.2021թ. ԱԺ-ի կողմից ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտնելու 01.07.2022թ.: Սույն քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկման արդյունքում առաջարկները, որոնք բխել են տեղեկատվության ազատության բնագավառում իրականացված համապարփակ հետազոտությունից, ներկայացվել են իրավասու մարմիններին, սակայն տեղ չեն գտել Քրեական օրենսգրքի տեքստում (թեև հայտնվել էր, որ օրենսգրքի նախագծի վերջնական տարբերակում նշված հանցակազմերը կխմբագրվեն` հաշվի առնելով նաև Հիմնադրամի կողմից ներկայացված առաջարկությունները): Մասնավորապես, Օրենսգրքում առհասարակ բացակայում է շրջակա միջավայրի աղտոտման և դրա վտանգի վերաբերյալ տեղեկություններ թաքցնելու կամ դրանք դիտավորյալ աղավաղելու համար քրեական պատասխանատվություն սահմանող հոդվածը: Հարկ է նշել, որ նշված հոդվածը նույնիսկ ներկայում գործող քրեական օրենսգրքում ունի մի շարք թերություններ թե օբյեկտիվ կողմի, թե սուբյեկտային կազմի առումով, ինչպես նաև համաչափ պատասխանատվություն չի նախատեսում այս իրականում հանրորեն խիստ վտանգավոր արարքի համար. 1/ պատասխանատվություն չի նախատեսում մարդկանց կյանքի և առողջության համար ինքնին վտանգ չներկայացնող, սակայն շրջակա միջավայրի /այդ թվում կենսադրական և բուսական աշխարհի/ համար վտանգավոր նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելու համար. 2/ պատասխանատվություն չի նախատեսում շրջակա միջավայրին սպառնացող վտանգի մասին տեղեկություններ թաքցնելու կամ աղավաղելու համար. 3/ պատասխանատվություն չի նախատեսում տեղեկատվություն տնօրինող այն սուբյեկտների համար, ովքեր գործող քրեական օրենսդրության համաձայն չեն հանդիսանում «պաշտոնատար անձ», օրինակ, մասնավոր հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց համար, ովքեր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պարտավոր են անհապաղ հրապարակել այն տեղեկությունները, որոնց հրապարակումը կարող է կանխել շրջակա միջավայրին սպառնացող վտանգը, ինչպես նաև այն կազմակերպությունների պաշտոնատար անձանց համար, որոնց գործունեությունը կարող է անմիջական կապ ունենալ բնական ռեսուրսների շահագործման, ինչպես նաև առավել վտանգի այնպիսի օբյեկտների շահագործման հետ, որոնց շահագործումը կամ շահագործման կանոնների խախտումը կարող է պարունակել շրջակա միջավայրի աղտոտման ռիսկ: Ներկայիս կարգավորումն արդեն իսկ խնդրահարույց է, իսկ հոդվածի վերացումը Օրենսգրքով, անկախ գործնականում դրա կիրառման դեպքերի քանակից կամ նման դեպքերի բացակայությունից առավել խնդրահարույց է:

▪ **ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը**

Գործողությունը` Մշակել և ԱԺ ներկայացնել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ:

30.06.2021թ. ԱԺ-ի կողմից ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտնելու 01.07.2022թ.: Այնուամենայնիվ, նոր օրենսգրքով սահմանվել են քննչական ենթակայությանն առնչվող խիստ խնդրահարույց կարգավորումներ, որոնք հակասել են 2019թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությանը: Այսպես, ռազմավարությամբ նախատեսվում էր պահպանել հատուկ քննչական ծառայությունը` որպես խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դեպքերի, ինչպես նաև ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց` իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակոչությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների (բացառությամբ կոռուպցիոն հանցագործությունների) նախաքննություն իրականացնող մարմին: Նույն ռազմավարությամբ նախատեսված է լուծարել Ազգային անվտանգության ծառայության քննչական մարմնի հաստիքները և գործիքակազմը համամասնորեն փոխանցել Հատուկ քննչական ծառայությանը, Քննչական կոմիտեին և Հակակոռուպցիոն կոմիտեին:



Մինչդեռ, 24.03.2021թ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 5-րդ հոդվածով ՀԲԾ-ն, որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների և պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի հետ կապված հանցագործությունների, այդ թվում նաև՝ խոշտանգումների, քննություն իրականացնող անկախ մարմին դադարել է գոյություն ունենալ, իսկ խոշտանգման գործերի քննության քննչական ենթակայությունը վերապահվել է ազգային անվտանգության ծառայությանը: Նույն կարգավորումը սահմանվել է նաև 30.06.2021թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով: Նշված փոփոխությունների առնչությամբ քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ<sup>34</sup>՝ արձանագրելով, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից խոշտանգման գործերով նախաքննության իրականացումը չի համապատասխանում խոշտանգման արդյունավետ քննության համար ընդունված միջազգային չափանիշներին: Այս կառույցի գործառնությունը հետախուզությունն ու հակահետախուզությունն է, նաև վերջիններիս հետ առնչվող պետական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը, այն չի ապահովում ՀՀ միջազգային պարտավորությունների հիման վրա խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դեպքերի քննության արդյունավետությունը դրա անկախության և անաչառության երաշխիքների բացակայության հիմքով:

Ուստի, առաջարկվել է խոշտանգման գործերով քննչական ենթակայությունը վերապահել ՀՀ քննչական կոմիտեին: Մասնավորապես, առաջարկվել է խոշտանգումների գործերով քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով Քննչական կոմիտեի կենտրոնական ապարատում ձևավորել առանձնացված ստորաբաժանում, ինչպես նաև համապատասխան դատավարական դեկավարում իրականացնող ստորաբաժանում ստեղծել նաև ՀՀ գլխավոր դատախազությունում: Միաժամանակ, Քննչական կոմիտեի ծառայողների կողմից ենթադրյալ հանցագործությունների քննության նպատակով Գլխավոր դատախազի որոշմամբ տվյալ գործերի քննության ենթակայությունը պետք է փոխանցվել այլ նախաքննության մարմնին: Չուգահեռաբար, կառավարությունն ու օրենսդիրը պետք է անպայման անդրադառնան քննչական կոմիտեի ինստիտուցիոնալ անկախության երաշխիքների ամրապնդմանն ու ԱԺին հաշվետու լինելու խնդրին առաջիկայում սպասվող սահմանադրական փոփոխությունների համատեքստում: Նշված հայտարարությանը հաջորդել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նաև՝ Նախագիծ) մշակումը և հանրային քննարկման ներկայացումը՝ ՀՀ ԱՆ կողմից:

Նշված նախագծով, մասնավորապես, առաջարկվել է խոշտանգման վերաբերյալ քրեական գործերով նախաքննության իրականացումը ինչպես գործող քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ 01.07.2022թ. ուժի մեջ մտնող նոր քրեական դատավարության օրենսգրքով վերապահել ՀՀ քննչական կոմիտեի քննիչներին՝ ըստ այդմ խմբագրելով քննչական ենթակայությանը վերաբերող կարգավորումները, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կատարված հանցագործությունների (այդ թվում՝ խոշտանգման) վերաբերյալ քրեական գործերով նախաքննության իրականացումը վերապահել ՀՀ ազգային անվտանգության մարմիններին՝ ապահովելու քննության օբյեկտիվությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 154.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործություններով քրեական գործերի նախաքննության իրականացումը վերապահել ՀՀ քննչական կոմիտեին: Դրական գնահատելով նախագծով առաջարկվող փոփոխությունները՝ կապված 1- ին և 3-րդ կետերում նշված գործերով քննչական ենթակայության փոփոխության հետ, այնուամենայնիվ արձանագրում ենք, որ

<sup>34</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.osf.am/2021/10/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%A3%D6%80%D5%A1%D5%B6%D6%81%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%A7%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A5/?lang=am>

քննչական ենթակայության փոփոխության անհրաժեշտություն առկա է նաև գործերի ավելի լայն շրջանակի հետ կապված: Այս կապակցությամբ ՔՀԿ-ների հետ համատեղ հանդես է եկել հայտարարությամբ, որով խնդրահարույց է գնահատվել ազգային անվտանգության մարմինների՝ մինչդատական վարույթ իրականացնելու իրավասության առկայությունն առհասարակ՝ խնդրի արդիականությունը շեշտելով հատկապես բարձրաստիճան պաշտոնատար անձանց և պետական ծառայություն իրականացնող անձանց հանցագործությունների վերաբերյալ քննություն իրականացնելու իրավասության առումով<sup>35</sup>: Նշված խնդիրները քննարկվել են նաև իրավասու պետական մարմինների հետ, սակայն բարձրացված հարցերով արդյունք չի արձանագրվել: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվել է նախագիծը լրամշակել՝ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելու իրավասությունը գործող Քրեական դատավարության օրենսգրքով վերապահելով ՀՀ քննչական կոմիտեի քննիչներին: Միաժամանակ առաջարկվել է Քննչական կոմիտեի ծառայողների՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով քննությունը վերապահել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչներին: Առաջարկվել է նաև ձեռնամուխ լինել գործող քննչական մարմինների համակարգի բարեփոխմանը՝ բացառելով գործադիր իշխանության ենթակայության ներքո գտնվող մարմինների, այդ թվում՝ ՀՀ ԱԿԾ-ի և ՊԵԿ-ի ստորաբաժանումների՝ մինչդատական վարույթ իրականացնելու իրավասությունը և 2022թ. ուժի մեջ մտնող Քրեական դատավարության օրենսգրքով դրանց ենթակայությանը հանձնված գործերով մինչդատական քննությունը պատվիրակելով այլ քննչական մարմինների:

Քրեական դատավարության օրենսգրքին առնչվող այլ առաջարկների հետ կապված արձանագրենք, որ սույն մշտադիտարկման արդյունում ՔՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկներից երեքը ընդունվել են և տեղ են գտել Քրեական դատավարության նոր օրենսգրքի տեքստում: Մասնավորապես, առաջարկվել էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կարգավորել երկու գործը մեկ վարույթում միացնելու հնարավորությունը այն դեպքում երբ դրանք քննվում են նույն ատյանի դատարանում/դատարաններում, սակայն տարբեր դատավորների վարույթներում:<sup>36</sup> Ըստ այդմ, Օրենսգրքով նախատեսվել է, որ համապատասխան դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող միացման ենթակա գործերը դատավորներից մեկի դիմումի հիման վրա դատարանի նախագահի որոշմամբ կարող են միավորվել մեկ վարույթում:

Մեկ այլ առաջարկ պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ մինչդատական ակտի վիճարկման վարույթի իրականացումը չի նախատեսում այդ վարույթի իրականացման առավելագույն և սեղմ որևէ ժամկետ: Առաջարկվել է նշված վարույթը իրականացնել սեղմ ժամկետներում, քանի որ այն դեպքերի մեծամասնությունում կապված է անձանց և հատկապես դատավարության մասնավոր մասնակիցների իրավունքների, այդ թվում՝ հիմնական իրավունքների իրացման սահմանափակումների կամ նույնչափ հրատապ միջամտություն պահանջող այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք են օրինակ քրեական հետապնդում իրականացնելուց ենթադրաբար ապօրինի հրաժարվելը կամ քրեական հետապնդման դադարեցումը: Ըստ այդմ, Քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է մինչդատական ակտի վիճարկման վարույթի իրականացման առավելագույն ժամկետ՝ մեկ ամիս:

Ամենաեական առաջարկը կապված է եղել վարութային գործողությունների ամրագրումը տեսաձայնագրառման կամ ձայնագրառման /եթե իրականացվում է արտագնա/ միջոցով իրականացնելու հետ, որն արտացոլվել է Քրեական դատավարության նոր օրենսգրքում: Այս առաջարկը հիմնված էր այն պարզ իրողության վրա, որ այն դեպքում երբ, դիցուք հարցաքննության կամ որևէ այլ գործողության արձանագրումն իրականացվում է գրավոր /համակարգչային կամ

<sup>35</sup> Տե՛ս նաև՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16689&lang=en>

<sup>36</sup> Առաջարկվել էր նման լիազորությամբ օժտել դատարանի նախագահին՝ դատավորներից մեկի դիմումի հիման վրա:

ձեռագիր/ եղանակով դրա արդյունավետությունը թե որակական, թե ժամանակային /մի քանի անգամ/ առումով էականորեն ընկնում է: Մասնավորապես որակական առումով գործողությունների, հատկապես՝ հարցաքննության կամ առերես հարցաքննության, արդյունավետությունն ընկնում է հաշվի առնելով այն, որ հարցաքննվող կամ առերեսվող անձինք որոշակի ժամանակ են ունենում իրենց պատասխանները կառուցելու համար, ինչպես նաև չի արձանագրվում նրանց ոչ վերբալ վարքագիծը՝ ժեստերն ու միմիկան, մարմնի շարժումները և այլն, որոնք նվազ կարևորություն չունեն արդյունքում ստեղծված ապացույցի հետագայում գնահատման համար: Միևնույն ժամանակ գործողությունների տեսաձայնագրային կամ ձայնագրային ամրագրումը գործուն երաշխիք է վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների նկատմամբ ճնշում գործադրելուց զերծ մնալու առումով: Քննչական մարմնի տեղակայման վայրից դուրս կատարվող գործողությունների՝ տեսաձայնագրային կամ ձայնագրային եղանակով ամրագրման լիազորությունը հնարավորություն կընձեռի քննիչին կամ նրա հանձնարարությամբ հետաքննիչին անհետաձգելի գործողությունները, այդ թվում՝ հարցաքննությունները արդյունավետորեն կատարել օրենքով թույլատրելի ցանկացած վայրում, այդ թվում՝ հարցաքննվողի տանը, աշխատավայրում և այլն, կբարձրացնի դեպքի վայրի կամ իրեղեն ապացույցների զննման արդյունավետությունը և այլն: Այնուամենայնիվ, բացի վերոգրյալ առաջարկներից, ներկայացված են եղել մի շարք այլ առաջարկներ (տե՛ս ստորև), որոնք այդպես էլ տեղ չեն գտել 30.06.2021թ. ընդունված Քրեական դատավարության նոր օրենսգրքում: Այսպես.

1) Վարույթի հրապարակայնության անհամաչափ սահմանափակում. Վարույթի հրապարակայնության սահմանափակումը պետք է արդարացված լինի եզակի և խիստ որոշակի հիմքերով: «Արդարադատության շահ» հասկացությունը չափազանց անորոշ և լայն է այս առումով և կամայական մոտեցման լայն հնարավորություն է ստեղծում, ուստի, նշված հիմքը պետք է մասնավորեցնել և փոխարենը նախատեսել վարույթին ներգրավված անձի կամ նրա մերձավորի անվտանգության ապահովումը, որպես արդարադատության շահից բխող վարույթի հրապարակայնությունը սահմանափակելու հիմք:

2) Նախաքննական գաղտնիքից բացառությունների շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն. Առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 186 հոդվածի 3-րդ մասը լրացնել և նախատեսել, որ սահմանված արգելքները չեն տարածվում նաև այն դեպքերի վրա, երբ տվյալները հրապարակվում են նշված քրեական գործին առնչվող դատական նիստի, այդ թվում՝ դոնբաս դատական նիստի շրջանակում, օգտագործվում են նշված քրեական գործով կամ դրանից անջատված քրեական գործով միջնորդությունների, դիմումների, բողոքների և այլ դատավարական փաստաթղթերի բովանդակության մեջ, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ներպետական կամ միջազգային կառույցներին և դատական աստիճաններին ուղղված փաստաթղթերում: Նշված կարգավորման անհրաժեշտության մասին է խոսում նաև այն, որ նման կարգավորումները արդեն իսկ տեղ են գտել նաև նման դատավարական օրենսդրություն և նախաքննության կառուցակարգ ունեցող օտարերկրյա օրենսդրություններում, օրինակ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում /հոդված 161/:

3) Կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեն կալանավորված մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը: Փաստացի օրենսգիրքը նման միջնորդությամբ հանդես գալու հնարավորություն չի տալիս այն մեղադրյալին, ում նկատմամբ կալանքը կիրառվել է իր բացակայությամբ և նա փաստացի կալանքի տակ չի գտնվում: Նման կարգավորումը որևէ կերպ չարդարացված խտրականություն է դնում միևնույն դատավարական կարգավիճակում գտնվող անձանց միջև և կալանքի իրավաչափության վիճարկման միևնույն նոր հանգամանքների առկայության պայմաններում զրկում են այդ հնարավորությունից փաստացի կալանքի տակ չգտնվողին:

4) Դատական բողոքարկման ենթակա մինչդատական ակտերի շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածը, որպես դատական բողոքարկման ենթակա մինչդատական ակտեր է նախատեսում խափանման միջոց կիրառելու մասին որոշումը /1-ին մաս, 6-րդ կետ/, սակայն չի նախատեսում խափանման միջոցը վերացնելու կամ ավելի մեղմ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները, այնինչ այդ որոշումները նույն կերպ սահմանափակում են մեղադրյալի իրավունքները: Իհարկե այս որոշումների բողոքարկելիությունը հնարավոր է բխեցնել 299-րդ հոդվածի 2-րդ մասից՝ որպես բողոքարկողին իրավաչափ շահերն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորությունից ակնհայտորեն զրկող ակտեր, սակայն գործնականում դատարանների կողմից նման որոշումները բովանդակային քննության չեն առնվում հենց այն պատճառաբանությամբ, որ դրանք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չեն: Առաջարկվել է հոդվածով նախատեսել, որպես դատական բողոքարկման ենթակա ակտեր նաև խափանման միջոցը վերացնելու կամ ավելի մեղմ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները, բացառությամբ կալանքը վերացնելու կամ փոխարինելու միջնորդությունների, որոնց մասով օրենսգիրքը սահմանել է առանձին դատավարական ընթացակարգ, դատական երաշխիք:

5) Խափանման միջոց կիրառելու հիմքեր. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 116-րդ հոդվածում որպես խափանման միջոց կիրառելու հիմք է նախատեսվել մեղադրյալի կողմից իր վրա օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելը: Հարկ է նշել, որ նման լայն ձևակերպումը խնդրահարույց է՝ հայեցողական մեկնաբանման և կիրառման ռիսկերի տեսանկյունից, բացի այդ, դրանից բխում է, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կարող է կիրառվել ընդհուպ բժշկական հետազոտություն անցնելուց կամ լուսանկարվելուց հրաժարվելու համար, քանի որ նման պարտականություններ նրա վրա դրված են օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչն ուղղակի ոչ իրավաչափ է:

5) Հարցաքննվող անձին անմիջականորեն հարցեր տալու հնարավորության ապահովման անհրաժեշտություն. Մեղադրյալի օրինական ներկայացուցիչը օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն օժտված է նրա հարցաքննությանը և նրա մասնակցությամբ կատարվող գործողություններին մասնակցելու իրավունքով /այդ թվում առերեսմանը/, ավելին՝ նույն հոդվածի կարգավորման համաձայն՝ օրինական ներկայացուցիչն ունի նաև մեղադրյալի բոլոր՝ անձից ոչ անբաժանելի իրավունքներն ու պարտականությունները, ինչի տակ տրամաբանական է հասկանալ նաև առերեսման ժամանակ առերեսվողին հարցեր ուղղելու իրավունքը: Սակայն ոչ առաջին, ոչ երկրորդ կարգավորումը գործնականում չեն ապահովի այդ իրավունքի լիարժեք իրացումը, և այս մտավախությունը գալիս է նրանից, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը ևս նախատեսում է նմանօրինակ կարգավորումներ, մասնավորապես՝ պաշտպանի դեպքում՝ առերես հարցաքննությանը մասնակցելու իրավունքը, տուժողի ներկայացուցչի դեպքում՝ տուժողի բոլոր ոչ անբաժանելի իրավունքներից օգտվելու իրավունքը, սակայն գործնականում նրանց չի տրվում անմիջականորեն առերեսվողներին հարցեր տալու հնարավորությունը: Բացի դրանից կարևոր է նաև օրինական ներկայացուցչի կողմից հենց մեղադրյալին հարցեր տալու իրավունքի երաշխավորումը: Քննարկվող կարգավորումը նախատեսելու օգտին է խոսում նաև այն, որ ի տարբերություն մեղադրյալի օրինական ներկայացուցչի՝ մեղադրյալի պաշտպանի, տուժողի ներկայացուցչի և նույնիսկ վկայի փաստաբանի՝ վերջիններիս հարցաքննությունների ժամանակ հարցեր տալու, ինչպես նաև առերեսումների ժամանակ՝ առերեսվողներին հարցեր տալու իրավունքը սահմանված է հատուկ և հստակ դրույթներով:

6) Դատական նիստի ընթացքի տեսագրման, տեսաձայնագրման կամ լուսանկարահանման կարգավորումներ. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) Դատական նիստի ընթացքի տեսագրումը, տեսաձայնագրումը, լուսանկարումը կամ հեռարձակումը թույլատրում է դատարանը՝ մեղադրյալի համաձայնությամբ: Մեղադրյալի համաձայնության դեպքում դատական նիստի ընթացքի տեսագրումը, տեսաձայնագրումը,

լուսանկարումը կամ հեռարձակումը կողմերի կարծիքը լսելուց հետո դատարանի որոշմամբ կարող է արգելվել, եթե դա է պահանջում արդարադատության շահը: Գտնում ենք, որ դատական նիստի ընթացքի տեսագրման, տեսաձայնագրման կամ լուսանկարահանման հնարավորության անվերապահ պայմանավորումը առաջին հերթին մեղադրյալի համաձայնությամբ՝ անկախ գործի հանգամանքներից և ուշադրության արժանի այլ շահերից, խնդրահարույց է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջների տեսանկյունից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընթացող քրեական դատավարությունների վերաբերյալ բազմիցս արձանագրել է, որ այն դեպքերում, երբ հոդվածը հրապարակվում է օրաթերթում, մասնավոր կյանքի իրավունքի պաշտպանությունը պետք է հավասարակշռվի Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության իրավունքի հետ<sup>37</sup>: Ինչ վերաբերում է լուսանկարի օգտագործմանը, ապա Դատարանը շեշտել է, որ երբ ընթացող քրեական դատաքննության համատեքստում հրապարակված լուսանկարը չունի որևէ տեղեկատվական արժեք, անհրաժեշտ են համոզիչ պատճառներ մեղադրյալի մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտությունը արդարացնելու համար<sup>38</sup> : Լուսանկարի հրապարակման համատեքստում անհրաժեշտ է գնահատել հետևյալ հանգամանքները. դիմողի կարգավիճակը, լրատվամիջոցի կարգավիճակը, հոդվածի բնույթը և առարկան<sup>39</sup>: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ դատարանին՝ վերոգրյալ դրույթով դատական նիստի ընթացքի տեսագրումը, տեսաձայնագրումը կամ լուսանկարահանումը թույլատրելու լիազորությունից զրկելը /պայմանավորելով այն բացառապես մեղադրյալի համաձայնության առկայությամբ/ չի կարող ՄԻԵԿ 10-րդ հոդվածի տեսանկյունից դիտարվել որպես արտահայտվելու ազատության իրավունքի համաչափ սահմանափակում:

7) Անհրաժեշտ իրավակարգավորումների սահմանում՝ առանց հատուկ սարքերի կիրառման փաստաբաններին, ինչպես նաև իրենց իրերը զննելու հնարավորությունը բացառելու նպատակով: Այս առաջարկը վերաբերում է, մասնավորապես, փաստաբանների կողմից մասնագիտական պարտականությունների կատարման նպատակով դատարան, վարույթ իրականացնող այլ մարմին կամ ձեռքակալված անձանց պահման վայր և քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս զննություն իրականացնելու գործընթացին:

▪ **21 (քսանմեկ) տարին չլրացած անձանց գնահ ազատագրվումը**

ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագիծը ընդունվել է 2021 թ. մայսի 5-ին: Սույն օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 01.07.2022թ., բացառությամբ 551-րդ հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված դեպքերի: Ինչպես գործող ՀՀ քրեական օրենսգրքով (հոդված 60), այնպես էլ ՀՀ քրեական նոր օրենսգրքով (հոդված 67) ցմահ ազատագրվման շեմը 18 տարեկանն է: Սակայն, ՀՀ քրեական նոր օրենսգրքով՝ հաշվի առնելով անչափահասների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումը ապահովելու, նրանց դաստիարակելու և այլ անձանց բացասական ազդեցությունից պաշտպանելու նպատակով՝ ըստ տարիքային խմբերի սահմանվել է անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկությունները: Նախատեսվել է, որ մինչև 16 (տասնվեց) տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չեն կարող գերազանցել օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի առավելագույն և նվազագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: Տասնվեցից մինչև 18 (տասնութ) տարին լրանալը հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը կրճատվում են մեկ

<sup>37</sup> Węgrzynowski and Smolczewski v. Poland, no. 33846/07, § 56-58, 16 July 2013, with further references.

<sup>38</sup> Khuzhin and Others v. Russia, no. 13470/02, § 117, 23 October 2008.

<sup>39</sup> Verlagsgruppe News GmbH v. Austria (no. 2), no. 10520/02, § 34, 14 December 2006, and News Verlags GmbH & Co.KG v. Austria, no. 31457/96, § 58, ECHR 2000-I.

երկրորդով: Կարճաժամկետ ազատագրկումը անչափահասի նկատմամբ նշանակվում է միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը, իսկ ազատագրկումը՝ երբ ոչ մի այլ միջոց չի կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը<sup>40</sup>: Միաժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տասնութից 21 (քսանմեկ) տարեկան անձինք, պայմանավորված իրենց հասունացման, հոգեկան զարգացման աստիճանով, այլ անձանց ազդեցությանը ենթարկվելու հակումով ավելի շատ նմանություններ ունեն անչափահասների հետ՝ անկախ փաստացի տարիքից, նախատեսվել են նաև նրանց նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկություններ: Նշված առանձնահատկությունները կիրառելիս հաշվի են առնվելու նաև վերջիններիս առողջության վիճակը, կյանքի և դաստիարակության պայմանները: Բացի այդ, անչափահասը (հանցագործության պահին 14 (տասնչորս) տարին լրացած, սակայն տասնութ տարին չլրացած անձը) կամ քսանմեկ տարին չլրացած անձն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու համար մեղադրվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով: Համապատասխանաբար, մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելիս վաղեմության ժամկետները կրճատվելու են կիսով չափ, իսկ տասնութից մինչև քսանմեկ տարին լրանալը հանցանք կատարած անձանց դեպքում՝ մեկ երրորդի չափով:

*Գործողությունը՝ Կատարելագործել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման, ձեռք բերված տվյալների օգտագործման օրենսդրական հիմքերը և չափանիշները՝ միջազգային չափանիշներին համապատասխան*

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 86 -րդ հոդվածի 1 -ին մասի համաձայն՝ Քրեական վարույթում ապացույց են՝ (...)ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները: Օրենսգրքի 86 -րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված փաստաթղթերը և որևէ կրիչի վրա ամրագրված տվյալները քրեական վարույթում ապացույց չեն: ՕՀԳ մասին օրենքով նախատեսված միջոցառումների մեծ մասը նախատեսվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում որպես զաղտնի քննչական գործողություններ: Միաժամանակ այն ՕՀՄ -ները, որոնք չեն առանձնացվել Օրենսգրքում որպես զաղտնի քննչական գործողություններ, շարունակվելու են կարգավորվել ՕՀԳ մասին օրենքով, սակայն դրանց արդյունքում ստացված տվյալները քրեական վարույթում ապացույց չեն: Օրենսգրքում սահմանված կարգավորումները հնարավորություն են տալիս ՕՀԳ մասին գործող օրենքով նախատեսված միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալները՝ որպես զաղտնի քննչական գործողությունների արձանագրություններ, օգտագործել քրեադատավարական ապացուցման գործընթացում: Բացի այդ Օրենսգրքում սահմանվել են դրանց իրավաչափության առավել բարձր երաշխիքներ՝ հաշվի առնելով դրանց ապացույց լինելու հանգամանքը<sup>41</sup>:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում կատարվել են լրացումներ կապված ապօրինի ծագում ունեցող գույքի մասին տեղեկությունների և տվյալների հայտնաբերման, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձանց բարեվարքությունն ուսումնասիրելու, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին աջակցելու հետ: Օրենքում կատարված լրացումներ.

<sup>40</sup> Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11680&Reading=0>

<sup>41</sup> Հասանելի է այստեղ՝ [http://www.e-rights.am/file.php?class\\_name=company\\_document\\_file&file\\_uniq\\_id=976038ef7fd6eba6832&size\\_mode=1](http://www.e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1)

Ընդունված է 16.04.2020թ. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետով. «7.1) ապօրինի ծագում ունեցող գույքի մասին տեղեկությունների և տվյալների հայտնաբերումը, այդ գույքի բռնագանձման գործընթացին աջակցելը.»:

Ընդունված է 19.01.2021թ. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը «ուսումնասիրելու» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձանց բարեվարքությունն ուսումնասիրելու» բառերով: Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ կետով. «1.2) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հայտարարագրերի վերլուծության և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության գործընթացների շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիմումի հիման վրա ստուգել հայցվող տեղեկատվությունը՝ հանձնաժողով փոխանցելով իրենց հայտնի դարձած տվյալները.»:

Ընդունված է 24.03.2021թ. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով. «7. Հակակոռուպցիոն կոմիտեն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները.»: Օրենքի լրացումները պայմանավորված են այլ օրենքների ընդունմամբ՝ ինչպես օրինակ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը, Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը: Լրացումներն ընդունվել են 1.2 կետում նշված ամսաթվերին:

Ընդունված է 03.03.2021թ. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով. «17) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի իրավախախտումների՝ հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կամ տնտեսական գործունեության արգելված համակարգման կանխումը կամ բացահայտումը.»: Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով. «5) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից անհրաժեշտ տեղեկությունն անմիջականորեն ձեռք բերելու անհնարինության դեպքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդության հիման վրա աջակցել վերջինիս տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում՝ իրականացնելով սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողությունները, 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները և դրանց արդյունքները, այդ թվում՝ տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը տրամադրելով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին.»:

*Գործողությունը՝ Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում*

ԱՆ կողմից 12.08.2021թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «մշակվել է փաստաբանության ոլորտի բարեփոխման աշխատանքային բնույթի նոր հայեցակարգային փաստաթուղթ, որում, ի Նս փաստաբանության ոլորտի այլ բարեփոխումների, հատուկ ուշադրություն է դարձվել անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնմանը, փաստաբանների կողմից անհատույց կամավոր իրավաբանական օգնության տրամադրմանը (pro bono) խրախուսող կառուցակարգերի ներդրմանը և հանրային պաշտպանի գործունեության արդյունավետության ապահովմանը, փաստաբանների ուսուցման և որակավորման կառուցակարգերի վերափնաստավորմանը, վարքագծի կանոնների շրջանակի վերանայմանը, փաստաբանների պալատի ներքին կառավարման համակարգերի զարգացմանը: Փաստաթուղթը նախատեսվում է դնել մշակվող օրենսդրական փաթեթի հիմնավորումների հիմքում և դրա բովանդակությամբ, ըստ էության, հնարավոր կլինի ծանոթանալ նախագծի



հիմնավորումներում այն հանրային քննարկման ներկայացնելուց հետո»: ԱՆ 2020 թ. 2-րդ կիսամյակի հաշվետվության համաձայն՝ աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Նախագիծը 13.01.2022-28.01.2022 ժամանակահատվածով դրվել է հանրային քննարկման:

*Գործողությունը՝ Օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ*

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ խոշտանգում կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ հանցանքի կատարման պահից: ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագիծը ընդունվել է 2021 թ. մայիսի 5-ին: Սույն օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 01.07.2022թ.-ից, բացառությամբ 551-րդ հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված դեպքերի: Սույն *օրենսգիրքը* գործողության մեջ է դրվում «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքով:

*Գործողությունը՝ Կահավորել ՔԿ-ներում հատուկ խցեր՝ ինքնասպանության հակում ունեցող անձանց համար*

ՀՀ ԱՆ 14.09.2022թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց շրջանում ինքնասպանությունների և ինքնավնասումների դեմ պայքարի շրջանակներում ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարի՝ 10.12.2020թ. «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022թթ. ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 513-Լ որոշումը: Նշված ռազմավարության շրջանակներում արդեն իսկ մշակվել է քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման կանխարգելման և ռիսկերի գնահատման գործիքակազմը, որը թույլ կտա գնահատել ազատությունից զրկված անձի հոգեկան առողջության վիճակը քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն պես և հետագայում՝ ըստ անհրաժեշտության, բացահայտել անձանց մոտ ինքնասպանություն և ինքնավնասում կատարելու ռիսկայնության աստիճանը: 19.08-08.09.2020թթ. ժամանակահատվածով նշված հրամանը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և հարակից իրավական ակտերի նախագծերի հետ միասին դրվել է հանրային քննարկման:<sup>42</sup> e-draft հարթակի միջոցով ներկայացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից 4 առաջարկություն, որոնց վերաբերյալ եզրակացությունը չի հրապարակվել:

Սույն մշտադիտարկման անդամ կազմակերպությունը (ՀՔԱՎ) գրավոր ներկայացրած դիրքորոշմամբ դրական է գնահատել Նախագծերով նախատեսված կարգավորումները՝ քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս առաջնային բժշկական զննության, առողջության պահպանման իրավունքի հասկացության ընդլայնման, կյանքից զրկելու կամ վնաս պատճառելու միջոցների հասանելիության բացառման, ինքնավնասման համար պատժախուցը որպես կարգապահական տույժ կիրառելու պրակտիկայի վերացման մասին: Այնուամենայնիվ այս հարցերը միջազգային փաստաթղթերով սահմանված բանտային կանոններին համապատասխանեցնելու նպատակով ներկայացվել են դիտարկումներ և առաջարկություններ՝ քննարկման դրված Նախագծերի որոշ կարգավորումների վերաբերյալ:

ՀՔԱՎ-ը, ի թիվս այլնի, առաջարկել է. **նախատեսել, որ մեկուսացված դատապարտյալներն ունեն նույն իրավունքները, ինչ մյուս դատապարտյալները՝ միաժամանակ ամրագրելով, որ մենախցում գտնվող դատապարտյալներին յուրաքանչյուր օր պետք է այցելեն բժիշկ և հոգեբան, կրճատել**

<sup>42</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-draft.am/projects/2681/about>

Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի երկարաձգման 6-անգամյա հնարավորությունը՝ ժամկետի երկարաձգում **թույլատրելով առավելագույնը 3 անգամ**, որին զուգահեռ, համաձայն վերը վկայակոչած դիրքորոշման, անպայմանորեն ապահովել մեկուսացման բացասական հետևանքները մեղմող երաշխիքներ, ընդ որում՝ յուրաքանչյուր երկարաձգման դեպքում ավելի ինտենսիվորեն; ամրագրել, որ քրեակատարողական հիմնարկի պետը դիմումի կապակցությամբ **որոշումը կայացնում է անհապաղ**; սահմանել, որ անձի անվտանգությանն սպառնացող վտանգ լինելու հիմնավոր կասկածի դեպքում **ուղղիչ հիմնարկի ղեկավարությունը ձեռնարկում է միջոցներ՝** կանխելու այդ սպառնալիքները, նրանց առաջացնող պատճառները, այդ թվում և՛ սեփական նախաձեռնությամբ անձին մեկուսացնելու վերաբերյալ որոշում կայացնում<sup>43</sup>: Նախագիծը չի ընդունվել:

Ընթացիկ փուլում է գտնվում նաև օրենսդրական փոփոխությունների կատարման գործընթացը՝ երաշխավորելու ինքնավստման և ինքնասպանության հակում ունեցող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Նշված բարեփոխումների շրջանակներում, ֆինանսավորման համապատասխան միջոցների առկայության պարագայում, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կառանձնացվեն հատուկ կահավորված խցեր՝ ինքնասպանության հակում ունեցող անձանց համար: Հաշվի առնելով, որ օերնսդրական փոփոխությունները չեն ընդունվել, իսկ քրեակատարողական հիմնարկներում չեն առանձնացվել հատուկ կահավորված խցերը, գործողությունը չի կատարվել: **Հատուկ քննչական ծառայության անձնակազմը համալրել օպերատիվ աշխատակիցներով** ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից մշակվել և 01.02.2020 թ.ն ՀՀ ԱՆ է ուղարկվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Օպերատիվի ետախուզական գործունեության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով ստեղծվում է իրավական հիմք ծառայության հաստիքները օպերատիվ աշխատակիցներով համալրելու համար: Համաձայն ՀՀ ԱՆ տրամադրված տեղեկատվության՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում 2007 թ. նոյեմբերի 28-ին ընդունված «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՕ-255-Ն օրենքը, և դադարեցված է համարվում Հատուկ քննչական ծառայության գործունեությունը: «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» 24.03.2021 թ. ՀՕ-163-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հատուկ քննչական ծառայության մասին» 28.11.2007թ. ՀՕ-255-Ն օրենքն ուժը կորցրած է ճանաչվում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից: Նշվածից ստացվում է, որ ՀԲԾ գործունեությունը դադարեցվելու է, հետևաբար մարմինը օպերատիվ աշխատակիցներով համալրելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գործողությունը՝ Օժտել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնելու լիազորությամբ:

**Տե՛ս Հատուկ քննչական ծառայության անձնակազմը համալրել օպերատիվ աշխատակիցներով գործողությունը**

Գործողությունը՝ Ոստիկանության և Ազգային անվտանգության մարմիններին վերաբերող օրինագծերով վերակազմավորել դրանք որպես նախարարություններ՝ ապահովելով վերջիններիս գործունեության նկատմամբ խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողությունը:

<sup>43</sup> Տե՛ս ավելի մանրամասն այստեղ՝ [Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:](#)

Ընդունվել է մասամբ: Տե՛ս Ներքին գործերի նախարարության ստեղծում գործողությունը:

*Գործողությունը՝ Քրեականացնել դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման կոնվենցիայի սկզբունքներին համաձայն:*

Չի ընդունվել: Քրեականացված է միայն խոշտանգման հանցակազմը՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման կոնվենցիայի սկզբունքներին համաձայն:

*Գործողությունը՝ ՀՀ դատական օրենսգրքով ապահովել հանրային շահերի պաշտպանության հարցերով ՀԿ-ների դատարան դիմելու իրավունքը: Առաջարկությունը չի ընդունվել, սակայն գրանցվել են դրական քայլեր ՀԿ-ների դատարան դիմելու իրավունքի ապահովման հարցում:*

Սակայն պետք է նշել, որ «ՀԿ-ների մասին» 16.12.2016թ. ՀՕ-22-Ն օրենքը 05.05.2021թ. լրացվել է կետով, որով հնարավորություն է ընձեռնվում կազմակերպությանն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Մինչ այդ նախատեսված էր միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտը: Կազմակերպությունը ոլորտից քիտղ հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) խախտվել է հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի՝ հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, կամ խախտվել է հաշմանդամություն ունեցող անձի՝ խտրականությունից պաշտպանվելու իրավունքը, և որը, ելնելով առողջական վիճակից կամ այլ հանգամանքից, չի կարող անձամբ ներկայացնել իր իրավունքները և օրինական շահերը դատարանում.

2) կազմակերպության կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված է որպես նպատակ, և անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են.

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված ոլորտում:

*Գործողությունը՝ Կատարել փոփոխություններ դատավարական օրենսգրքերում վերացնելու համար դատավորի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանք նշանակելու լիազորությունը: (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Հոդված 314.1. Դատական սանկցիաները և դրանց կիրառման ընդհանուր կարգը)*

Գործող օրենսգրքով սանկցիաները 3-ն են՝ 1) նկատողություն. 2) դատական նիստերի դահլիճից հեռացում. 3) դատական տուգանք: Դատական տուգանքը և գործող և նոր օրենսգրքով կիրառվում է առավելագույնը 100.000 ՀՀ դրամի չափով: Քրեական դատավարության նոր օրենսգրքով՝ ավելի խիստ կարգավորումներ են նախատեսված. դատավարական սանկցիաներն են՝ ա) նկատողությունը, բ) իրավունքի իրականացման սահմանափակումը, գ) դատական նիստի դահլիճից հեռացնելը, դ) վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը, ե) դատական տուգանքը, զ) վարույթից հեռացնելը:

*Գործողությունը՝ Օրենսդրորեն ամրագրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը տրամադրելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը*

Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման օրինակը վարույթի մասնակիցներին տրամադրելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով: Սահմանվում է հստակ ժամկետներ և կարգ նշված որոշումը վարույթի մասնակիցներին տրամադրելու, ինչպես նաև դրա բողոքարկման ժամկետների և կարգի մասին ծանուցման պարտականությունը:

Այսպես, 1) Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշումն ընդունվում է մեղադրյալի բացակայությամբ հնարավոր և անհրաժեշտ բոլոր վարույթային գործողությունները կատարելուց հետո, սակայն չի սահմանափակում նախաքննության ընթացքում վարույթային այլ գործողությունների կատարումը, եթե դրա անհրաժեշտությունն առաջացել է քրեական հետապնդման ժամկետը կասեցնելուց հետո:

2) Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին միջնորդությունը վարույթի նյութերի հետ միասին քննիչն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին: Հսկող դատախազը միջնորդությունը ստանալու պահից ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում որոշում է կայացնում քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին կամ որոշմամբ մերժում է միջնորդությունը: Այդ որոշումներն անհապաղ ուղարկվում են քննիչին:

3) Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին հսկող դատախազի որոշումը ստանալուց հետո քննիչը դրա պատճեններն անհապաղ հանձնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց գրավոր պարզաբանելով որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները:

4) Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցը կարող է բողոքարկել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում: Վերադաս դատախազը բողոքը ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին:

Որոշման բողոքարկման համար օրենսդիրը հստակ ժամկետներ է սահմանել, ինչը նախկինում բացակայում էր: Որոշման բողոքարկման կարգը ու ժամկետների մասին անձին ծանուցելու պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը: ՀՀ քրեական դատավարության նոր , ինչպես և գործող օրենսգիրքը, չեն կարգավորում կասեցված վարույթով քրեական գործի նյութերի ծանոթացման կարգն ու սահմանները: Կասեցված գործի նյութերին ծանոթանալու, դրա պատճենները գործին մասնակցող անձանց տրամադրելու ՀՀ քրեական դատավարության գործող և նոր օրենքում կարգի բացակայությունը պրակտիկայում լուրջ խնդիրների առաջ է կանգնեցնում հատկապես քրեական գործերով տուժողների և իրավահաջորդների համար, այն համատեքստում, որ քրեական գործի վարույթը կասեցնելուց հետո դատավարության մասնակիցը կորցնում է հնարավորությունը այդ նյութերին ծանոթանալու, գործի հանգամանքների մասին նյութերից տեղեկություն ստանալու հնարավորությունից: Այս պարագայում գործի արդար դատաքննության իրավունքի ապահովված լինելը կասկածի տակ է դրվում, քանի որ օրինակ զինված ուժերում կյանքի իրավունքի խախտման դեպքերում քրեական գործի վարույթը կասեցնելուց հետո տուժողի իրավահաջորդը զրկվում է գործի հանգամանքների ու մահվան հանգամանքները իմանալու հնարավորությունից: Փոփոխությունը դեռևս չի ընդունվել:

*Գործողությունը՝ Կատարելագործել վարույթն իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ անձի ծանուցմանը վերաբերող օրենսդրական կարգավորումները*

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով վարույթի մասնակիցներին ծանուցման նոր կարգ ու պայմաններ են ներմուծվել, որոնք կարող են նվազագույնի հասնել ծանուցման հետևանքով իրավունքի խախտման դեպքերը: Մասնավորապես՝ առաջարկվող նախագծով ավելի մանրամասն է ներկայացվում ծանուցում իրականացնելու, ծանուցումը հասցեատիրոջը պատշաճ հանձնելու գործողությունը: Էլեկտրոնային ծանուցման համակարգի պրակտիկայում կիրառությունը նվազագույնի կհասցնի փոստային առաքման ժամկետների խախտման հիմքով ուշացումները, եթե ներդրված համակարգը կիրառվի պատասխանատվությամբ: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 150-րդ հոդվածը սահմանում ծանուցագիրը և դրա բովանդակությունը, որտեղ ի թիվս այլնի նշվում է... «Տվյալ կարգավիճակով առաջին անգամ հրավիրվող անձին հասցեագրված ծանուցագրին կցվում է հրավիրվողի կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների ցանկը»:

Գործող քրեական դատավարությունը 2021թ. հուլիսի 19-ին լրացվել է նոր 24.1 գլխով, որով նախատեսվում է նաև ծանուցման էլեկտրոնային եղանակը: Գործող օրենսգրքի 174.4 հոդվածը

սահմանում է «...#6. Էլեկտրոնային ծանուցագիրն ուղարկվում է ծանուցվող անձին այն դեպքում, երբ նա իր գրավոր համաձայնությունն է տվել այդ եղանակով ծանուցագիր ստանալու վերաբերյալ: Էլեկտրոնային ծանուցագիրն ուղարկվում է ծանուցվող անձի գրավոր հայտնած Էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարով: #7. Էլեկտրոնային ծանուցագիր ուղարկելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը քրեական գործին է կցում Էլեկտրոնային հաղորդագրությունը, ինչպես նաև ստանալու մասին հավաստումը: #8. Էլեկտրոնային ծանուցման դեպքում ծանուցվողը մեկ օրվա ընթացքում պարտավոր է հաստատել ծանուցման փաստը: Եթե ծանուցման ստացումը չի հաստատվում այն ուղարկելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, ապա ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ հանձնվում է ծանուցվողին՝ ստացականով»:

*Գործողությունը՝ Օրենսդրորեն ամրապնդել իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց քրեաիրավական պաշտպանության երաշխիքները*

Հատկապես վերջին իրադարձությունների համատեքստում առավել շատ թիրախավորվեցին իրավապաշտպան ՀԿ-ները և դրանց աշխատակիցները: Պատերազմի ավարտից անմիջապես հետո ակտիվացան կազմակերպությունները թիրախավորած անձինք ու խմբերը և համատարած հարձակումներ սկսեցին հատկապես իրավապաշտպան գործունեություն իրականացնող կազմակերպությունների վրա: Հարձակումները դրսևորվեցին գույքային վնասից մինչև հոգեբանական ճնշումների, վիրավորանք գրպարտության տեսքով: Արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից խոցելի խմբում են գտնվում հատկապես իրավապաշտպան կազմակերպությունները, քանի որ ներկայացվող հանցագործության մասին հողորդումները պատշաճ քննության առարկա չեն դառնում, չեն բացահայտվում, արդեն իսկ հայտնի անձինք և քրեական պատասխանատվության չեն ենթարկվում: Վարույթն իրականացնող մարմինները՝ հատկապես ոստիկանությունը նյութերի նախապատրաստման ընթացքում խնամքով քողարկում է հասարակությունում շատ հայտնի անձին, ավելին այն անձին ով տարիներ շարունակ աշխատել է ոստիկանության համակարգում, նշելով որ չի կարողացել հայտնաբերել և հարցաքննել:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում 03.10.2020թ. հարուցվել է քրեական գործ՝ ազգային թշնամանք հրահրելու հիմքով՝ եզրի իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ: Ամիսներ շարունակ քննված քրեական գործով 29.07.2020թ. քրեական գործի նախաքննությունն ավարտել է, և վարույթն իրականացրած ԱԱԾ նշել է, որ քննության ընթացքում ձեռք է բերվել «ապացույցների բավարար համակցություն», որ Սաշիկ Սուլթանյանը եզրիների և հայերի միջև ազգային թշնամանք հարուցելուն ուղղված գործողություններ է կատարել: Մինչդեռ, քրեական գործն իրավապաշտպանի նկատմամբ հերթական թիրախավորումն է իրավունքի պաշտպանությամբ զբաղվող անձի նկատմամբ:<sup>44</sup> Այսպիսով ՀՀ ԱԺ ներկայացված ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը որևէ երաշխիք իրավապաշտպանների և իրենց գործունեության վերաբերյալ չի նախատեսում:

*Գործողությունը՝ Ընդլայնել Հանրային պաշտպանի գրասենյակի մանդատը՝ հնարավորություն ընձեռելով հանրային պաշտպաններին գործեր ներկայացնել նաև ՀՀ սահմանադրական և Մարդու իրավունքների եվրոպական դատարաններ*

Գործող Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն. #2. Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝ ա) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում. բ) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով: #3. Սույն հոդվածի իմաստով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է

<sup>44</sup> Հասանելի է այստեղ՝ <https://hcav.am/sashik-sultanyan-30-07-21/>



քրեական գործով մինչդատական վարույթում, ՀՀ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանում:

*Գործողությունը՝ ՀՀ դատական օրենսգրքով ապահովել հանրային շահերի պաշտպանության հարցերով ՀԿ-ների դատարան դիմելու իրավունքը*

ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշման համաձայն՝ Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում ՀԿ-ները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, նախ՝ միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, երկրորդ՝ ՀԿ-ներն ունեն կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջումների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, երրորդ՝ ՀԿ-ների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն և վերահսկողություն սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում: Հաշվի առնելով ՀԿ-ների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) ՀԿ-ների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ ՀԿ-ների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն ՀԿ-ներին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, *դատարանում*, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությունը սահմանում է այդ հնարավորության դրսևորման տարբեր ձևեր: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի չորրորդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանում պաշտպանում է մեղադրանքը: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, առավել ևս՝ առաջին մասի 8-րդ կետերում նշված սուբյեկտները, իրավական նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելիս հանդես են գալիս ոչ միայն հանրային շահերի, այլ նաև տվյալ իրավանորմի կիրառման արդյունքում տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանը՝

«Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»: Մինչույն ժամանակ, մի շարք դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը սահմանել է նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու իրավունքը՝ որպես շահագրգիռ անձի իրավունք: Մասնավորապես, վերջինս վերաբերում է օրինական ներկայացուցչին:

Համաձայն գործող վարչական դատավարության օրենսգրքի. ՀԿ-ները վարչական դատարան կարող են դիմել նաև սույն օրենսգրքի 29.3-րդ գլխով նախատեսված դեպքերում: Օրենքով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարող են դիմել նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող ՀԿ-ները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ՝ քարոզչության կողմը՝ սույն օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով:

Գլուխ 29.3, հոդված 216.6. 1. ՀԿ-ն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է հետևյալ ոլորտներում. ա) շրջակա միջավայրի պահպանություն, բ) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն: 2. ՀԿ-ը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝ ա) հայցադիմումը բխում է կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը. բ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրությամբ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և գ) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված ոլորտում: Համաձայն գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի. Դատարանում խմբային հայցով ներկայացուցիչ կարող է լինել տվյալ խմբային հայցի ցանկացած հայցվոր, իրավապաշտպան ՀԿ կամ փաստաբան, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն: Քննարկվող հարցը ուղղակիորեն փոխկապակցված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և այլ իրավական ակտերի հետ: ՀՀ դատական օրենսգրքում այս մասով որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել: Սույն գործողության վերաբերյալ առկա չէ տեղեկատվություն:

*Գործողությունը՝ Օժտել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնելու լիազորությամբ:*

Հատուկ քննչական ծառայության մասին ՀՀ օրենքը ուժը կորցրած է ճանաչվել 24.03.2021թ.: Օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնելու լիազորություն է տրամադրվել Հակակոռուպցիոն կոմիտեին: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի. Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

*Գործողությունը՝ Բոլոր փակ և կիսափակ հաստատություններում ապահովել քաղաքացիական դիտորդական խմբերի կողմից անարգել մշտադիտարկում իրականացնելու հնարավորությունը*

Գործում են նաև ՀՀ ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբը, որի անդամը ՁԳՎ կարող է այցելել ցանկացած օր (այդ թվում՝



ոչ աշխատանքային օր), ՁՊՎ-ում պահվող անձի հետ, որպես կանոն, կարող է հանդիպել մեկուսի և Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ՝ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդների խումբը, որի անդամները կարող են կատարել առանց նախապես զգուշացման այցելել Կազմակերպության ցանկացած տարածք, առանձնազրույց ունենալ Պացիենտների հետ, ծանոթանալ Պացիենտների բժշկական օգնության և սպասարկմանն առնչվող փաստաթղթերի բովանդակությանը, այդ թվում Պացիենտների բժշկական փաստաթղթերին՝ Պացիենտի գրավոր իրազեկված համաձայնության դեպքում և այլն:

## Վարչական արդարադատության և վարչական վարույթի բարեփոխումներ

- **ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը**

*Գործողությունը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով Վճռաբեկ դատարանի վարչական պալատ*

e-draft.am կայքում դեռևս 27.03.2019թ. հանրային քննարկման են տեղադրվել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը:<sup>45</sup> Նախագծերը քննարկման են դրված եղել 27.03.2019-11.04.2019թթ: Դրանց քննարկման գործընթացը մասնակցային կարող ենք համարել այնքանով, որ օգտատերերը հնարավորություն են ունեցել թողնել առաջարկություններ: Սակայն ամփոփաթեթբում նշումներ չկան առաջարկի ընդունման կամ մերժման առնչությամբ: Լրամշակված նախագիծը 17.01.2022թ. ընդգրկվել է ԱԺԻ ութերորդ գումարման 3-րդ նստաշրջանի օրակարգ:<sup>46</sup> Հարկ է նշել, որ լրամշակված նախագծում e-draft.am կայքում տեղադրված նախագծին համեմատ՝ կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք գնահատում ենք դրական: Այսպես՝ Նախագծի համաձայն՝ Վճռաբեկ դատարանում գործելու են՝ 1) քրեական պալատը՝ 8 դատավորի թվակազմով, 2) քաղաքացիական պալատը՝ 7 դատավորի թվակազմով, 3) վարչական պալատը՝ 5 դատավորի թվակազմով: Միևնույն ժամանակ նախագծի անցումային դրույթներում սահմանվում էր, որ

- ա) օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատում պաշտոնավարում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի այն դատավորներն, ովքեր ունեն միայն քաղաքացիական մասնագիտացման դատավորի փորձառություն, օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Վճռաբեկ դատարանի վարչական պալատում պաշտոնավարում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի այն դատավորներն, ովքեր ունեն վարչական կամ տնտեսական դատարանում դատավորի փորձառություն,
- բ) օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահը պաշտոնավարում է որպես Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ:

<sup>45</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-draft.am/projects/1590/about>

<sup>46</sup> Հասանելի է այստեղ՝ [http://www.parliament.am/draft\\_history.php?id=12955](http://www.parliament.am/draft_history.php?id=12955)

Այս առումով լրանակված նախագծում վերացվել է այն դրույթն ըստ որի՝ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահը պաշտոնավարում է որպես Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ: Դրա փոխարեն սահմանվում է, որ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարում են նաև համապատասխան պալատի վերացման դեպքում, իսկ Քաղաքացիական եւ Վարչական պալատների ձեւավորումից հետո ԲԴԽՂ Օրենքի 134-րդ հոդվածով սահմանված կարգով լուծում է պալատների նախագահների նշանակման համար առաջարկություն ներկայացնելու հարցը:

Աժ ներկայացված նախագծով հստակեցվել է նաև պալատների դատավորների ընտրության կարգը, այսպես՝ Նախագծի 11-րդ հոդվածի համաձայն՝

«...2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկշաբաթյա ժամկետում ԲԴԽՂ սահմանում է Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջիադասման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտության եւ իրականացման կարգի մանրամասները՝ հաշվի առնելով սույն հոդվածի կարգավորումները:

3. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի այն դատավորները, որոնք մինչեւ Վճռաբեկ դատարանում պաշտոնավարելը պաշտոնավարել են վարչական կամ վարչական վերաքննիչ դատարաններում, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում Բարձրագույն դատական խորհրդին գրավոր համաձայնություն ներկայացնելու դեպքում շարունակում են պաշտոնավարել Վճռաբեկ դատարանի վարչական պալատում (այսուհետ՝ Վարչական պալատ) այդ պալատի ձեւավորումից հետո: Գրավոր համաձայնություն ներկայացրած դատավորները մինչեւ Վարչական պալատի ձեւավորումը պաշտոնավարում են որպես Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի դատավորներ:

4. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի այն դատավորները, որոնք չեն համապատասխանում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներին եւ այն դատավորները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներին, սակայն Վարչական պալատում պաշտոնավարելու վերաբերյալ գրավոր համաձայնություն չեն ներկայացնում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի (այսուհետ՝ Քաղաքացիական պալատ) եւ Վարչական պալատի ձեւավորումից հետո շարունակում են պաշտոնավարել որպես Քաղաքացիական պալատի դատավորներ մինչեւ իրենց լիազորությունների համար սահմանված ժամկետի ավարտը՝ անկախ սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված թվակազմից:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցը լուծելու պահից եռօրյա ժամկետում ԲԴԽՂ Օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հրապարակում է հայտարարություն Վճռաբեկ դատարանում ձեւավորվող Վարչական պալատում համալրման ենթակա տեղերի քանակի եւ համալրման կարգի վերաբերյալ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հայտարարությունը հրապարակելու պահից երկշաբաթյա ժամկետում Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձինք կարող են դիմում ներկայացնել ԲԴԽ՝ Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջիադասման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու նպատակով: Սույն մասով նախատեսված դիմումը ներկայացնելիս Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված անձինք դիմումին կցում են Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 13.1-ին կետով սահմանված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը: Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց ներկայացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ տասնհինգ օրվա ընթացքում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

7. ԲԴԽ Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված խորհրդատվական եզրակացությունը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում կազմում եւ հաստատում է

Վարչական պալատում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման նախապատրաստումը, ցուցակի կազմումը, հաստատումը եւ թեկնածուներին առաջարկության ներկայացումն իրականացվում է Օրենքի 132-րդ եւ 133-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

9. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը համարվում է վերացված, իսկ Քաղաքացիական եւ Վարչական պալատները համարվում են ձեւավորված Վարչական պալատում դատավորների բոլոր թափուր պաշտոնները համալրելու պահից եւ եթե Քաղաքացիական պալատում պաշտոնավարելու է առնվազն 5 դատավոր: Առաջխաղացման կարգով Քաղաքացիական կամ Վարչական պալատի դատավոր նշանակված դատավորները մինչեւ պալատների ձեւավորումը շարունակում են պաշտոնավարել իրենց գործող պաշտոնում եւ համապատասխանաբար Քաղաքացիական կամ Վարչական պալատի դատավորի պաշտոնը ստանձնում են պալատների ձեւավորման պահից:...»: Հիմնական խնդիրը, որը նշել են նաև որոշ պատգամավորներ նախագծի քննարկումների ժամանակ, մնում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական ու վարչական պալատի նախագահի լիազորությունների դադարեցումը սահմանված ժամկետից շուտ:<sup>47</sup>

*Գործողությունը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ*

Հաշվի առնելով նաև, որ Քրեակատարողական մարմինը չի համարվում դասական իմաստով վարչական մարմին, կալանավորված և դատապարտված անձանց նկատմամբ չի իրականացնում և չունի արտաքին ներգործություն, վերջինիս իրականացրած գործունեությունը վարչարարություն համարելը և Վարչական դատարանում քննության ենթակա դարձնելը խնդրահարույց է, իսկ հարցը ենթակա է շուտափույթ կարգավորման:

**• ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում գրավոր և պարզեցված նոր վարույթները**

*Գործողությունը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով գրավոր և պարզեց ված նոր վարույթներ*

Արդեն 25.11.2020-10.12.2020թթ. հրապարակային քննարկման է դրվել «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,<sup>48</sup> որով.

- Օրենսգրքում ներդրվում են գրավոր ընթացակարգեր, - նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածով, 123.5-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ և 124.7-րդ հոդվածներով / *վարչական իրավախախտումներ տրանսպորտում, ճանապարհային տնտեսության եվ կապի բնագավառում*/ նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության պարտադիր գրավոր ընթացակարգ, եթե առկա չեն գրավոր ընթացակարգը բացառող հիմքեր,
- այլ վարչական գործերի քննության դեպքում ևս նախատեսվել է գրավոր ընթացակարգ կիրառելու վարչական դատարանի հայեցողություն,

<sup>47</sup> Հասանելի է հետևյալ հղումներով՝

[http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=15897&year=2022&month=1&day=17;](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=15897&year=2022&month=1&day=17;)  
<https://www.aravot.am/2022/01/17/1241830/>

<sup>48</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.e-draft.am/en/projects/2877>

- Վարչական վերաքննիչ դատարանին տրված է հնարավորություն Վարչական դատարանում գրավոր ընթացակարգով քննության արդյունքում կայացված դատական ակտերի վերանայումն իրականացնել գրավոր ընթացակարգով: Նախագիծը 13.04.2021թ. ընդգրկվել է ԱԺ հերթական նստաշրջանի օրակարգ:<sup>49</sup> 05.05.2021թ.-ին ամբողջությամբ ընդունվել է նախագիծը և 18.05.2021թ. ստորագրվել:

▪ **«Գետական տուրքի մասին» օրենքը**

*Գործողությունը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում «Գետական տուրքի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով,ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականություն*

Նախագծով առաջարկվող փոփոխություններով, ի Nu այնի, պետական տուրքի վճարման արտոնություններից այլևս չեն օգտվելու վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշումները վիճարկող հայցվորները: Վերացել է նաև արտոնությունը, որով ֆիզիկական անձինք և ոչ առևտրային կազմակերպություններն ազատվում էին պետական տուրք վճարելու պարտականությունից դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով: Նախագիծը 02.03.2021թ. ընդգրկվել է ԱԺ նստաշրջանի օրակարգ,<sup>50</sup> 28.04.2021թ. ստորագրվել է: Գտնում ենք, որ վարչական մարմինների դեմ ներկայացվող հայցերով, դատական ակտերի դեմ բողոքարկումներով նախագծով առաջարկվող դրույքաչափերի սահմանմամբ խախտվում է դատարանի մատչելիության իրավունքը այն աստիճան, որ խախտվում է այս իրավունքի բուն էությունը: Կարծիքը նշված նախագծով կատարված փոփոխությունների վերաբերյալ ներկայացված է սույն մշտադիտարկումն իրականացնող անդամ կազմակերպության կայքում:<sup>51</sup>

▪ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հատուկ վարույթների տեսակները**

*Գործողությունը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները:*

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով հատուկ կարգ է նախատեսվում ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա հարկման նպատակով գաղտնի տեղեկություն ստանալու համար հարկային մարմնի դիմումի քննության համար, ընդգրկվել է ԱԺ նստաշրջանի օրակարգ:<sup>52</sup> 30.11.2021թ. համաձայն «ԱԺ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը մշտական հանձնաժողովի նիստում հետաձգվել է մինչև երկամսյա ժամկետով: ԱԺ նաև ընդունել և 18.05.2021թ. ստորագրել է<sup>53</sup> «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է, որ ՀՀ վարչական դատարան կարող է դիմել ՀՀ պետական

<sup>49</sup> Հասանելի է այստեղ՝ [http://www.parliament.am/draft\\_history.php?id=12281&lang=arm](http://www.parliament.am/draft_history.php?id=12281&lang=arm)

<sup>50</sup> Հասանելի է այստեղ՝ [http://www.parliament.am/draft\\_history.php?id=12176&lang=arm](http://www.parliament.am/draft_history.php?id=12176&lang=arm)

<sup>51</sup> Հասանելի է այստեղ՝ <https://prwb.am/wp-content/uploads/2020/12/%D4%B4%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-%D6%87-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%A1%D6%80%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80-2.pdf>

<sup>52</sup> Հասանելի է այստեղ՝ [http://www.parliament.am/draft\\_history.php?id=12834&lang=arm](http://www.parliament.am/draft_history.php?id=12834&lang=arm)

<sup>53</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152751>

սահմանն ապօրինի հատած կամ ՀՀ տարածքում քրեական հետապնդման կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որը ապօրինի հատել է ՀՀ պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում ՀՀ տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը՝ ապաստանի հայցի կամ փախստականի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած անբարենպաստ վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու պահանջով: Որպես հատուկ վարույթ՝ սահմանվել են այս խումբ գործերով Վարչական դատարանում և Վերաքննիչ վարչական դատարանում գործի քննության և բողոքարկման կարգը և ժամկետները:

- **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը**

Գործողությունը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակը:

Վերադատության կարգով բողոք ներկայացնելու պարտադիր կարգ այժմ գործում է միայն ճանապարհային Ոստիկանության /ավելացվել է նաև Պարեկային ծառայությունը/ կողմից կայացված ակտերի դեմ հայցադիմում ներկայացնելիս՝ որպես նախապայման, ընդ որում՝ նորմը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով: Մասնավորապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287 հոդվածում դեռևս 23.10.19 ՀՕ-206-Ն օրենքով կատարված փոփոխության համաձայն՝ Օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո:

## Ընտրական օրենսդրության բարեփոխումներ

- **ՀՀ ընտրական օրենսգրքը**

Գործողությունը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում և ներկայացում ԱԺ:

Սույն համատեղ մշտադիտարկման թիմից չորս կազմակերպություններ (ԻԲՄ, ՀԲԱՎ, ԹԻՀԿ, ԻԶՊ Հիմնադրամ) ներգրավված են ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբում, որի աշխատանքները մեկնարկել են 2020թ. մայիսի վերջից: ՀՀ ԱԺ Ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբի շրջանակներում մշակված մի շարք առաջարկներ, որոնք ուղղված են եղել Ընտրական օրենսդրության բարեփոխմանը, տեղ են գտել 01.04.2021թ. և 07.05.2021թ. ընդունված՝ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների մասին օրենքներում: Մասնավորապես, 01.04.2021թ. ընդունված փաթեթով առաջարկվել են լուծումներ, որոնցով երաշխավորվել է համամասնական ընտրակարգի բարեփոխումը և վերացվել է ԱԺ ընտրությունների համար նաև տարածքային ընտրական ցուցակների միջոցով ընտրությունների անցկացման հնարավորությունը: Բացի այդ, սահմանվել են իրավական հիմքեր ՀՀ ամբողջ տարածքում կամ առանձին

տարածքներում կարանտին սահմանվելու դեպքում ընտրությունները հատուկ կանոններին համապատասխան անցկացնելու համար՝ երաշխավորելով անխոչընդոտ ընտրական գործընթացը: 07.05.2021թ. ընդունված փաթեթով բավականին լուրջ հիմքեր են ստեղծվել ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպման, քաղաքացիների ազատ կամարտահայտման նկատմամբ ապօրինի ազդեցության գործադրման կանխարգելման, նախընտրական քարոզարշավի ընթացքում հավասար հնարավորությունների ապահովման, նախընտրական քարոզարշավի ֆինանսական թափանցիկության ապահովման, պակաս ներկայացված սեռի՝ առավել բարձր ներկայացվածության երաշխիքների ապահովման, հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովման, ընտրությունների արդյունքների վրա՝ ֆինանսական միջոցների ազդեցության նվազման, քարոզարշավի ծախսերի թափանցիկության ապահովման համար: Այնուամենայնիվ, մի շարք խնդիրներ դեռևս մնում են չլուծված կամ ոչ բավարար կարգավորված և վերաբերում են՝ ընտրական հանձնաժողովների, ընտրողների գրանցման համակարգի, դիտորդական կազմակերպությունների և ՉԼՄ-ների հավատարմագրման, նախընտրական քարոզարշավի, վարչական ռեսուրսի օգտագործման, նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման, երրորդ անձանց ներգրավման կարգավորման, վերահսկիչ-վերստուգիչ գործառույթների իրականացման, ընտրությունների արդյունքների ամփոփման և բողոքարկման հետ կապված բնագավառներին: Առավել մանրամասն արդիական խնդիրները և առաջարկները ներկայացված են ՀՀ ԱԺԻ 20.06.2021թ. արտահերթ ընտրությունների «Ականատես» դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցում («Առաջարկություններ» բաժնում):<sup>54</sup>

Ընտրական օրենսգրքի աշխատանքային խումբը տևական ժամանակ աշխատանքեր իրականացրեց փորձելով այդ գործընթացում ներգրավել բոլոր կողմերին և կարծիքները, չնայած համավարակի և պատերազմական իրավիճակով պայմանավորված աշխատքները ունենում էին ընդհատումներ, իրականացվում էին հաճախ առցանց տարբերակով բայց այնուամենայնիվ ընտրական օրենսգրքի և հարակից օրենքներում փոփոխությունները վերջնական տեսքի բերվեցին արդեն 2021թ. սկզբին և ուղարկվեցին Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողով, Վենետիկի բավականին դրական գնահատեց այդ փոփոխությունները և կարծիքը հրապարակեց ապրիլ ամսին: Սակայն պետք է փաստել, որ փոփոխություններից, երկարատես ու ներառական աշխատանքներից, Վենետիկի դրական կարծիքից հետո, այն ենթարկվեց փոփոխությունների իշխող խմբակցության կողմից և փոփոխված տարբերը ներկայացվեց խորհրդարան: Խորհրդարանը ձայների մեծամասնությամբ այն ընդունեց:

Աշխատանքային խումբն աշխատանքներն իրականացրել է բաց, մասնակցայնության ապահովմամբ, սոցիալական ցանցերում՝ (Facebook) ստեղծվել<sup>55</sup> է էջ՝ հանրության հետ փոխադարձ ավելի արդյունավետ կապի նպատակով: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների առաջարկություններն ըստ գլուխների և թեմաների դրվել է հանրային քննարկման օնլայն հարթակների միջոցով: Հանրային քննարկումների հայտարարություն<sup>56</sup> է տարածվել նաև Ազգային ժողովի կայքով: «Իրազեկ քաղաքացիների միավորման» կողմից կազմակերպվել է առանձին հանրային քննարկում ընտրական բարեփոխումների<sup>57</sup> մասին: Այնուամենայնիվ, չնայած ընտրական օրենսգրքի բարեփոխումների գործընթացը որպես զուտ գործընթաց կարելի է համարել ներառական սակայն բովանդակային մասը՝ ոչ ամբողջովին, հաշվի առնելով ԱԺ-ի կողմից ընդունված վերջնական տարբերակը, դրանում կատարված փոփոխությունները:

Նշենք, որ ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվել է մինչև 2023թ. լուծել ընտրական օրենսդրության կիրառման ընթացքում վերհանված խնդիրները:<sup>58</sup>

<sup>54</sup> Հասանելի է այստեղ՝ [https://res.elections.am/images/doc/report\\_akanates20.06.21.pdf](https://res.elections.am/images/doc/report_akanates20.06.21.pdf)

<sup>55</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.facebook.com/ElRefGroup>

<sup>56</sup> Հասանելի է այստեղ՝ [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=13227&year=2020&month=08&day=06&lang=arm&fbclid=IwAR3nu2QsG6heum8U-4Bw-n7VGf6qSjs1wSjrhGcwxPoPTZBsLPdW0nGSWAA](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13227&year=2020&month=08&day=06&lang=arm&fbclid=IwAR3nu2QsG6heum8U-4Bw-n7VGf6qSjs1wSjrhGcwxPoPTZBsLPdW0nGSWAA)

<sup>57</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.facebook.com/events/1546668788864899/>

<sup>58</sup> Հասանելի է այստեղ՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2021/11/1902\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/11/1902_1.pdf)



2021թ. փետրվարին օրենսգրքի փոփոխությունների նախագիծը ուղարկվել է Վենետիկի հանձնաժողովին մեկնաբանության համար: 2021թ. մարտին նախագիծը դրվել է շրջանառության մեջ: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունումը սակայն մասնատվել է արտահերթ խորհրդարանական ընտրությունների նշանակման հանգամանքով: Այսպիսով, Արտահերթ ընտրությունների անցկացման վերաբերյալ խորհրդարանական ուժերի միջև համաձայնության վերաբերյալ ՀՀ Վարչապետի հայտարարությունից հետո կասկածի տակ դրվեց փոփոխությունների ընդունումը՝ այն հիմնավորմամբ, որ միջազգային չափանիշների առումով կարևորվում էր օրենսդրության կանխատեսելիությունը և ընտրական օրենսդրությունը չպետք է եսկան փոփոխությունների ենթարկվեր ընտրություններից առաջ մեկ տարվա ընթացքում:

Հարկ է նշել սակայն, որ նախատեսվող փոփոխությունների և մասնավորապես պարզ համամասնական ընտրակարգի անցման վերաբերյալ տեղի էին ունեցել երկարատև ու բազմաշահագրգիռ քննարկումներ, բացի այդ, այս փոփոխությունները պարզեցնում էին ընտրակարգը և համապատասխանում հիմնական քաղաքական դերակատարների կամ նախկինում հայտնաձև մոտեցումներին, կամ հրապարակավ վայելում իրենց աջակցությունը: Ուղղակիորեն դեմ էր արտահայտվում փոփոխություններին միայն Լուսավոր Հայաստան Կուսակցությունը՝ առաջարկելով համամասնական և ղեկավարական ընտրակարգերի խառնուրդ ու պնդելով նման սեղմ ժամկետներում փոփոխությունների անթույլատրելիությունը:

Քաղաքացիական հասարակության բազմաՆ կազմակերպություններ տարածեցին հայտարարություններ՝ արտահերթ ընտրություններից առաջ Օրենսգրքի փոփոխությունների ընդունման անհրաժեշտության մասին՝ հատկապես կարևորելով առանց տարածքային ցուցակների պարզ համամասնական ընտրակարգի ընդունումը, վարչական ռեսուրսի չարաշահման արգելքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ և Քրեական օրենսգրքերում փոփոխությունների կատարումը: Հաշվի առնելով առաջնահերթությունը և նվազագույն դիմադրության ճանապարհը ընտրելով ԱԺԻ իշխող «Իմ քայլը» խմբակցությունը առաջնահերթ ընդունեց օրենսգրքի փոփոխությունները միայն համամասնական ընտրակարգի մասով: Օրենսգրքի փոփոխությունների առանձնացված նախագիծը 24-ժամյա ռեժիմով ընդունվեց 01.04.2021թ.՝ 82 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ. փոփոխություններին կողմ քվեարկեցին միայն իշխող «Իմ քայլը» խմբակցությունը և նախագծի համահեղինակ երկու անկախ պատգամավորները: Ողջունելով այս փոփոխության ընդունումը՝ ԲՀԿ կոչ արեցին ընդունել ազատ և արդար ընտրությունները երաշխավորող մյուս փոփոխությունները ևս:

17.04.2021թ. ՀՀ նախագահը, հղում կատարելով ընտրություններից առաջ կատարվող փոփոխությունների մեկ տարի ժամկետի պահպանման սկզբունքին, հայտարարեց, որ չի ստորագրի փոփոխությունները, միաժամանակ՝ չի դիմի Սահմանադրական դատարան՝ փոփոխությունների սահմանադրականությունը որոշելու համար: Արդյունքում, Սահմանադրությամբ սահմանված 21-օրյա ժամկետը լրանալուց հետո ԱԺԻ նախագահը 22.04.2021թ. ստորագրեց փոփոխությունների մասին օրենքը: Նույն օրը Վենետիկի հանձնաժողովը հրապարակեց օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ իր կարծիքը, որը բացառիկ դրական էր, այդ թվում՝ ժամկետների չպահպանման բացառություններն ընդունելու առումով: Հանձնաժողովը հղում էր կատարում ընտրակարգի և քվեարկության պարզեցմանը: 27.04.2021թ. ԱԺԻ ընդունեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ և Քրեական օրենսգրքերում փոփոխությունները, որոնք ՀՀ նախագահը ստորագրեց մայիսի 6-ին: Այս դրույթներն ուժի մեջ մտան հրապարակման հաջորդ օրը՝ կիրառելի դառնալով ԱԺԻ արտահերթ ընտրությունների ժամանակ:

07.05.2021թ. ընդունվեց Ընտրական օրենսգրքի փոփոխությունների մեծ փաթեթը, որի դրույթները կիրառելի չէին արտահերթ ընտրությունների ժամանակ և ուժի մեջ են մտնում աստիճանաբար: Դրանց հիմնական մասը կիրառվեց 2021թ. տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների ժամանակ, որոնք բազմաՆ համայնքներում առաջին անգամ անցկացվեցին համամասնական ընտրակարգով: Հարկ է

նշել սակայն, որ ընդունված փաթեթը չի ներառում Վենետիկի հանձնաժողովի դրական գնահատականին արժանացած մի շարք դրույթներ և չի պատասխանում որոշ մտահոգությունների, որոնք բարձրացվել են նաև փոփոխությունների գործընթացին մասնակցած կազմակերպությունների կողմից: 2021թ. տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների արդյունքում Օրենսգրքում ի հայտ եկան մի շարք այլ թերություններ և բացեր, որոնց վերացման ուղղությամբ աշխատանքներն ըստ ամենայնի կմեկնարկեն 2022թ.:

Սույն համատեղ մշտադիտարկման շրջանակներում ԲՀԿ-ների ակնկալվող գործողությունների և քննարկումների ընթացքում կարևորված դրույթների՝ օրենսգրքի փոփոխությունների ներառման առումով առկա է հետևյալ պատկերը: Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարության դիմումին կից ներկայացնելու համար պատասխանատվությունը վերացվեց անփութությամբ սուտ հայտարարություն տալու դեպքում քրեական պատասխանատվությունը: Իսկ դիտավորությամբ նույն հանցանքը կատարելու դեպքում ազատագրկման սահմանված առավելագույն ժամկետը նվազեցվեց մինչև երկու տարի՝ նախորդ 5-ի փոխարեն: Պաշտոնի կամ վարչական ռեսուրսի չարաշահմամբ քարոզչության արգելքը խստացվել է, ներառել է վարչական ռեսուրսի ձևակերպում, սակայն թե արտահերթ խորհրդարանական, թե ՏԻՄ ընտրությունների քարոզարշավի դիտարկման փորձը ցույց են տալիս, որ խստացված օրենսդրությունը այնպիսի բացեր է պարունակում, որոնք թույլ են տալիս բավականին անկաշկանդ կերպով օգտագործել վարչական ռեսուրսը, միաժամանակ ֆորմալ առումով հետևելով օրենքի տառին: Ըստ էության օրենսգրքի փոփոխությունների աշխատանքային խմբում ներառված ԲՀԿ-ները համակարծիք են, անհրաժեշտ է վերադառնալ քննարկումներին ուսումնասիրված առավել խիստ, վարչական ռեսուրսի օգտագործումը բացառող տարբերակների քննարկմանը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման սկզբունքը, անկախությունը, պատրաստվածությունն ու հակակշիռների առկայությունն ապահովող մեխանիզմների քննարկումը, ինչպես և նախկինում հանգել էր մասնագիտական/պետական հանձնաժողովների և կուսակցական կանձնաժողովների դիլեմայի անլուծելիությանը, ինչի պատճառով հարցը կրկին թողնվեց ապագային, իսկ կարգավորումները մնացին անփոփոխ: Երկարաժամկետ դիտորդության արդյունքների վերլուծությունը սակայն ցույց է տալիս, որ խնդրի անլուծելիությունը որոշ չափով օբյեկտիվ է՝ կադրային ռեսուրսի անբավարար լինելու պատճառով նույնիսկ ֆորմալ առումով խմբակցությունների կողմից նշանակվող անդամների ընտրությունը հաճախ կատարվում է ոչ թե խմբակցությունների կողմից, այլ Տարածքային ընտրական հանձնաժողովների միջոցով: Միաժամանակ, հանձնաժողովի անդամներ ներկայացնող խմբակցությունները, ենթադրում էին այս կամ այն հանձնաժողովում մրցակիցների ազդեցությամբ պայմանավորված ընտրակեղծիքների հավանականությունը և դրանով պայմանավորում հանձնաժողովում իրենց ներկայացուցչին ունենալու հնարավորությունը:

Նախընտրական հիմնադրամից իրականացվող ծախսերի առավելագույն շեմը բարձրացվեց, դառնալով նվազագույն աշխատավարձի 800-պատիկ, 500-պատիկի փոխարեն՝ միաժամանակ դրան հավասարվեց ընտրություններին մասնակցող կուսակցության/դաշինքի կողմից հիմնադրամ նվիրատվություն կատարելու շեմը, նախկինում առավելագույնը 100-պատիկի փոխարեն: Նման լիբերալացմանը զուգընթաց, հաշվի առնելով տեղական դիտորդական կազմակերպությունների դիրքորոշումը, ընդլայնվել է հիմնադրամից իրականացվող ծախսերի ցուցակը՝ ներառելով քարոզչական նյութերի տարածման ծախսերը, ինչպես նաև շտաբների վարձակալության ծախսերը, իսկ 01.01.2022թ.-ից հիմնադրամից իրականացվող ծախսերը իրականացվում են միայն անկանխիկ եղանակով: Միաժամանակ օրենսդրությունը շարունակում թույլ է տալ չհայտարարագրել շտաբների աշխատակիցների վարձատրությունը, վստահված անձանց 10000 ՀՀ դրամը չզերազանցող փոխհատուցումները և մինչև 7 տեղանի տրանսպորտային միջոցների օգտագործման համար, ինչն իր ծավալների մեջ հնարավորություն է ստեղծում էական չափերի չհայտարարագրվող ծախսեր

իրականացնելու, ինչպես նաև օգտագործելու վարչական ռեսուրսն՝ առանց որևէ տեղ արձանագրելու պահանջի:

Ընտրական հանձնաժողովների կողմից կայացվող՝ ընտրությունների արդյունքների անփոփոխ, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում արձանագրված խախտումների վերաբերյալ և սեփական նախաձեռնությամբ խախտման փաստերը որպես հաղորդում քննելու մասին որոշումների հիմնավորված և պատճառաբանված լինելու պարտադիր պայման սահմանելու պահանջը չի ձևակերպվել օրենսգրքում, փոխարենը սահմանվել է ՏՀՀ-ի կողմից ԿԸՀ-ին տեղեկություններ տրամադրելու պարտավորությունը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Տարածքային ընտրական հանձնաժողովները առանձին քննում և որոշում են կայացնում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում բոլոր արձանագրված գնահատականների վերաբերյալ, իսկ սեփական նախաձեռնությամբ տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկը դարձել է տարածված ողջունելի պրակտիկա՝ մասնավորապես ՏԻՄ ընտրությունների փուլում: Քննարկումների փուլում դուրս են մնացել ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունեցող խախտումները բնորոշելու և ընտրությունների արդյունքների վրա դրանց հնարավոր ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ մեխանիզմների ձևակերպումները:

ԿԸՀ և ՏՀՀ կազմավորելու կարգը սահմանող հոդվածներում մասնագիտական փորձի վերաբերյալ պահանջները՝ ՔՀԿ-ների կողմից ակնկալվող մասով մնացել են անփոփոխ: Փոխարենը քննարկումների արդյունքում ընդլայնվել է ՏՀՀ անդամ դառնալու հավակնորդների շրջանակը՝ միայն պետական ոչ առևտրային կազմակերպությունների փոխարեն ընդունելով ցանկացած ոչ առևտրային կազմակերպությունում վեց տարվա աշխատանքի փորձ ունենալու տարբերակը: Սահմանվեցին նաև մրցույթի հայտարարման և ժամկետների վերաբերյալ այնպիսի կարգավորումներ, որոնք կխթանեն իրական մրցույթի անցկացումը: Մինչդեռ սույն մշտադիտարկման շրջանակներում ՔՀԿ-ների կողմից առաջարկվում էր ՏՀՀ-ների վրա դնել իրենց սպասարկվող տարածքում ՉԼՄ-ներում հրապարակվող տեղեկատվության մշտադիտարկում իրականացնելու պարտավորությունը՝ օրենսգրքի պահանջների խախտումների հայտնաբերման նպատակով, նման մեխանիզմները չեն քննարկվել աշխատանքային խմբի կողմից և որևէ կերպ չեն ձևակերպվել Ընտրական օրենսգրքում: Միևնույն ժամանակ կատարելագործվել են հեռուստա- և ռադիոհեռարձակող մեդիաների վերաբերվող կարգավորումները, ինչպես նաև մշակվել են կարգավորումներ՝ համացանցում գործող ՉԼՄ-ների համար: Թեև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը նախատեսում է նախընտրական քարոզչության խախտումների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների կողմից վարույթի իրականացում, սակայն Օրենսգիրքը չի նախատեսում ՉԼՄ քարոզչության վերահսկողություն 70000 ընտրողից քիչ ընտրողներ ունեցող համայնքներում և օրենսդրական սահմանափակումները փաստացի մնում են անտեսված:

Տեղական դիտորդական կազմակերպությունների զեկույցներում բազմիցս, որպես ընտրախախտումների վտանգ և լարվածություն ստեղծող հանգամանք հիշատակված տեղամասային կենտրոնների մոտակայքում գոյացող կուտակումները բացառելու նպատակով օրենսդրությամբ սահմանվել է ոչ միայն խմբերով, այլև մեկ անձի տևական ներկայությունը 50 մետր շառավղով տարածքում, ինչպես նաև արգելվել է մեքենաների կուտակումը: Վերջին տարիներին դիտորդական կազմակերպություններն արձանագրել են նաև քվեարկության օրը ծառայություն իրականացնող ոստիկանների առավել պրոակտիվ և պատրաստակամ գործունեությունը: Դիտորդական կազմակերպությունների անկողմանակալությունը և չեզոքությունը երաշխավորելու մեխանիզմների առումով ԸՕ փոփոխությունությունները նախատեսում են երկու դրույթ. դիտորդական կազմակերպության ղեկավար կազմում և խորհրդում տվյալ ընտրություններին թեկնածու հանդիսացող անձանց անթույլատրելիությունը և ԿԸՀ առցանց հարթակի միջոցով ընտրական գործընթացների տարբեր կողմերի՝ թեկնածուների, հանձնաժողովի անդամների, ՉԼՄ-

ներկայացուցիչների և դիտորդների առցանց գրանցման շնորհիվ միևնույն անձի կողմից տարբեր դերակատարում ունենալու բացառումը:

ԸՕ փոփոխություններով ճանաչվել է դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը՝ դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, սակայն դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը, ինչպես նաև ընտրողների, դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կողմից քվեարկության/ընտրությունների արդյունքները անմիջականորեն վիճարկելու իրավունքի սահմանումը, որը լրջորեն քննարկվել էր աշխատանքային խմբի կողմից և ներառվել էր Վենետիկի հանձնաժողով ուղարկված նախագծում, տեղ չի գտել ընդունված փոփոխությունների փաթեթներում: Նախագծով նաև առաջարկվում էր արձանագրել, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններն ապահովում են ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողությունը: Այ սահմանումը ևս դուրս թողնվեց ընդունված տարբերակից: Այս դրույթները շարունակում են մնալ դիտորդական կազմակերպությունների ջատագովության առանցքը:

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները վերանայման արդյունքում աշխատանքային խումբը հանգել է եզրակացության, որ ժամկետների փոփոխությունը կարող է խաթարել հետընտրական գործընթացները: Փոխարենը սահմանել է բողոքարկման դիմումների էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն, իսկ քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելը հնարավոր է առանց հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության օրը արձանագրությունում հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարած լինելու պարտավորության:

## Կոռուպցիայի դեմ պայքար

- **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը**

Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում կարևոր գործառնությունն ուղղություն է կանխարգելումը: Այն իրականացնելու նպատակով ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ ԱԺ կողմից ընտրվել են կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 5 անդամները, որոնք իրենց կազմից ընտրել են հանձնաժողովի նախագահ: Այնուհետև հանձնաժողովի անդամներից մեկը ներկայացրել է հրաժարականի դիմում: Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանձնաժողովի աշխատանքները գնահատելու առումով հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 10.09.2020թ. որոշմամբ սահմանվել էր հանձնաժողովի համար 40 անձից բաղկացած աշխատակազմի հնարավորություն՝ 6 մասնագիտացված վարչությունների աշխատակիցների, հանձնաժողովի նախագահի և անդամների օգնականների և այլ հաստիքներով: 2020թ. սակայն, հանձնաժողովի աշխատակազմը չէր ձևավորվել, ու թեև գործառնությունների արդյունավետ իրականացմանը, որպես խոչընդոտ, հանձնաժողովի կողմից մատնանշվում էր վերոնշյալ փաստի գոյություն:

2021թ. վերոնշյալ հաստիքներն ըստ էության համալրվել են՝ 40-ից 36-ը: Բացի այդ, ևս 15 լրացուցիչ հաստիքի հնարավորություն է ընձեռվել հանձնաժողովին, որոնք համալրելու նպատակով հայտարարվել է մրցույթ: Հանձնաժողովին գործառույթների իրականացման աշխատանքներում 2021թ. օժանդակություն է ցուցաբերել միջազգային դոնորների աջակցությամբ ներգրավված փորձագետներ:

Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկման և մեթոդական աջակցության վարչությունների կողմից 2021թ. ուսումնասիրվել է ընդհանուր առմամբ 45 դիմում և մեղիա հրապարակում անհամատեղելիության պահանջների և շահերի բախման վերաբերյալ: Արդյունքում անհամատեղելիության պահանջների վերաբերյալ տրամադրվել է 10 պաշտոնական պարզաբանում, որոնք հիմնականում վերաբերել են հանրային պաշտոնին զուգահեռ այլ վճարովի աշխատանքների կատարմանը կամ որևէ այլ հանրային կամ համայնքային պաշտոն զբաղեցնելուն: Հարուցվել է անհամատեղելիության 3 վարույթ, որոնցից մեկը մարզպետի, մեկը՝ համայնքի ղեկավարի, և մյուսը դատավորի նկատմամբ: Դատավորի նկատմամբ անհամատեղելիության պահանջների խախտման եզրակացության հիման վրա դադարեցվել են նրա լիազորությունները: Նշված վարույթների հիմքում եղել է պաշտոնատար անձանց կողմից պաշտոնին զուգահեռ քիզնես գործունեությամբ զբաղվելու հանգամանքը: 2021թ. դրությամբ դեռևս առկա չեն հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև համայնքի ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնագրքի նախագծեր:

2021թ. հանձնաժողովը մշակել է նվերների ընդունման արգելքի հետ կապված նորացված հայեցակարգ և գործողությունների ծրագիր, որն իր արտացոլումն է ստացել ՀՀ կառավարության գործողությունների ծրագրի նախագծում: Միաժամանակ հարկ է նշել, որ նվերների ընդունման արգելքով սահմանված կարգավորումները հստակեցված չեն, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում առկա բացառությունների ցանկը բավականին լայն է:

2021թ. հայտարարագրերի վերլուծության արդյունքներից ելնելով թվով 5 նյութեր ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Երկուսի դեպքում նյութերն ուղարկելու հիմք է հանդիսացել այն, որ հայտարարատուները վերջիններիս հայտարարագրերի վերլուծության արդյունքում չեն ներկայացրել պարզաբանումներ հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ: 2 դեպքում պարզվել է, որ հայտարարատուները ստացել են 3.000.000 ՀՀ դրամից ավել գումարի նվիրատվություն կանխիկ եղանակով, ինչը «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին ՀՀ օրենքներով չի համարվում օրինական եկամուտ: 1 դեպքով հայտարարագրման ենթակա տվյալը թաքցվել է: 2021թ. ընթացքում հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 103 անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել 96 խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Հարկ է նշել, որ թեև օրենսդրորեն հանձնաժողովի եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, այնուամենայնիվ հասարակական հետաքննության արդյունքում հանձնաժողովի՝ որոշ պաշտոնյաների բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների բովանդակությունը դարձել են հասանելի և միարժեք չեն ընկալվել հանրության կողմից: Խնդիրը վերաբերում է ինչպես բացասական եզրակացություններին (արդյունքում պաշտոնի են նշանակվել), այնպես էլ դրական եզրակացություններին, որոնք հանրության շրջանում ընկալելի չեն դարձել:

*Գործողություն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում: Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնմանը:*

Կուսակցությունների մասին օրենքում 2020թ. վերջին և Ընտրական Օրենսգրքում 2021թ. մայիսին կատարված փոփոխություններով ընդլայնվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

գործառույթները: 01.01.2022թ.-ից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ստանձնում է կուսակցությունների վերահսկողությունը, իսկ 2023թ. նախընտրական քարոզչության ֆինանսավորման վերահսկողությունը: Այնուամենայնիվ Հանձնաժողովը կուսակցությունների վերահսկողության գործիքների պատրաստումը մեկնարկել է 2021թ. վերջին, ինչը կասկածի տակ է դնում սահմանված ժամկետներում դրանց գործարկումը: 2021թ. աշխատանքների ամփոփման ասուլիսի<sup>59</sup> ընթացքում հանձնաժողովը ներկայացրել է, որ ստանձնելու է Կուսակցությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողության գործառույթը, այդ թվում կուսակցությունների մշտական ղեկավար մարմինների հայտարարագրերի ընդունումը և կուսակցությունների աուդիտի պատվիրակումը:

*Գործողություն՝ Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում, Պաշտոնատար անձանց հայտարարագրերի մեխանիզմի արդիականացում՝ փաստացի օգտագործվող գույքի ներառման միջոցով: Պաշտոնատար անձանց հայտարարագրերի մեխանիզմի արդիականացում՝ փաստացի օգտագործվող գույքի ներառման միջոցով:*

Ըստ ԿԿՀ տարեկան ամփոփման ընթացքում Հանձնաժողովը ներկայացրել է, որ 2021թ. ընթացքում ԿԿՀ կողմից իրականացվել են շուրջ 170 պաշտոնատար անձանց գույքային դրության ստուգումներ, այդ թվում՝ մոտ 130 դատավորների՝ նրանց և նրանց ընտանիքի անդամների ներկայացված շուրջ 2,500 հայտարարագրերի ուսումնասիրության միջոցով: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրվել են տեղեկատվության հայտարարագրման հետևյալ մեխանիզմները՝

1) հաշվետու ժամանակահատվածում կատարված և «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ծախսերը, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է 2 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, կամ օրենքով սահմանված նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է 3 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (ծախսերը հայտարարագրվում են միայն պաշտոնեական պարտականությունների դադարեցման և տարեկան հայտարարագրերում),

2) հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, սակայն նրա կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող կամ օգտագործվող գույքը,

3) այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

Մինչ շարունակվում է հայտարարագրման համակարգի արդիականացումը, ԿԿՀ կողմից 42 վարույթ է հարցվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի (Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը) տարբեր մասերով հարուցվել 42 վարչական վարույթ, որոնցից 30-ը՝ հայտարարագրերը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով, 10-ը՝ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով, իսկ 2-ը՝ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտման հիմքով: Հարկ է նշել, որ օրենսդրությունը այլևս սահմանում է պահաջ ավագանու և ԱԺԻ պատգամավորի թեկնածուների կողմից հայտարարագրերի ներկայացման համար, ինչն առավել արդիական է դարձնում դրանց լրացման վերաբերյալ պատշաճ իրազեկումը և հնարավորինս նույնական մոտեցման ընդունումը:

*Գործողություն՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում:*

<sup>59</sup> Հասանելի է այստեղ՝ <http://cpcarmenia.am/hy/news/item/2021/12/28/1/>



2021թ.ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ուսումնասիրել է 45 դիմում և մեղիա հրապարակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջի խախտման և շահերի բախման վերաբերյալ: Հանձնաժողովը նշված դեպքերից 10-ի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում է տրամադրել: 3 դեպքով վարույթ է հարուցվել: Անհամատեղելիության առաջին վարույթը վերաբերել է վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանին<sup>60</sup>, որի դեպքում անհամատեղելիության պահանջի խախտումն ապացուցված է համարվել, նրանով, որ անձը առևտրային ընկերությունում բաժնեմաս է ձեռք բերել արդեն պաշտոնատար անձ լինելով, ընկերությունը հավատարմագրային կառավարման չի հանձնել պատշաճ կարգով և ժամկետում և շարունակել է ազդեցություն ունենալ դրա գործունեության վրա: Եզրակացության հիման վրա դադարեցվել են դատավորի լիազորությունները: Երկրորդ դեպքում Արարատի մարզպետ Ռազմիկ Թևոսյանի<sup>61</sup> վերաբերյալ պաշտոնի հետ անհամատեղելի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մասով հանձնաժողովը եզրակացրել է, որ անհամատեղելիության պահանջը չի խախտվել, քանի որ մարզպետը պատշաճ ժամկետներում ներկայացրել է ՄԳԸ-ում պաշտոնից ազատման դիմում, իսկ պետական ռեգիստրում տվյալների փոփոխությունների ուշ կատարման համար չի կարող պատասխանատու համարվել:

ԿԿՀ կողմից իրականացված երրորդ վարույթը վերաբերում է միևնույն ընկերության սեփականատեր Արարատի մարզի Արալեզ համայնքի ղեկավար Մարտիկ Թևոսյանին: Նրա նկատմամբ հարուցված վարույթի արդյունքում Հանձնաժողովը եզրակացրել է, որ պաշտոնյան ընկերությունը հավատարմագրային կառավարման չի հանձնել և փաստացի զբաղվել է պաշտոնավարման հետ անհամատեղելի գործունեությամբ: Այնուամենայնիվ առկա օրենսդրական կարգավորումները հնարավորություն չեն տալիս արդյունավետ ապահովել անհամատեղելիության և շահերի բախման բացառման կանոնները: Որպես կոռուպցիայի կանխարգելման գործիք Հանձնաժողովը մշակել է նաև հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև համայնքի ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնագրքի նախագծերը, որոնք, ըստ Հանձնաժողովի հանրային քննարկման կներկայացվեն 2022թ. հունվար-փետրվար ամիսներին: Իսկ 2022թ. Հանձնաժողովը առաջին կեսին նախատեսում է մշակել միջազգային փորձին համապատասխան նախագիծ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների ընդունումը: 2021թ. ԿԿՀ-ն իրականացրել է պետական պաշտոնի հավակնող 103 անձի բարեվարքության ուսումնասիրություն: Հանձնաժողովը տվել է 96 եզրակացություն, որից 56-ը դրական, 8-ը բացասական և 32-ը դրական՝ վերապահումով: Խնդրահարույց է այն, որ երկու դատավորի թեկնածու, ում վերաբերյալ Հանձնաժողովը բացասական եզրակացություն է տվել, այնուամենայնիվ նշանակվել են համապատասխան պաշտոններում:

#### • Կոռուպցիոն հանցագործությունների քննությունը

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված էր 2021-2022թթ. ընթացքում ձևավորել կոռուպցիոն հանցագործությունների քննության միասնական նախաքննական մարմին՝ հակակոռուպցիոն կոմիտե (այսուհետև՝ կոմիտե): Այս ուղղությամբ ՀՀ ԱՆ կողմից 2020թ. մշակվել և շրջանառության մեջ էր դրվել կոմիտեի մասին ՀՀ օրենքի նախագիծը, որն արժանացել էր ՀՀ կառավարության դրական եզրակացությանը և ընդունվել ՀՀ ԱԺ կողմից: Գնահատելով կոմիտեի ձևավորումը՝ որպես կոռուպցիոն հանցագործություններ քննող միասնական մարմին, անկախության և գործառույթային արդյունավետության տեսանկյունից, կարող ենք փաստել, որ անկախության և հաշվետվողականության լիարժեք և արդյունավետ մեխանիզմներ ներդրված չեն: Մասնավորապես՝ կոմիտեի նախագահի հաշվետվողականությունը երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի առջև կրում է ձևական բնույթ՝ դրսևորվելով գործունեության վերաբերյալ ձևական հաղորդումներ

<sup>60</sup> Հասանելի է այստեղ՝ <http://cpcarmenia.am/files/legislation/478.pdf>

<sup>61</sup> Հասանելի է այստեղ՝ <http://cpcarmenia.am/files/legislation/526.pdf>

ԱՄ ներկայացնելու իրավակարգավորմամբ: Բացի այդ, համաձայն իրավակարգավորումների՝ կոմիտեի նախագահը նշանակվել է վարչապետի կողմից: Միաժամանակ կարող ենք արձանագրել, որ թեև կոմիտեի նախագահի թեկնածուի ընտրության հարցում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պարունակում են առաջատար նորմեր՝ կապված մրցութային գործընթացի վերահսկման թափանցիկ մեխանիզմների սահմանման հետ, այնուամենայնիվ, 2021թ. կոմիտեի նախագահի ընտրության մրցութային գործընթացում ակներև էին ֆորմալ դրսևորումների գերակայությունը: Մասնավորապես, մրցութային խորհրդի կազմը ամբողջությամբ չի համալրվել (թեկնածու չի առաջադրել ՄԻՊ-ը, փաստացի նաև՝ ԱԺ խորհուրդը): Բացի այդ, կոմիտեի նախագահի թեկնածուների մասնագիտական կարողությունների ստուգման, ընդհանուր գնահատման չափանիշներում բարեվարքության գնահատման բաղադրիչը սահմանվել է ցածր տոկոսով: Մրցութային խորհրդում ընդգրկված ՀԿ ներկայացուցչի կողմից բարձրագույն վերոնշյալ խնդրի մասին մրցութի ընթացքում բարձրաձայնել է նաև մրցութային խորհրդում ներգրավված միջազգային փորձագետը, մասնավորապես շեշտադրելով, որ մրցութը պետք է լինի ոչ թե զուտ մրցութի, այլ օբյեկտիվ արդյունքի արձանագրման համար: Մրցութի հրապարակայնության ապահովման տեսանկյունից ապահովվել է օրենսդրական պահանջը՝ և նախնական փուլում և քննական փուլում: Միաժամանակ հարկ է նշել, որ մրցութի արդյունքում կոմիտեի նախագահի երեք ընտրված թեկնածուներից վարչապետի կողմից նշանակված թեկնածուն նշանակման պահին զբաղեցնում էր հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ ՀՔԾ) ղեկավարի պաշտոնը: ՀՔԾ կողմից քննվող հակակոռուպցիոն գործերը փոխանցվել են կոմիտեին: Կոմիտեի արդեն իսկ նշանակված նախագահի բարեվարքության քաղաքական բաղադրիչի մասով հանրային ընկալումներում վիճարկվում էր վերջինիս քաղաքական կախվածության հարցը՝ հիմնականում շեշտադրում կատարելով 2019թ. հրապարակված գաղտնալսմանը վերջինիս և ՀՀ վարչապետի և ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) նախկին ղեկավարի հետ:

Կոմիտեի օպերատիվ ստորաբաժանման մասով՝ Հարկ է նշել, որ օրենքում առկա չեն առանձնահատուկ իրավակարգավորումներ օպերատիվ ծառայության աշխատակիցների թեկնածուների ընտրության մասով, քանի որ օրենքով առաջարկվող մրցութային հանձնաժողովի կազմով գաղտնի ծառայությունների աշխատակիցների ձևավորումն անհնարին է: Բացի այդ, քննչական ծառայության համար առաջարկվող հանձնաժողովի կազմը ևս հստակ չէ: Օրինակ 3 պետական ծառայող՝ հստակեցված չէ նրանց ներկայացվող պահանջները, կամ մեկը քաղաքացիական հասարակությունից՝ կարգավորված չէ ներկայացվող չափանիշները: Հարկ է նշել, որ կոմիտեի օպերատիվ գաղտնի ծառայությունների աշխատակիցների ընտրությունը անհրաժեշտ է կատարել բացառապես ներքին կանոնակարգերի և իրավակարգավորումների շրջանակում ձևավորված ընթացակարգերով՝ առանց արտաքին միջամտության: Կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումը համալրելու նպատակով 2021թ. դեկտեմբերին հայտարարվել է մրցութ, սակայն այդ կազմի անկախության, այլ իրավապահ մարմիններից փոխադրվող աշխատակիցների գերատեսչական անաչառության ապահովման ուղղությամբ բարձրաձայնված խնդիրները մրցութային գործընթացի շրջանակներում չեն լուծվել: Կոմիտեի քննչական ստորաբաժանում պաշտոնակատարի կարգավիճակով տեղափոխվել են ՀՔԾ քննիչները:

Կոմիտեի գործունեության երկամսյա աշխատանքի ընթացքում կոմիտեի կողմից բարձրաձայնվել է քննչական ենթակայության հետ կապված դատավարական նորմի փոփոխության անհրաժեշտությունը՝ կապված քննիչների ծանրաբեռնվածության հետ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունները պետք է քննվեն կոմիտեի կողմից: Սակայն 2021թ. դեկտեմբերին ՀՀ ԱՆ կողմից շրջանառության մեջ է դրվել դատավարական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին նախագիծ, որով նախատեսվում է հանցագործությամբ պատճառված վնասի չափով պայմանավորված 20 միլիոն ՀՀ դրամից պակաս քրեական գործերի նախաքննությունը դուրս բերել կոմիտեի քննչական ենթակայությունից: Նման մոտեցումը խիստ անընդունելի է, քանի որ կոռուպցիոն հանցագործությունների քննչական ենթակայությունը մասնագիտացված մարմնին

փոխանցելու խնդրի իրավական հիմքում դրված է քննության մեթոդիկայի առանձնահատկությունը և սկզբնապես պատճառված վնասի փոքր չափը կարող է աճել: Բացի այդ, գործի կարևորությունը և քննության առանձնահատկությունը պայմանավորված է նաև սուբյեկտով և ոչ վնասի չափով: Նախագծի վերաբերյալ հանրային կարծիքը բացասական է՝ նաև դատավարական տրամաբանության մեջ չտեղավորվելու խնդրից ելնելով: Մասնավորապես, ծանրաբեռնվածությունը առավելապես տեխնիկական լուծում ենթադրող խնդիր է, և ամենակարևորն, ինչպես արդեն նշվեց, պատճառված վնասի չափը լողացող կատեգորիա է՝ նախաքննության ընթացքով պայմանավորված: Քննիչների միջին ծանրաբեռնվածությունն, ըստ կոմիտեի հաշվարկի, կազմում է 20 քրեական գործ: Անհասկանալի է, թե ինչու նման հաշվարկ չի կատարվել կոմիտեի ձևավորման նախաձեռնության և քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածի մշակման ընթացքում: Ակնհայտ է, որ խնդիրը կարող էր լուծվել քննչական թվակազմի ավելացման միջոցով: Նման գործելաոճը բացահայտում է համակարգային լուծումների անհրաժեշտությանը իրավիճակային մոտեցումները հակադրելու քաղաքականությունը:

▪ **Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանները**

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը թեթևացնելու և կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում մասնագիտական ուղղվածությունն ապահովելու նպատակով նախատեսվել է ձևավորել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ինստիտուտը: Այդ նպատակով ՀՀ ԱՆ կողմից 2020թ. հուլիսին շրջանառության մեջ է դրվել «Դատական օրենսգրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է ԱԺ կողմից: Օրենսգրքով նախատեսվում են իրավակարգավորումներ, որոնք կարող են դրականորեն ազդել կոռուպցիոն գործեր քննող դատավորների անկախության աստիճանը բարձրացնելու և մասնագիտական պատրաստվածության աստիճանը բարձրացնելու գործում: Մասնավորապես՝ հակակոռուպցիոն դատարանների դատավորների ընտրության գործընթացում ներգրավվելու հնարավորություն է նախատեսվել նաև փորձագետների համար, այդ թվում՝ միջազգային: Գործընթացը դեռևս ընթացքի մեջ է և նախատեսվում է ավարտել 2022 թ.ն: Հակակոռուպցիոն դատարանի ենթակայության գործերի բողոքարկման նպատակով ձևավորվում է նաև վերաքննության աստիճանի դատարան: Նշված միջոցառումները, բացի գործերի քննության մասնագիտացման աստիճանի բարձրացումից, կնպաստեն նաև դատական համակարգի ծանրաբեռնվածության թուլացմանը: Այդ նպատակի իրագործումը սակայն պահանջում է նաև վիճելի հարաբերություններ ծնող օրենսդրական բացերի և հակասությունների շտկում: Հարկ է նշել, որ մինչ օրս հակակոռուպցիոն դատարանը ձևավորված չէ, ինչը որոշակիորեն խոչընդոտել է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի դատական փուլի իրացմանը:

▪ **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը**

Գործողությունը՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

16.04.2020թ. ԱԺ կողմից ընդունվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք): Դեռևս հանրային քննարկումների փուլում ներկայացվել են առաջարկներ օրենքի նախագիծը կատարելագործելու, նրանում առկա իրավական հակասությունները շտկելու վերաբերյալ, որոնք սակայն հաշվի չեն առնվել օրենքի բովանդակության մեջ: Առաջարկները վերաբերել են բռնագանձման վարույթի հարուցման հիմքերի, սահմանադրաիրավական կարգավորումներին չհակասելու հիմնախնդիրներին: Օրենքի դրույթների իրացման նպատակով 03.09.2020թ. ՀՀ գլխավոր դատախազության կազմում առանձնացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով առանձին վարչություն (այսուհետ՝ վարչություն): Վարչության դատախազների ընտրությունը կազմակերպվել է մրցույթային հիմունքներով, որոնց մասնակցության հնարավորություն է ընձեռվել նաև ՀԿ

ներկայացուցիչներին՝ առանց հարցադրումներ կատարելու հնարավորության: Մրցութային հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրառելու հնարավորությունը ևս բացակայել է: Դրական եզրակացություն ստացած 7 թեկնածուներից ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել է 5 դատախազ և գլխավոր դատախազի՝ հակակոռուպցիոն ոլորտը համակարգող տեղակալ:

2020-2021 թթ. ընթացքում վարչության կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վարույթների թվաքանակը շուրջ 300 է: Ընդ որում, վարույթների ճշգրիտ մեծամասնությունը հարուցվել է քրեական գործերով առկա տեղեկատվության հիման վրա, ինչի կիրառության վերաբերյալ օրենքում առկա իրավակարգավորումները կարող են հանգեցնել անվերջանալի իրավական վեճի: Օպերատիվ գործողությունների արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա վարույթների մասին տեղեկատվություն առկա չէ: Վարչության կողմից վարույթներով տեղեկատվության տրամադրումը հանրային հարցումներով, ըստ էության, չի իրականացվում՝ գաղտնիության պատճառաբանությամբ: **Ի հակադրություն դրա, վարչությունը հրապարակում է դեռևս նախապատրաստման փուլում գտնվող նյութերով տվյալներ, այդ թվում՝ անձնական տվյալների մասով:** Ընդ որում, հրապարակումներն իրականացվում են ընտրողական և տեղեկատվության սահմանափակման համընդհանուր իրավակարգավորումների տրամաբանության մեջ չեն տեղավորվում:

*Գործողությունը՝ Գնումների վերաբերյալ իրավական խնդիրներ, բողոքարկման համակարգ, Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրումը*

2021թ. ընթացքում «Գնումների մասին» ՀՀ օրենքում կառավարության կողմից առաջարկվել է կատարել փոփոխություններ՝ ուղղված նաև բողոքարկման արտադատական ինստիտուտի վերացմանը, ինչն արժանացել է ԱԺ փորձագիտական և վերլուծական վարչության բացասական եզրակացությանը, սակայն 2021թ. հոկտեմբերին ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ անցել է առաջին ընթերցում՝ երկրորդ ընթերցումը հետաձգելով 2022թ. գարնանային նստաշրջան: Կոռուպցիոն հնարավոր ռիսկերը չեզոքացնելու նպատակով անհրաժեշտ են որոշակի փոփոխություններ ինչպես «Գնումների մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ գնումների իրականացման գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման մեջ: Մասնավորապես.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Նշված կարգավորումը կիրառվում է, եթե՝
  - 1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,
  - 2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Օրենքի նաև վերոնշյալ կարգավորման կանոնակարգման նպատակով ընդունված ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշումը սակայն չի նախատեսում իրավակարգավորումներ գնման վերոնշյալ գործընթացի շրջանակներում բանակցությունների վարման հստակ կանոնների վերաբերյալ, ինչից ելնելով էլ տարբեր պետական կառույցներում գործընթացն իրականացվում է ըստ հայեցողության: Օրինակ՝ գնային առաջարկի մասով հայտատուի կողմից գնիջեցման չափի առաջարկի սահման նախատեսված չէ: Մինչդեռ օրինակ՝ Էլեկտրոնային մրցույթի ժամանակ համակարգը թույլատրում է գնիջեցման առաջարկ կոնկրետ չափով, ինչը բացառում է վիճելի

իրավահարաբերությունների ծագումն ու կոռուպցիոն ռիսկերը: Այսպիսով անհրաժեշտ է առանց ֆինանսական միջոցների մրցույթի անցկացման գործընթացում բանակցությունների ընթացակարգը միասնականացնել բոլոր պետական կառույցներում:

- ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման համաձայն՝ գնման հայտի մեջ թերություններ հայտնաբերելու դեպքում պատվիրատուն հայտ ներկայացնողին այն շտկելու հնարավորություն պետք է տա, սակայն պայմանագրային փուլում այն փաստացի թողնված է պատվիրատուի հայեցողությանը՝ համապատասխան իրավակարգավորման բացակայությամբ պայմանավորված: Նման մոտեցման պարագայում հայեցողության իրացումը պաշտոնատար անձի վարքագծում ձևավորում է կոռուպցիոն ռիսկեր: Անհրաժեշտ է լրացնել իրավական ակտում բացը՝ միասնականացնելով շտկման հնարավորության ընձեռման կարգավորումը նաև պայմանագրային փուլում:
- Վերոնշյալ իրավական ակտերում նախատեսված է, որ հայտի ապահովումն իրացվում է հայտի գնի կոնկրետ %-ով, ինչի պարագայում ֆինանսական կառույցի կողմից փաստացի հայտի գնի վերաբերյալ տեղեկատվության տիրապետումը դրա արտահոսքի հնարավորություն է պարունակում: Անհրաժեշտ է քննարկել և համապատասխան իրավակարգավորմամբ բացառել վերոնշյալ իրավիճակների հնարավորությունը:
- Անհրաժեշտ է կատարելագործել նաև գնումների իրականացման ծրագրային ապահովման համակարգը՝ մի շարք գործառույթներ ևս մարդկային մասնակցությամբ չիրականացնելու նպատակով, ինչպես օրինակ՝ արձանագրությունների կազմումը, ինչը ներկայումս տեղի է ունենում ձեռքով:

2020թ. սեպտեմբերի վերջից անհայտ պատճառներով չգործող Էլեկտրոնային գնումների Armeps համակարգը 2021թ. փետրվար ամսից սկսած անխափան աշխատել է: Միաժամանակ հարկ է նշել, որ համակարգի գործունեության դադարեցման պատճառների վերաբերյալ որևէ պաշտոնական մեկնաբանություն մինչ օրս առկա չէ: Սակայն ոչ պաշտոնական մակարդակում առկա տեղեկատվության համաձայն՝ համակարգի խափանումը պայմանավորված էր պատերազմական իրավիճակով:

#### • Թափանցիկ և հաշվետու կառավարումը

Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցության ապահովման արդյունավետության բարձրացման առումով 2021 թ.ն որևէ առաջընթաց չի գրանցվել: Մասնավորապես, մինչև իրավական ակտերի նախագծերի պատրաստումը հասարակության կողմից դրանց պահանջարկի կամ անհրաժեշտության ձևավորման, կարգավորման առարկայի առանձնահատկության վերաբերյալ նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների կողմից ուսումնասիրություններ և վերլուծություններ հասարակության շրջանում չեն կատարվում: E-draft համակարգը հանրության հասանելիության տեսանկյունից հետընթաց է ապրել, քանի որ ակտերի նախագծերը բաժանորդների Էլեկտրոնային հասցեներին չեն ուղարկվում: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ իրավական ակտերի նախագծերի շուրջ նախաձեռնվող քննարկումները հիմնականում կրում են ձևական բնույթ, քանի որ իշխանությունները չեն փորձում կառուցողական առաջարկների հիման վրա հիմնարար կերպով փոխել չփաստարկված քաղաքականությունը, ինչպես օրինակ՝ դատական համակարգի իրավակարգավորումների շուրջ իրականացվող փոփոխությունները, դատավարական գործընթացների, հանրային ծառայությունների մատուցման ոլորտի վերաբերյալ իրավակարգավորումները:

Հանրային կառավարման թափանցիկության առումով կառավարությունը 2021թ. ընթացքում հետընթաց քայլ է իրականացրել՝ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում առաջարկվող

փոփոխություններով ընդլայնելով տեղեկատվության այն ցանկը, որոնք կարող են գաղտնագրվել: Ընդ որում, հիմնավորումներ դրա հետ կապված գրեթե չեն բերվել: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ներկայացվել են կոնկրետ առաջարկներ իրավիճակի բարելավման վերաբերյալ (ԵԱՀԿ չափանիշների պահպանմամբ), որոնք հիմնականում չեն ընդունվել: Չլուծված խնդիր է մնում հանրային կառավարման համակարգի ձևավորման կադրային հիմնավորված քաղաքականության ոլորտը: Մասնավորապես, չի գործում ապաքաղաքական կադրային որևէ քաղաքականություն, մասնագիտական կարողությունների գնահատման (նյութական և ոչ նյութական) համակարգ: Համընդհանուր գնահատման ոչ իրավաչափ համակարգը որևէ կերպ չի նպաստել պետական համակարգում արդյունավետ կառավարման մեխանիզմներ ներդնելու գործում:

## Հավաքների ազատություն, Լրատվամիջոցների, տեղեկատվության և կարծիքի արտահայտման ազատություն

---

- **«Հավաքների ազատության մասին» օրենքը**

*Գործողությունը՝ «Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսված և միջազգային չափանիշներին համապատասխան գործելակերպերի բարելավում*

Վերոգրյալ գործողությունը նախատեսված ժամկետում չի իրականացվել: ՀՀ ԱՆ կողմից 14.12.2021թ. մեզ հասցեագրված պատասխան գրությամբ հայտնվել է, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. ԳԾ-ի 56-րդ կետով նախատեսված «Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսված և միջազգային չափանիշներին համապատասխան գործելակերպերի բարելավման շրջանակներում ԱՆը ՀՀ ոստիկանության հետ համագործակցությամբ իրականացնում է ուսումնասիրություն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերի՝ միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից, որը գտնվում է ամփոփման փուլում: Որպես այս գործողության վերջնաժամկետ սահմանված է եղել 2021 թ.-ի երկրորդ կիսամյակը:

*Գործողությունը՝ Օրենսդրորեն սահմանել հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունների կարգը և պայմանները՝ միջազգային չափանիշներին համապատասխան*

Հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունները կանոնակարգող կառավարության որոշում դեռևս չի ընդունվել, որպես այս գործողության իրականացման վերջնաժամկետ սահմանված է 2022թ.առաջին կիսամյակը:

- **Հավաքների ազատության թեմայով վերապատրաստումները**

*Գործողությունը՝ Վերապատրաստումներ իրականացնել հավաքների ազատության թեմայով միջազգային չափանիշների վերաբերյալ*

Վերոգրյալ գործողությունը իրականացվել է մասնակի: ՀՀ ոստիկանության տրամադրված տեղեկությունների համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային



ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով նախատեսված հավաքների ազատության թեմայով միջազգային չափանիշներին համապատասխան պարբերական դասընթացների իրականացման ուղղությամբ 2020թ. նախատեսվել է վերապատրաստել ոստիկանության 608 ծառայող: Սակայն ՀՀ Covid-19 համավարակի, ինչպես նաև հետագայում ռազմական դրության հայտարարման կապակցությամբ վերապատրաստման դասընթացները ժամանակավորապես դադարեցվել են: 2020թ. առաջին կիսամյակի ընթացքում վերապատրաստվել են ոստիկանության ընդհանուր թվով 81 ծառայողներ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ.գործողությունների ծրագրով 2020թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվության<sup>62</sup> համաձայն՝ 2020թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստվել են ՀՀ ոստիկանության մարզային վարչության պետերի օպերատիվ գծով տեղակալներ, տարածքային բաժնի պետեր և բաժնի պետերի օպերատիվ գծով և ծառայության գծով տեղակալներ, քրեական հետախուզության, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ու համայնքային ոստիկանության բաժանմունքների պետեր, ինչպես նաև միջին խմբի պաշտոններում նոր նշանակված ծառայողներ, քրեական հետախուզության ու անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման օպերատիվ ծառայողներ, համայնքային ոստիկանության, հասարակական կարգի ապահովման և պրոֆիլակտիկայի միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ՝ ընդհանուր թվով 117 ծառայող: 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում իրականացվել են հավաքների ազատության թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստումներ ՀՀ ոստիկանության միջին խմբի համար, վերապատրաստվել է 119 ծառայող<sup>63</sup>:

Ըստ Ոստիկանության հայտնած տվյալների՝ 2021թ. ընթացքում նախատեսված էր վերապատրաստել ոստիկանության 513 ծառայող, իսկ 2022թ. համար վերապատրաստման ենթակա ոստիկանության ծառայողների քանակը դեռևս պլանավորած չէ: 30.12.2021թ. Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2021թ. երկրորդ կիսամյակի ընթացքում վերապատրաստվել են ՀՀ ոստիկանության վարչությունների և բաժինների պետերի ծառայության գծով տեղակալներ, պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետեր և համայնքային ոստիկանության բաժանմունքի պետեր, ՀՀ ոստիկանության ՔՀ, ԱԳ և ԸԲԿ օպերատիվ ծառայողներ /ՔՀԲ պ/տ, տարածքային բաժանմունքի պ/տ, ՔՀ, ԱԳ և ԸԲԿ ՀԿԳ ավագ օպերիվագոր, ավագ օպերիվագոր, օպերիվագորներ, ՀՀ ոստիկանության գորբերի ավագ և կրտսեր սպայական կազմերի պաշտոններ զբաղեցնող զինծառայողներ, ՀՀ ոստիկանության ՀՈ, ՀԿԱ և պրոֆիլակտիկայի բաժանմունքների միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ: Ընդհանուր ծառայողների թվաքանակը՝ 56: Այս վերապատրաստումներն իրականացվել են արդեն իսկ վերանայված ծրագրերի հիման վրա:

Գործողությունը՝ Ստորագրել «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիան

09.04.2020թ. ՀՀ կառավարության N 511-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի ստորագրման առաջարկությանը: 24.06.2020թ. ՀՀ-ի անունից ստորագրվել է Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Նկատի ունենալով «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի համատեքստում տեղեկատվության մատչելիության միջազգային կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությունը ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով Հիմնադրամի կողմից ոլորտում

<sup>62</sup> Հասանելի է այստեղ՝ [http://www.e-rights.am/file.php?class\\_name=company\\_document\\_file&file\\_uniq\\_id=976038ef7fd6eba6832&size\\_mode=1](http://www.e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1)  
<sup>63</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.moj.am/storage/uploads/MIP2020.pdf>

իրականացված ուսումնասիրությունը, բացահայտված խնդիրները, առկա միջազգային չափանիշներն ու լավագույն միջազգային փորձը, առաջարկվել է իրականացնել մի շարք օրենսդրական բարեփոխումներ, որոնք վերաբերում են պետական և ծառայողական գաղտնիքի, օպերատիվ-հետախուզական գործունեության, արխիվային քննազատման, քրեական դատավարության, անձնական տվյալների պաշտպանության, գնումների, հանրային ծառայության ոլորտներին<sup>64</sup>: Ի Nu այլոց, առաջարկվել էր.

1. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և ընդլայնել տեղեկատվություն տնօրինողների ցանկը, նախատեսել տեղեկատվության ազատության սահմանափակման դեպքում հանրային շահի թեստ, սահմանել պարտականություն հայցված տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց հասանելի ձևաչափով տրամադրելու նպատակով,
2. կատարել անհրաժեշտ փոփոխություններ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում և այլ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերում՝ տեղեկատվության տրամադրման վճարովիության դեպքերը վերանայելու նպատակով (բացառությամբ ծավալով, ավելի հստակ՝ էջաքանակով կամ հատուկ ծառայությունների մատուցմամբ պայմանավորված վճարովիության դեպքերի),
3. Օրենքով սահմանել տեղեկատվության տնօրինող հանրային նշանակության կազմակերպությունների՝ տեղեկատվություն հայցողին վճարում կատարելու անհրաժեշտության մասին ծանուցելու պարտականությունը և տալ «լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն» հասկացության սահմանումը,
4. ստեղծել տեղեկատվության ազատության ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ մարմին, որը կձևավորվի ՀՀ ԱԺԻ կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով և այդ մարմնին օժտել 1/ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկատվության տրամադրումը որևէ կերպ մերժելու վերաբերյալ որոշումների, անգործության՝ բողոքի հիման վրա վերանայման, տեղեկատվության տրամադրումը պարտադրելու (մարմինը պետք է իրավասու լինի ընդունել որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման), ինչպես նաև տեղեկատվության տրամադրման կապակցությամբ ծագած վեճը լուծելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը այն տնօրինողից պահանջելու լիազորություններով, 2/ ոլորտի մշտադիտարկման, այդ թվում՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների կողմից օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական հրապարակելու պարտականության կատարման նկատմամբ վերահսկողության լիազորությամբ, 3/ տեղեկություն տնօրինող սուբյեկտներին տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության կիրառման հարցում աջակցության լիազորությամբ (ռեսուրսների խնայման նպատակով՝ հնարավոր է այս մարմնի շրջանակներում միավորել աձնական տվյալների պաշտպանության գործակալության գործառնությունները),
5. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պրոակտիվ հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը համալրել գաղտնագերծված տեղեկությունների վերաբերյալ ծանուցումներով, բյուջեի և դրա կատարողականի վերաբերյալ մատչելի և միասնական ձևաչափով ներկայացվող տեղեկատվությամբ (մանրամասնեցված կարգը կարող է սահմանվել ՀՀ կառավարության որոշմամբ) և այլ տեղեկատվությամբ.
6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվություն նախատեսող 189.7-րդ հոդվածում կատարել փոփոխություններ՝

<sup>64</sup> Հասանելի է այստեղ՝ <https://bit.ly/2PSZgjQ>

- նախատեսելով պատասխանատվություն տեղեկատվությունը թերի տրամադրելու, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրելու, տեղեկատվությունը սահմանված ժամկետում չտրամադրելու, ինչպես նաև օրենքի ուժով հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելու համար, ինչպես նաև վերանայել վարչական պատասխանատվության միջոցների նվազագույն շեմերը,
7. ՀՀ քրեական օրենսգրքի՝ շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելու կամ դրանք դիտավորյալ աղավաղելու համար պատասխանատվություն նախատեսող 282-րդ հոդվածում կատարել փոփոխություններ՝ կապված հանցագործության օբյեկտիվ կողմի, սուբյեկտների շրջանակի, ինչպես նաև նախատեսվող պատժաչափերի խստացման հետ,
  8. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ «ծառայողական գաղտնիք» հասկացությունը հստակեցնելու, ինչպես նաև գաղտնիության աստիճանի տարանջատման չափանիշները սահմանելու նպատակով,
  9. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ վերացնելով ընդլայնված գերատեսչական ցանկերի սահմանման հնարավորությունը և նախատեսելով համապատասխան տեղեկատվությունը ՀՀ կառավարության կողմից ընդունվող միասնական ցանկում ներառելու պահանջ,
  10. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով պաշտոնատար անձանց պարտականությունը յուրաքանչյուր տեղեկությունը գաղտնագրելիս՝ գաղտնագրման անհրաժեշտության հիմնավորումը, ինչպես նաև գաղտնագրման տևողությունը, գաղտնագրծման հստակ ժամանակը կամ պայմանը նշելու վերաբերյալ,
  11. վերանայել և սահմանափակել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով և համապատասխան կառավարության որոշմամբ նախատեսված գաղտնագրման ենթակա տեղեկությունների շրջանակը: Ընդլայնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված՝ պետական գաղտնիք հանդիսանալու հիմքով սահմանափակման ոչ ենթակա տեղեկությունների ցանկը, ինչպես նաև առկա ցանկում կատարել որոշակի եզրույթների հստակեցում,
  12. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանել գաղտնագրված տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտության/հիմնավորվածության՝ առնվազն 5 տարին մեկ անգամ վերանայելու պարտականությունը սահմանող դրույթ,
  13. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի ֆիզիկական անձանց և կազմակերպությունների իրավունքը տեղեկությունը գաղտնագրած պետական մարմին/պաշտոնատար անձին ներկայացնելու այն գաղտնագրծելու պատճառաբանված առաջարկություն՝ այն մերժելու դեպքում՝ բողոքարկման հնարավորություն:
  14. լրացնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը՝ նախատեսելով տեղեկություններ գաղտնագրծելիս պետական մարմնի՝ հրապարակային ծանուցման միջոցով հանրության իրազեկման պարտականություն և գաղտնագրծումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում՝ մինչև արժեքավորումն ու փաստաթղթերի ճակատագիրը լուծելը, դրանց ծանոթանալու հնարավորություն սահմանող դրույթ,
  15. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով պատասխանատվություն սահմանել տեղեկությունները ապօրինի կամ չհիմնավորված կերպով պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, անհրաժեշտից ակնհայտ ավել ժամանակահատվածով գաղտնագրելու, տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտությունն օրենքով սահմանված պարբերականությամբ չվերանայելու և տեղեկատվությունը սահմանված ժամկետում չգաղտնագրծելու համար պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ,
  16. ստեղծել տեղեկությունների գաղտնագրման, վերանայման, սահմանված կարգով գաղտնագրծման նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ պետական

- մարմին, որի գործառույթների իրականացումը կարող է դրվել տեղեկատվության ազատության ոլորտում մասնագիտացած անկախ մարմնի վրա,
17. վերանայել ՀՀ կառավարության 04.04.2019թ. N 397-Ն որոշմամբ հաստատված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը՝ դրանում ներառելով արխիվային արժեք ներկայացնող այլ փաստաթղթեր,
  18. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ կրճատելով անձնական կամ ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող նյութերի մատչելիությունը սահմանափակող ժամկետը,
  19. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում և ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել պատասխանատվություն արխիվային օրենսդրության խախտումների համար: Սահմանել պատշաճ վերահսկողական մեխանիզմներ արխիվային օրենսդրության պահպանման նկատմամբ,
  20. վերանայել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը և դրանից բխող այլ իրավակարգավորումները համապատասխանեցնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ բացառելով գնումների գործընթացում ՀՀ անվտանգության ապահովման նպատակներից չբխող ծախսերին, ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին առնչվող որևէ տեղեկության գաղտնագրումը,
  21. վերանայել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 2-րդ հավելվածը՝ այն համապատասխանեցնելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին խոսքի ազատության, այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման բնագավառում,
  22. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսել պատասխանատվություն գնումների բնագավառում հաշվետվողականության կամ թափանցիկության պահանջների խախտման համար:

Ներկայումս սույն համատեղ մշտադիտարկման անդամ կազմակերպության ԻԲՊ Հիմնադրամի՝ «Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները ՀՀում» վերտառությամբ զեկույցը<sup>65</sup> ուսումնասիրվում է ՀՀ ԱՆ պատասխանատու ստորաբաժանումների կողմից: Ըստ ՀՀ ԱՆ տրամադրած տվյալների՝ ուսումնասիրության արդյունքների մասին Հիմնադրամը կտեղեկացվի ուսումնասիրության ավարտից հետո հնարավորինս սեղմ ժամկետում:

## Առողջության պահպանման իրավունք

*Գործողությունը՝ Բարձրացնել պետության կողմից երաշխավորվող բժշկական ծառայությունների իրազեկվածության մակարդակը:*

Սույն գործողության իրականացման նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 21.11.2019թ. N 3481 – Ա հրամանով հաստատվել է այն կազմակերպությունների ցանկը, որտեղ պետության կողմից երաշխավորվող բժշկական ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով պետք է փակցվեին տեղեկատվական պաստառներ: Ցանկում ներառվել են ՀՀ առողջապահության նախարարությունը և Երևանում գործող բժշկական 15 կազմակերպություն: Առողջապահության նախարարի 27.12.2019թ. N 3963 - Ա հրամանով

<sup>65</sup> Հասանելի է այստեղ՝ <https://bit.ly/2PSZgjQ>

փոփոխություն է իրականացվել նախորդ հրամանում և ցանկում ներառվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ընդհանուր թվով 183 կազմակերպություն (ներառյալ ՀՀ առողջապահության նախարարությունը): Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ կազմակերպություններին տրամադրվել է տեղեկատվական պաստառների 1-2 փաթեթ, որոնք պատշաճ փակցվել են նշված կազմակերպություններում: Յուրաքանչյուր փաթեթ ներառել է 7 պաստառ: Պաստառները, ինչպես նաև բժշկական ծառայությունների մատուցման կարգերի, պայմանների, դրանցում կատարված փոփոխությունների, նոր պայմանների վերաբերյալ տեղեկատվություն է տեղադրվել նաև նախարարության կայքում<sup>66</sup>:

Սույն գործողության ակնկալվող արդյունքն էր՝ «պետության կողմից երաշխավորվող բժշկական ծառայությունների ցանկը փակցվել է 150 բժշկական հաստատությունում», ուստի կարող ենք նշել, որ գործողությունն այս առումով իրականացվել է: Միևնույն ժամանակ պարզ չէ, թե որքանով է այն նպաստել անկնալվող ազդեցության, այն է՝ «Նվազել են պետության կողմից երաշխավորվող բժշկական օգնության և սպասարկման իրավունքի խախտման դեպքերը» իրականացմանը, քանի որ այն ՀՀ առողջապահության նախարարության կողմից չի գնահատվել:

*Գործողությունը՝ Ավելացնել երեխաներին հոգեբուժական և վերականգնողական ծառայություններ մատուցող հաստատությունների քանակը:*

2021թ. սեպտեմբեր ամսին «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում բացվել է մանկական հոգեբուժական բաժանմունք<sup>67</sup> (մահճակալների Թիվը 12): 09.04.2021թ. հաստատվել է նաև կառավարության ծրագիր՝ Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի վերակառուցման նպատակով: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է հոգեբուժարանի տարածքում կառուցել մանկական հոգեբուժության կենտրոն՝ 2 բաժանմունքներով: 2021թ. ապրիլից ներդրվել են Սևանի և Ճամբարակի մանկական վերականգնողական կենտրոնները: Սևանի մանկական վերականգնողական կենտրոնում նախատեսվել է վերականգնողական բուժման կարիք ունեցող շուրջ 170 երեխայի սպասարկումը, իսկ Ճամբարակի վերականգնողական կենտրոնում՝ 2021թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում 20 երեխայի: ՀՀ առողջապահության նախարարի 23.03.2020թ. N 1068-Լ հրամանով հաստատվել են զարգացման խանգարումներով/հապաղումներով երեխաների վաղ հայտնաբերման, վաղ միջամտության և վերականգնողական ծառայությունների իրականացման կարգերը, մանկական արտահիվանդանոցային վերականգնողական կենտրոնի (ծառայություն, բաժանմունք) անձնակազմի աշխատանքի ընդհանուր նկարագիրը: Սույն գործողության արդյունքում ակնկալվում էր ստեղծել մանկական 1 հոգեբուժական ստացիոնար բաժանմունք և մանկական վերականգնողական ծառայություններ մատուցող 1 սպասարկման կենտրոն: Ելնելով վերը նշված տեղեկատվությունից՝ կարող ենք եզրակացնել, որ գործողությունը իրականացվել է և հոգեկան առողջության ծառայությունը երեխաների համար դարձել է ավելի մատչելի (*գործողության ակնկալվող ազդեցությունն է՝ նվազել են երեխաների հոգեկան առողջության պահպանման իրավունքի խախտման դեպքերը և բարձրացել վերականգնողական բուժօգնության մատչելիությունը*): Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ ծառայություններ ներդրվել են մի քանի համայնքում և հատկապես մարզերի մեծ մասում դրանք մատչելի չեն: Նաև հարկ է արձանագրել, որ մանկական հոգեբուժական բաժանմունքի ստեղծումը հոգեբուժական փակ տիպի հաստատություններում չի բխում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների շահերից և հակասում նրանց իրավունքների պաշտպանությանը:

<sup>66</sup> Հասանելի են այստեղ՝ [https://www.moh.am/uploads/29.11.2019%20\(6\).pdf](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(6).pdf)  
[https://www.moh.am/uploads/29.11.2019%20\(3\).pdf](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(3).pdf)  
[https://www.moh.am/uploads/29.11.2019%20\(7\).pdf](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(7).pdf)  
[https://www.moh.am/uploads/29.11.2019%20\(4\).pdf](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(4).pdf)  
[https://www.moh.am/uploads/29.11.2019%20\(5\).pdf](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(5).pdf)  
[https://www.moh.am/uploads/29.11.2019%20\(2\).pdf](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(2).pdf)  
[https://www.moh.am/uploads/29.11.2019%20\(1\).pdf](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(1).pdf)

<sup>67</sup> Հասանելի է այստեղ՝ [Հայաստանում բացվել է հոգեկան առողջության առաջին մանկական բաժանմունքը - 17.09.2021, Sputnik Արմենիա \(armeniasputnik.am\)](https://www.moh.am/uploads/29.11.2019%20(6).pdf)

*Գործողությունը՝ Իրականացնել վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման առանձնահատկությունների թեմայով*

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրած տեղեկատվության՝ հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման առանձնահատկությունները թեման ներառված է ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի «Առողջապահության կազմակերպում և կառավարում», «Բժշկա-առողջապահական գործունեության իրավական հիմքերը», «Բժշկա-սոցիալական փորձաքննության հիմունքներ» վերտառությամբ դասընթացներում: Առողջապահության ազգային ինստիտուտի դասախոսների վարած այս դասընթացների շրջանակներում «ուսումնասիրվում են առողջապահության բնագավառը կարգավորող օրենսդրությունը, պացիենտների, այդ թվում՝ խոցելի խմբերի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացողների, բուժաշխատողների իրավունքները, դրանց պաշտպանության երաշխիքները, պարտականությունները, բուժաշխատողների մասնագիտական իրավախախտումները, պատասխանատվության տեսակները և այլն»: Դասընթացները շարունակական են, իրականացվում են ըստ պահանջի<sup>68</sup>:

01.06.2021թ. դրությամբ դասընթացներին մասնակցել է առողջապահական ոլորտի 40 մասնագետ 19 բժշկական հաստատություններից, ինչպես նաև Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց, երեխաների պաշտպանության բաժնից ու ԱՆ Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնից: Դասընթացներին առավել մեծ թվով մասնակցություն ունեցել են ընտանեկան բժիշկները (10 հոգի): Մասնակցել են նաև 1-ական մաշկավեներաբան, սրտաբան, վարակաբան, ներզատաբան, համաճարակաբան, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, վարակաբան, հոգեբույժ, ուրոլոգ, նեֆրոլոգ, 2-ական մանկաբարձ-գինեկոլոգ, ճառագայթաբան, նյարդաբան, առողջապահության 4 կազմակերպիչ, 5-ական վիրաբույժ և թերապևտ: Հարկ է նկատել, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրված և Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը չի համապատասխանում:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվության համաձայն՝ «ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հանրային առողջապահության կազմակերպման և կառավարման ամբիոնի կողմից մշակվել է բուժաշխատողների համար նախատեսված կատարելագործման կրթական ծրագիր, որում ներառված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, բժշկական օգնության ու սպասարկման, դեղորայքի ձեռք բերման իրավական հիմքերն ու բժիշկ-հաշմանդամություն ունեցող անձ փոխհարաբերությունների բժշկա-իրավական ու բիոէթիկական կարգավորումները: Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացները պարտադիր ներառված են ընտանեկան բժիշկների դասընթացների մոդուլներում, որի շրջանակում վերապատրաստվել են 90 ընտանեկան բժիշկներ<sup>69</sup>: Սույն գործողության ակնկալվող արդյունքն էր՝ «վերապատրաստվել են գործող բժշկական հաստատությունների բուժաշխատողների 5%-ը», իսկ ակնկալվող ազդեցությունը՝ «նվազել են հաշմանդամություն ունեցող անձանց ոչ պատշաճ բժշկական օգնության և սպասարկման դեպքերը»: ՀՀ-ում 2019թ. ավարտին բոլոր մասնագիտությունների բժիշկների թիվը 13.958 է, միջին բժշկական անձնակազմի թիվը՝ 16.772<sup>70</sup>: Ուստի կարող ենք արձանագրել, որ

<sup>68</sup> Դասընթացների մոդուլները, օրակարգը, ինչպես նաև 2021թ. հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում դասընթացների ժամանակացույցը չեն տրամադրվել:

<sup>69</sup> Վերապատրաստումների տոկոսը 2020թ. առաջին կիսամյակում կազմել է 14.5%

<sup>70</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.armstat.am/file/doc/99520908.pdf>



01.01.2021թ. դրությամբ, համաձայն ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության, վերապատրաստվել է գործող բժշկական հաստատությունների բուժաշխատողների միայն մոտ 0.1 տոկոսը:

• **Քաղցկեղի դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացում**

*Գործողությունները՝ ա) միասնական առցանց հարթակի ստեղծում քաղցկեղով հիվանդներին աջակցելու նպատակով, բ) քաղցկեղի բուժման նոր և առավել ընդգրկուն ալգորիթմների մշակում՝ Ուռուցքաբանների եվրոպական ասոցիացիայի ուղեցույցներին համապատասխան<sup>71</sup>, գ) քաղցկեղով հիվանդ պացիենտների վարման որակի բարելավման գործիքների մշակում և ներդրում, դ) մեծահասակների և մանկական պալիատիվ ծառայությունների զարգացում*

Չնայած նրան, որ պետական մարմինների կայքերում բացակայում է որևէ տեղեկություն, պարզ է դարձել, որ բոլոր միջոցառումները դեռ գտնվում են մշակման փուլում: Դրա հետ մեկ տեղ որոշ իրագործած ծրագրեր սերտ կապ ունեն տվյալ ոլորտի հետ: ՀՀ ԱՆ 2020թ. N 1094-Լ հրամանի 72 համաձայն հաստատվել է վաղ փուլի դրական «HER2/NEU» կրծքագեղձի քաղցկեղի տրաստաուգումաբ դեղով բուժման ծրագիրը, հիվանդների ընդգրկման, նշանակման չափանիշները, իսկ 30.03.2020 թ. N 1131-Ա հրամանով՝ կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային փորձարարական ծրագիրը<sup>73</sup>: Հոկտեմբեր ամսին իրականացվել են մի շարք դասընթացներ<sup>74</sup> «Կրծքագեղձի քաղցկեղի և կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգի պիլոտային ծրագիր իրականացնելու նպատակով առողջության առաջնային պահպանման օղակի (ԱԱՊ) մասնագետների համար» ուղեցույց-գործելակարգի կլինիկական մասի և էլեկտրոնային առողջապահական համակարգ տվյալների մուտքագրման վերաբերյալ: Հարկ է նշել, որ ապրիլի 7-ին ՀՀ ԱՆ N 1126-Լ հրամանով<sup>75</sup> հաստատվել է «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը», ըստ որի 2021թ.-ից պլանավորվում է չարորակ նորագոյացությունների անհատական կանխարգելման, ախտորոշման վերաբերյալ տեղեկատվության բարձրացում, նոր դեպքերի նվազեցում:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի<sup>76</sup> կիրարկումն ապահովելուն ուղղված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում և կիրարկում, որի նպատակներից է նաև քաղցկեղի կանխարգելումը և բեռի նվազումը; «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ<sup>77</sup> են արվել, որոնց համաձայն սահմանվել են մի շարք արգելափակող իրավական նորմերում կապված ծխախոտի և ալկոհոլի գովազդներին; 05.05.2021թ. ընդունվել է ՀՀ կառավարության որոշումը «Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»<sup>78</sup>, որտեղ նույնպես սահմանված են ծխախոտի և ալկոհոլի օգտագործման և չարաչափման ռիսկերը, որոնք կարող են առաջացնել չարորակ նորագոյացությունների առաջացում: ՀՀ ԱՆ Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնում ներդրվել է ներվիրահատական հետազոտության նորագույն եղանակ, որը

<sup>71</sup> The ESMO Guidelines, <https://www.esmo.org/guidelines/esmo-guidelines-methodology>  
<sup>72</sup> ՀՀ ԱՆ 25.03.2020թ. N 1094-Լ հրաման, <https://www.moh.am/images/legal-533.pdf>  
<sup>73</sup> ՀՀ ԱՆ 30.03.2020թ. N 1131-Ա հրաման, <https://www.moh.am/images/legal-537.pdf>  
<sup>74</sup> «Կրծքագեղձի քաղցկեղի և կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգի պիլոտային ծրագիր իրականացնելու նպատակով առողջության առաջնային պահպանման օղակի (ԱԱՊ) մասնագետների համար» դասընթաց, [https://nih.am/am/publication\\_single/358](https://nih.am/am/publication_single/358)  
<sup>75</sup> ՀՀ ԱՆ 07.04.2021թ. N 1126-Լ հրաման, <https://www.moh.am/images/legal-743.pdf>  
<sup>76</sup> ՀՀ օրենք «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148983>  
<sup>77</sup> ՀՀ օրենքներ «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139761>, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144757>  
<sup>78</sup> ՀՀ կառավարության 20.05.2021թ. N 827-Ղ որոշում «Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152913>

թույլ կտա նվազեցնել հետվիրահատական բարդությունները և զգալիորեն բարելավել վիրահատական բուժման արդյունքները<sup>79</sup>: Անդրադառնալով պալիատիվ օգնության ոլորտին՝ հարկավոր է նշել, որ սահմանվել է ուռուցքաբանական բժշկական օգնություն և սպասարկում ստացող մեծահասակ պացիենտի հիվանդության պատմագրի ձևը<sup>80</sup>: ՀՀ ԱՆ 28.07.2021թ. N 56-Ն հրամանով սահմանվել է հիմնական դեղերի նոր ցանկը<sup>81</sup>, որով նաև նախատեսվում է պալիատիվ օգնության համար նախատեսված դեղերի անվանումները և չափաբաժինները:

▪ **Միջազգային առողջապահական կանոնների կայուն ներդրման ծրագրի մշակում**

Ծրագիրը դեռ չի մշակվել, սակայն ըստ Առողջապահության նախարարության, մշակվել և ԱՀԿ-ի հետ քննարկվել են Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների կայուն ներդրման ծրագրի («Առողջապահական անվտանգության ազգային գործողությունների ծրագիր») համար ռազմավարական ուղղությունները և ցուցանիշները: Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակներ արձանագրելիս՝ դեպքի վերաբերյալ անմիջապես տեղեկացվում է ԱՀԿ: Մինչ այդ 2019 թ. ՀՀ առողջապահության նախարարի գլխավորած պատվիրակությունը մեկնել էր մի շարք պետություններ, որտեղ անդրադարձ էր արվել Միջազգային առողջապահական կանոնների ներդրման հետագա ծրագրերին<sup>82</sup>: Ուժի մեջ են. «Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի և շահագրգիռ մարմինների համագործակցության մեխանիզմները և համակարգման ընթացակարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը<sup>83</sup>, «Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնին ճանաչելու և միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի լիազորությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը <sup>84</sup>: Կանոնների կիրարկումն ապահովելու և զարգացնելու նպատակով վերջին անգամ փոփոխություն է արվել 1222-Ն որոշմամբ 2020թ. ամռանը, ըստ որի լրացում է արվել «Գետական սահմանի անցման կետերում ՀՀ-ում միջազգային առողջապահական կանոնների ներդրման և արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 777-Ն որոշման մեջ<sup>85</sup>: Այլ տեղեկություն բացակայում է:

▪ **Սկրինինգների և հիվանդությունների միասնական ռեգիստրների ստեղծում, փորձարկում, մասնագետների վերապատրաստում, վերազինում և ամբողջական ներդրում**

Սկրինինգների ռեգիստրի ստեղծման և այլ գործողությունների վերաբերյալ բացակայում է որևէ տեղեկություն<sup>86</sup>: Երկրորդի մասով իրականացվել են աշխատանքներ, սակայն բուն ռեգիստրը բացակայում է: Բնակչության առողջության մասին ամբողջական տվյալների մուտքագրման և

<sup>79</sup> Ուռուցքաբանության ազգային կենտրոնը ներդրել է ներվիրահատական հետազոտության նորագույն եղանակ, Oncology.am, <https://bit.ly/3hzbz12T>

<sup>80</sup> ՀՀ ԱՆ N 45-Ն հրաման «Ուռուցքաբանական բժշկական օգնություն և սպասարկում ստացող մեծահասակ պացիենտի հիվանդության պատմագրի ձևը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153186>

<sup>81</sup> ՀՀ ԱՆ հրամանը «Հիմնական դեղերի ցանկը սահմանելու և ՀՀ առողջապահության նախարարի 17.03.2018թ. N 07-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154804>

<sup>82</sup> Արսեն Թորոսյանն աշխատանքային այցով Ստամբուլում է, <https://www.moh.am/#1/1867>, Հայաստանի և Ռուսաստանի համագործակցությունը կրնոլյայնվի ստորագրված նոր համաձայնագրի շրջանակներում, <https://www.moh.am/#1/1727>, <https://www.moh.am/#1/1198>

<sup>83</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60842>

<sup>84</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87952>

<sup>85</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144704>

<sup>86</sup> ԻԶԿ-ն այս մասով ևս ուղարկել է գրավոր հարցումներ լիազոր մարմնին:

պահպանման միասնական համակարգման միջոց է հանդիսանում «ԱՐՄԵԴ» էլեկտրոնային առողջապահական համակարգը, որը մշակվել է դեռևս 2014-2015թթ-ին և ներդրվել է 2017թ. հոին: Համակարգին միացած է թվով 470 բժշկական հաստատություն, որոնք մատուցում են բժշկական ծառայություններ պետական պատվերի շրջանակներում: Համակարգը հնարավորություն է ընձեռում հավաքել և մուտքագրել հիվանդանոցային, առողջության առաջնային պահպանման, ստոմատոլոգիական, հղիի հսկման դեպքերի տվյալները և սոցիալական փաթեթի շահառուներին տրամադրած ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը ներկայումս կիրառվում է առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության կողմից պետական պատվերի շրջանակներում բժշկական հաստատությունների տրամադրած կատարողականի հաշվետվությունների հիման վրա՝ փոխհատուցման գործընթացներն իրականացնելու համար:

Հարկ է նաև նշել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին N ՀՕ-268-Ն ՀՀ օրենքի համաձայն, նշված օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ: Կատարելով մի շարք լրացումներ՝ սահմանվել է «հիվանդությունների ռեգիստրի» հասկացությունը, ինչպես նաև ըստ 10-րդ հոդվածի՝ ռեգիստրի տվյալներ են համարվում հատուկ հիվանդությունների վերաբերյալ համապետական, համապարփակ տեղեկատվությունները, իսկ ռեգիստրն այդ տվյալները ձևավորում, պահպանում և մշակում է: Հիվանդությունների ռեգիստրների ցանկը, ռեգիստրի վարման պատասխանատուները և վարման կարգը սահմանում է լիազոր մարմինը: Սակայն լիազոր մարմնի կողմից որևէ փաստաթուղթ չի ընդունվել վերոնշյալի կարգավորմանն առնչվող: Համաձայն «ԻՐՏԵԿ» իրավական կայքէջում տեղ գտած ՀՀ առողջապահության նախարարի «էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 456-Լ հրամանի<sup>87</sup>, նախատեսվել են մի շարք միջոցառումներ (որոշներն իրագործվել են) ուղղված ռեգիստրների ստեղծմանը, մասնավորապես՝ մինչև 2021թ. մարտն էլեկտրոնային առողջապահության համակարգի շահագործման և առողջապահական տվյալների բազաների վարման համար անհրաժեշտ իրավական կարգավորումներ մշակել և կիրառել ՀՀ ԱՆ-ի հրամանների հաստատման միջոցով: Այդ հրամաններն են.

- «Հեռաբժշկության իրականացման կարգը, ներառյալ՝ ընթացակարգում ներառվող պարտադիր պահանջները սահմանելու մասին»;
- «Առողջապահության ոլորտում լիցենզավորված անձանց կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգում անձնական, ներառյալ՝ հատուկ կատեգորիայի տվյալների և բժշկական տվյալների, մուտքագրման ընթացակարգը հաստատելու մասին»;
- «էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվողների վերապատրաստման կարգը հաստատելու մասին»<sup>88</sup>;
- «էլեկտրոնային առողջապահության համակարգին միանալու նպատակով տեխնիկական հատկանիշների նվազագույն պայմանները սահմանելու մասին»<sup>89</sup>;
- «էլեկտրոնային առողջապահական համակարգում պացիենտին տրվող էլեկտրոնային տեղեկատվության հասանելիության պատուհանում պահվող պացիենտի տվյալները դիտելու կանոնները, պացիենտի (կամ նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ տեղեկատվությանը ծանոթանալու անձանց և վերջիններիս իրավասության շրջանակը, պացիենտի էլեկտրոնային տեղեկատվության

<sup>87</sup> ՀՀ առողջապահության նախարարի 16.02.2021թ. N 456-Լ հրաման «էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <http://www.irtek.am/views/act.aspx?aid=109847>

<sup>88</sup> ՀՀ առողջապահության նախարարի հրամանը էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվողների վերապատրաստման կարգը սահմանելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151027>

<sup>89</sup> ՀՀ առողջապահության նախարարի հրամանը էլեկտրոնային առողջապահության համակարգին միանալու նպատակով տեխնիկական հատկանիշների նվազագույն պայմանները սահմանելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151012>

հասանելիության պատուհան մուտք գործելու և նրա անձնական, ներառյալ՝ հատուկ կատեգորիայի տվյալները դիտելու կարգը, ինչպես նաև պացիենտի՝ էլեկտրոնային տեղեկատվության հասանելիության պատուհան մուտք գործելու համար համաձայնության ձևը սահմանելու մասին»<sup>90</sup>;

- «Հիվանդությունների ռեգիստրների ցանկը, ռեգիստրի վարման պատասխանատուները և վարման կարգը սահմանելու մասին»:

Հարկ է նշել, որ տվյալ հրամաններից որոշները դեռևս չեն ընդունվել, սակայն նրանց ընդունումը նախատեսված էր համաձայն N 456-Լ հրամանի 2021թ. մարտի 3-րդ տասնօրյակում: Ինչպես նաև ըստ այդ փաստաթղթի՝ նախատեսվում է քաղցկեղի ռեգիստրի մշակում, ներդրում «ԱՐՄԵԴ» էլեկտրոնային առողջապահության համակարգում և փորձարկում, շահառուների ուսուցում, ենթահամակարգի գործարկում և իրազեկում, շաքարային դիաբետի ռեգիստրի մշակում, ներդրում էլեկտրոնային առողջապահության համակարգում և փորձարկում, շահառուների ուսուցում, ենթահամակարգի գործարկում և իրազեկում: Միջոցառումների մեկնարկի ժամանակահատվածը նշված է 2022թ. մարտի առաջին տասնօրյակ, ավարտը՝ 2023թ. նոյեմբերի երրորդ տասնօրյակ:

ՀՀ կառավարության «2022թ. առողջապահական պետական նպատակային ծրագրերը հաստատելու մասին» որոշմամբ<sup>91</sup> սկրինինգների վերաբերյալ նախատեսվում է տուբերկուլոզի կանխարգելման նպատակով նոր 2021-2025թթ. ռազմավարական ծրագրում ներդնել է ՏԲ-ի կանխարգելման նպատակով հատուկ սահմանվող խմբերի համար գաղտնի ՏԲ սկրինինգների իրականացում՝ կիրառելով Մանթուի մաշկային կամ գամմա ինտերֆերոնային թեստերը (IGRA test), Մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված նպատակներից են նաև սկրինինգային ծրագրերի իրականացումը, նորածնային սկրինինգ ծրագրերի իրականացումը (ֆենիլկետոնուրիայի, բնածին հիպոթիրեոզի, լսողության բնածին խանգարումների, անհասության ռեթինոպաթիայի, կոնքազդրային հոդի դիսպլազիայի և սրտի կրիտիկական արատների վաղ հայտնաբերման սկրինինգներ)՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված ծրագրերին համապատասխան, քաղցկեղի կանխարգելման նպատակով 30-60 տարեկան կանանց արգանդի վզիկի սկրինինգային հետազոտումը՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 28.11.2013թ. N 77-Ն հրամանով սահմանված կարգով: Իսկ բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման 2021 թվականի պետական նպատակային ծրագրի ուղենիշներից են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում 2021 թվականին շարունակել բնակչության ռիսկային խմբերում ՈՎՀ սքրինինգային հետազոտությունների իրականացման աշխատանքները, հանրապետության տարբեր մարզերում ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավումը, սկրինինգային հետազոտություններ իրականացնել 35-68 տարիքային խմբում զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման և կանխարգելման, ինչպես նաև 30-60 կանանց տարիքային խմբում՝ արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով:

- **Ազգային լաբորատոր համակարգի զարգացման ռազմավարական ծրագրի և դրանից բխող 2021-2025թթ. գործողությունների ցանկի հաստատում**

<sup>90</sup> ՀՀ առողջապահության նախարարի N 40-Ն հրաման, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152988>

<sup>91</sup> ՀՀ կառավարության որոշումը «2022 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=156457>

Լաբորատոր համակարգի զարգացման ռամվարական ծրագրի վերաբերյալ միասնական իրավական ակտ կամ տեխնիկական բաղադրիչ բացակայում են: 06.05.2020թ. ՀՀ օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» շարադրվեց նոր խմբագրությամբ<sup>92</sup>, ինչի հետևանքով լրացում կատարվեց լաբորատորիայի գործունեությանը վերաբերող նորմերում, և սահմանվեցին «լաբորատոր գործունեություն», «համընդհանուր լաբորատոր ցանց», «ռեֆերենս լաբորատորիա» և այլ հարակից հասկացությունները: Համաձայն այլ իրավական ակտերի 2021թ. ընդունվեցին մի շարք ՀՀ կառավարության որոշումներ, որոնք սահմանում են համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության սկզբունքները, համակարգումը, մակարդակները և վերահսկողության կարգը<sup>93</sup>; առողջապահության ոլորտում ռեֆերենս լաբորատորիաների նշանակման կարգը<sup>94</sup>; լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպություններում որակի կառավարման համակարգը և ներդրման կարգը<sup>95</sup>:

- **Գիտական համատեղ աշխատանքների իրականացում, մասնավորապես՝ ա) նոր պատվաստանյութերի ներդրման ծախսարդյունավետության, ազդեցության և հիվանդությունների տարածվածության հետազոտությունների վերաբերյալ (ԵՄ որոշում, Ընդունված՝ 22.10.2013թ. N1082/2013 Հոդված 196), բ) ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ախտորոշման, բուժման ուղղությամբ**

Պայմանավորված նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դեպքերի աճմամբ՝ 16.03.2020թ. ՀՀ կառավարությունը սահմանում է արտակարգ դրություն՝ ՀՀ ողջ տարածքում (16.03.2020թ. N 298-Ն որոշում<sup>97</sup>), որը պարբերաբար երկարաձգվում է մինչև 2021թ. վերջ: Ընդհանուր առմամբ այս երկու տարվա ընթացքում, նոյեմբերի 5-ի դրությամբ արձանագրվել է COVID-19 316,839 դեպք, որից 6,582 մահվան ելքով, COVID-19 դրական պացիենտների շրջանում արձանագրվել է ևս 1,323 մահվան ելք «այլ պատճառներով»<sup>98</sup>: ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ախտորոշման, բուժման ուղղությամբ իրականացվել են բավականին ծավալուն և արդյունավետ միջոցառումներ: Իրականացվել են համալիր քննարկումներ բժիշկների, գիտնականների, և այլ մասնագետների շրջանում: ՀՀ Առողջապահության նախարարությունը կատարել է նաև բնակչության իրազեկման աշխատանքներ՝ տարածելով վարակի մասին տեղեկություն տարբեր հնարավոր միջոցներով: ՀՀ կառավարության, ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մարմինների և այլ անձանց կողմից ընդունվել են մի շարք իրավական ակտեր<sup>99</sup>, որոնք սահմանում են նոր սանիտարահամաճարակային կանոններ, կարգավորում են վարակի կանխարգելման ուղղված միջոցառումները, անհատական պաշտպանության միջոցների լայնածավալ և ռացիոնալ կիրառումը և ախտահանման միջոցառումների իրականացումը, մեթոդական ուղեցույցների և ալգորիթմների մշակումը: Ապրիլի 7-ին Եվրոպական միությունը և ԱՀԿ-ն ՀՀ առողջապահության նախարարությանը փոխանցել են 100 թթվածնի խտացուցիչ: Թթվածնի խտացուցիչների հանձնումն իրականացվել է

<sup>92</sup> ՀՀ օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142602>

<sup>93</sup> ՀՀ կառավարության որոշումը «Համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության սկզբունքները, համակարգումը, մակարդակները և վերահսկողության կարգը սահմանելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153938>

<sup>94</sup> ՀՀ կառավարության որոշումը «Առողջապահության ոլորտում ռեֆերենս լաբորատորիաների նշանակման կարգի մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154689>

<sup>95</sup> ՀՀ կառավարության որոշումը լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպություններում որակի կառավարման համակարգը եվ ներդրման կարգը սահմանելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155644>

<sup>96</sup> Decision № 1082/2013/EU, <https://bit.ly/3z7gfzN>

<sup>97</sup> ՀՀ կառավարության 16.03.2020թ. N 298-Ն որոշումը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145261>

<sup>98</sup> Հաստատված դեպքերն ըստ օրերի, <https://ncdc.am/coronavirus/confirmed-cases-by-days/>

<sup>99</sup> ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, <https://ncdc.am/coronavirus/technical-documents/>



Եվրոպական միության և ԱՀԿ-ի համատեղ ջանքերով՝ «Համերաշխություն հանուն առողջության» նախաձեռնության շրջանակում<sup>100</sup>, որի նպատակն է օգնել կանխել, հայտնաբերել և արձագանքել COVID-19 համավարակին՝ ԵՄ Արևելյան հարևանության երկրներում: Թթվածնի խտացուցիչները COVID-19-ով հոսպիտալացված հիվանդներին թթվածնով ապահովելու ոչ ինվազիվ միջոց են: Դրանք ծառայելու են որպես առաջին անհրաժեշտ քայլ՝ COVID-19-ի ծանր ընթացքի դեպքում արյան մեջ թթվածնի ցածր մակարդակ ունեցողների բուժման համար:<sup>101</sup>

Հաշվի առնելով 2020թ. նոր կորոնավիրուսային վարակի չափազանց արագ տարածումը և վերջինիս հետ կապված մահացության ռիսկերը, անհրաժեշտություն ծագեց ամբողջ աշխարհով կանխարգելման այլ քայլերի գնալ, բացի անհատական պաշտպանության միջոցների օգտագործումը: Կանխարգելման մեկ այլ մաս դարձավ COVID-19-ի դեմ պատվաստումը: COVID-19-ի դեմ պատվաստանյութի ձեռք բերման նպատակով Առողջապահության նախարարությունը 2020 թվականի սեպտեմբերին միացել է «COVAX FACILITY» նախաձեռնությանը: Առողջապահության նախարարությունը կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստանյութի ձեռք բերման նպատակով բանակցություններ է վարում բոլոր հնարավոր պատվաստանյութ արտադրողների և միջազգային գործընկերների հետ:

19.08.2021թ. դրությամբ, Pfizer/Biotech, Moderna, AstraZeneca, Johnson&Johnson, Sinopharm և Sinovac պատվաստանյութերը հաստատվել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ճանաչված խիստ կարգավորող մարմինների կողմից: Այս պահին Կովիդ-19-ի վարակվածների և պատվաստվածների քանակի մասին տեղեկություն առկա է ԱՀԿ-ի COVID-19-ի տեղեկատվական վահանակում, որը թարմացվում է ամեն օր, պարունակում է տեղեկատվություն ամբողջ աշխարհում ներարկված պատվաստանյութի դեղաչափերի քանակի մասին<sup>102</sup>, ինչպես նաև առկա է COVID-19 պատվաստանյութի հատուկ տեղեկատվական վահանակ ներկայացված առավել մանրամասն տեղեկատվությամբ<sup>103</sup>: Բնակչությանը պատվաստելու նպատակով Sputnik V, AstraZeneca, Sinovac, Sinopharm, Moderna, Sputnik light պատվաստանյութերը գնվում և ներմուծվում են Հայաստան:

- **«Արտաընդերային վիրուսային հեպատիտների 2021-2023թթ. ազգային ծրագրի» իրականացում՝ համաճարակաբանական հսկողության և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համակարգի ստեղծման վերաբերյալ ԵՄ որոշում ընդունված՝ 22.10.2013թ. N1082/2013, Գլուխ I, Հոդված 1<sup>104</sup>**

ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» սահմանում է մի շարք նպատակներ ոլորտից կախված: Ոլորտներից մեկն է նաև առողջապահությունը, որն ուղղված էր իրականացնել ծրագրով սահմանված միջոցառումներ, ներառյալ՝ արտաընդերային վիրուսային հեպատիտների դեմ պայքար, վիրուսային հեպատիտ Ց-ով տարեկան առնվազն 1000 անձի ընդգրկում բուժման ծրագրում: Առողջապահության նախարարությունը վիրուսային հեպատիտների կանխարգելումը և դրանց դեմ պայքարն առավել համակարգված և արդյունավետ դարձնելու նպատակով ներդրել է «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023

<sup>100</sup> The Solidarity for Health Initiative - Addressing the COVID-19 pandemic and building a resilient health sector in the Eastern Partnership, <https://www.euro.who.int/en/countries/armenia/publications/eu-who-solidarity-for-health-initiative>

<sup>101</sup> ԵՄ-ն ԱՀԿ-ի հետ մեկնարկում է նոր ծրագիր, որը կաջակցի պատվաստումների համար Արևելյան գործընկերության երկրների պատրաստությանը, <https://bit.ly/3nUC1Do>

<sup>102</sup> WHO's COVID-19 dashboard, <https://covid19.who.int/>

<sup>103</sup> Dedicated COVID-19 vaccination dashboard, <https://bit.ly/3mMj8mL>

<sup>104</sup> Decision № 1082/2013/EU, <https://bit.ly/3z7gfzN>



թվականների ծրագիրը»<sup>105</sup>, որի շրջանակներում բժշկական կազմակերպություններում կիրարկվում է ռիսկի խմբերում վաղ հայտնաբերման գործընթացը, իրականացվում են վիրուսային հեպատիտների համաճարակաբանական դիտարկման համակարգի, լաբորատոր կատարելագործման, ինչպես նաև բուժաշխատողների գիտելիքների շարունակական կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Առկա է նաև «Արտաընդերային վիրուսային հեպատիտների (հեպատիտ բ, հեպատիտ ց) լաբորատոր ախտորոշում» կլինիկական ուղեցույցը<sup>106</sup>: 27.07.2021թ. ԱՆ ՀՎԿԱՎ վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության վարչության պետի հետ հարցազրույցում<sup>107</sup>, նշվել է, որ Հայաստանում նվազել են սուր հեպատիտների դեպքերը:

▪ **Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների նոր ծրագրի իրականացում, այդ թվում՝ սննդային ուղեցույցի մշակում և ընդունում**

Ըստ սույն մշտադիտարկման արդյունքում ԲՀԿ-ների ստացված տեղեկության առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների նոր ծրագիր է իրականացվում, այդ թվում՝ սննդային ուղեցույցի մշակում և ընդունում: Մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 20.05.2021թ. N 827-Լ որոշմամբ «Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիր»<sup>108</sup>: Համաձայն ծրագրի ՀՀ կառավարության 27.03.2014թ. N 442-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ Կառավարության գերակա խնդիրներից են բնակչության հիվանդացության և մահացության ցուցանիշների բարելավումը, առողջ ապրելակերպի խթանումը, մասնավորապես, առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների (այսուհետ՝ ՌԳ) տարածվածության նվազեցումը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Առողջություն 2020» քաղաքականության համատեքստում ընդունված սնուցման և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ Վիեննայի հռչակագրի համաձայն՝ հավելյալ քաշի և ճարպակալման, ինչպես նաև թերսնուցման հարցերի լուծման համար կարևոր է սննդի արտադրության, օգտագործման, մարկետինգի, ապահովման, հասանելիության, ինչպես նաև տնտեսական միջոցների և կրթական համակարգի ուղղություններով քաղաքականության մշակումը: Ըստ ծրագրի առողջ ապրելակերպի ռիսկի գործոնները սահմանելու և ուսումնասիրելու նպատակով կատարվել են մի շարք հետազոտություններ. ԱՀԿ STEP մեթոդաբանությամբ իրականացված հետազոտություն (STEPS), ԴԵԱՎ հետազոտություն:

Մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ 2021թ. առողջության առաջնային պահպանման պետական նպատակային ծրագիրն ուղղվելու է նաև առողջ ապրելակերպի քարոզչության և կանխարգելման ծրագրերի իրականացմանը. ԱԱՊ ծառայություններ մատուցող մասնագետների (տեղամասային թերապևտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների) կողմից՝ ամբողջ բնակչության համար: 2021թ. ընթացքում շարունակվելու է ամբողջ հանրապետության տարածքում նշված սքրինինգային ծրագրին մասնակցությունը ապահովելու, ինչպես նաև առողջ ապրելակերպի և ՌՎՀ հիմնական ռիսկային գործոնների կանխարգելմանն ուղղված հանրային իրազեկման քարոզարշավը<sup>109</sup>: Առողջ ապրելակերպի խթանման և ծխելու դեմ պայքարի միջոցառումների համար 2021 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվելու է 100.000 ՀՀ դրամ:

<sup>105</sup> Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների ծրագիր, [https://ncdc.am/docs/programs/7\\_1.pdf](https://ncdc.am/docs/programs/7_1.pdf)

<sup>106</sup> <https://www.moh.am/uploads/Hapatit%20clin%20ughecuy.pdf>

<sup>107</sup> <https://bit.ly/2WSTnHm>

<sup>108</sup> ՀՀ կառավարության որոշումը «Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docID=152913>

<sup>109</sup> ՀՀ կառավարության որոշումը «2021 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերը հաստատելու մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docID=146404>

«ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ<sup>110</sup> սահմանվել է միջոցառում. Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի և ցուցապատառների միջոցով): Միջոցառումը սկսվել է 2019 թ.-ից, և ակնկալվում է շարունակել մնացյալ մասով 02.11.2023թ. տասնօրյակում: Իրականացվում են մի շարք միջոցառումներ.

- Առողջապահության նախարարության մասնագետները բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանման ծրագրի շրջանակներում 21.09.2018թ. մասնակցել են Կունգ-ֆու ֆեդերացիայի կողմից ՀՀ անկախության տոնի առիթով կազմակերպված շախմատի առաջնության բացման արարողությանը<sup>111</sup>:
- 2019թ. առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը մասնակցել է «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ» ազգային հետազոտության արդյունքների ներկայացում թեմայով միջոցառմանը<sup>112</sup>:
- 2021թ. հունիսից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի պոլիկլինիկայում գործում է սպորտային բժշկության ծառայությունների առանձնացված բաժանմունք՝ նախատեսված բոլոր մարզաձևերի ՀՀ պատանեկան, երիտասարդական և ազգային հավաքականների ներկայացուցիչների համար<sup>113</sup>:
- 2021թ. հուլիսին Առողջապահության նախարարության նախաձեռնությամբ՝ իրականացվել են առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված իրազեկման աշխատանքներ զոհված, հաշմանդամություն ունեցող զինծառայողների և աշխարհագորայինների, ծնողազուրկ ու անապահով բազմազավակ ընտանիքների՝ 7-13 տարեկան 1600 երեխայի համար՝ պետության կողմից կազմակերպված թվով 6 ճամբարում<sup>114</sup>:

Մանդային ուղեցույցը ըստ ստացված տվյալների մշակման փուլում է գտնվում:

## ▪ **Քույրական գործի զարգացմանն ուղղված ծրագրի մշակում և ներդրում**

Առողջապահության նախարարությունից հայտնում են որ արվում են քույրական գործի զարգացմանն ուղղված ծրագրի մշակման և ներդրման աշխատանքներ և ծրագիրն այս պահին գտնվում է մշակման փուլում: 20.09.2021-27.08.2021թ.-ը տեղի է ունեցել Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից «Մենեջմենթ Միքս» ՍՊԸ հետ համատեղ կազմակերպվող «Բուժքույրական գործի կազմակերպում» թեմայով դասընթաց<sup>115</sup>: Եվրոպական հանձնաժողովի Թայեքս<sup>116</sup> տեխնիկական օժանդակության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մարտի 23-ից 25-ը կազմակերպվել է առցանց փորձագիտական առաքելություն, որին մասնակցել են փորձագետներ Իռլանդիայից՝ Պրոֆեսիոնալ ստանդարտների և կրթության բուժքույրական և մանկաբարձական խորհրդի տնօրեն Աննե-Մարիա Ռյանը և Լեհաստանի Լոձ քաղաքի բժշկական համալսարանի համակարգված բժշկական օգնության վարչության պետ Դորաթա Կիլանսկան: Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի, ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

<sup>110</sup> ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docID=131287>

<sup>111</sup> Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումները շարունակվում են, <https://www.moh.am/#1/1590>

<sup>112</sup> Ներկայացվել են «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ» հետազոտության արդյունքները, <https://www.moh.am/#1/2394>

<sup>113</sup> Նորաբաց սպորտային բժշկության բաժանմունք՝ մարզիկների համար, <https://www.moh.am/#1/4047>

<sup>114</sup> Առողջ ապրելակերպի իրազեկում՝ երեխաների համար, <https://www.moh.am/#1/4180>

<sup>115</sup> «Բուժքույրական գործի կազմակերպում» թեմայով դասընթաց, <https://bit.ly/3v431n1>

<sup>116</sup> Թայեքս ծրագրի կանոնների ու ընթացակարգերի ձեռնարկ, <https://www.mineconomy.am/media/3158/2811.pdf>

նախարարության, Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ներկայացուցիչներ, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների բուժքույրեր: Առաքելության նպատակն էր տրամադրել փորձագիտական խորհրդատվություն՝ «Բույրական գործի զարգացման ռազմավարություն» մշակելու հարցում: Առցանց միջոցառման ընթացքում փորձագետների կողմից խորհրդատվություն է տրամադրվել հետևյալ հարցերի ուղղությամբ.

1. Առողջապահության համընդհանուր ծածկույթի ապահովման և Կայուն զարգացման նպատակներին հասնելու հարցում բուժքույրերի դերի բարձրացմանը և մասնակցության ապահովմանն ուղղված, ապացույցների վրա հիմնված ռազմավարությունների մշակում:
2. COVID-19-ի համավարակի պայմաններում մարտահրավերների վերլուծություն:
3. Բնակչության կարիքների վրա հիմնված, անվտանգ, ծախսարդյունավետ, մատչելի բուժքույրական ծառայությունների ապահովում:
4. Բուժքույրական ծառայությունների որակի կառավարման համակարգեր (օրինակներ ԵՄ-ից):
5. Բուժքույրական կրթության ազգային հավատարմագրման ստանդարտներ:
6. Բուժքույրական ծառայությունների առաջնորդություն և հաշվետվողականություն:
7. Բոլոր մակարդակներում որոշումների կայացմանը բուժքույրերի ներգրավման մեխանիզմներ:
8. Փոփոխվող առողջապահական կարիքներին ուղղված և կարողությունների վրա հիմնված բուժքույրական կրթական ծրագրեր՝ ներառյալ առաջնորդության և բանակցային հմտությունների թեմաներ:
9. Ռազմավարությունների մշակման ընթացքում բուժքույրերի մասնակցության ապահովման մեխանիզմներ:
10. Բուժքույրական աշխատուժի կրթության, գործունեության կառավարում և այդ ուղղությամբ միջգերատեսչական համագործակցություն:<sup>117</sup>

- **Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ՝ ա) սիրտ-անոթային հիվանդություններով տառապող պացիենտներին բժշկական օգնության տրամադրման ալգորիթմի և ճանապարհային քարտեզի մշակում, բ) սննդում կերակրի աղի քանակի և տրանսճարպերի քանակի սահմանափակմանն ուղղված միջոցառումներ, գ) Սիրտ-անոթային հիվանդների վարման որակի բարելավման նոր գործիքների (որակի ցուցանիշներ, բուժհաստատության գնահատում, բժիշկների ինքնագնահատում) մշակում և ներդրում**

Առաջին բախադրիչի մասով կատարվող քայլերը դեռ հստակեցված չեն, և համաձայն ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված տվյալների միջոցառումը դեռ գտնվում է մշակման փուլում: Երկրորդ բախադրիչը վերաբերում է աղի քանակի և տրանսճարպերի քանակի սահմանափակմանը: Ըստ ՀՀ ԱՆ-ից ստացված տվյալների կերակրի աղի օգտագործման նվազեցմանն ուղղված քաղաքականությունը մշակվել է, նախագիծը գտնվում է ներքին շրջանառության մեջ, ըստ որի նախատեսվում է կրճատել հանրային սննդի օբյեկտներում աղի քանակը, մասնավորապես սեղաններից վերացնել աղամանները և տրամադրել ըստ պահանջի: Նշված միջոցառմանը վերաբերող հետազոտություններից է 2020թ. բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքի արտադրության մեջ օգտագործվող աղի փաստացի կամ հնարավոր ներդրման գնահատումը<sup>118</sup>:

Երրորդ բախադրիչը իրականացվում է դեռևս 2016 թ.-ից “Stent for life” ծրագրի շրջանակներում և նախատեսվում է կիրառել այն բավականին երկար ժամանակահատվածում: ՀՀ կառավարության

<sup>117</sup> Առցանց փորձագիտական առաքելություն՝ Եվրասիանմաժողովի «Թայքս» տեխնիկական օժանդակության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, <https://www.moh.am/#1/3696>

<sup>118</sup> ՀՀ, Բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքի արտադրության մեջ օգտագործվող աղի փաստացի կամ հնարավոր ներդրման գնահատում, Յոդի Գլոբալ Ցանցի հետազոտություն (Iodine Global Network), <https://nih.am/assets/pdf/atvk/f567921e776f053d12fe5d476d169802.pdf>

կայք-էջում տեղակայված է նախագիծ որի վերաբերյալ բացակայում են այլ գրառումներ, նախագիծն վերաբերում է «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին»<sup>119</sup>: 2021թ. հունիս ամսին նախարարը մասնակցել է սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջազգային գիտաժողովին, որտեղ քննարկվել է սրտանոթային հիվանդությունների մահացության թվերը, որոնք առաջին տեղում են: Նախարարը նաև մասնակցել է սրտանոթային հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջազգային գիտաժողովին, որը թե՛ առցանց հարթակում և թե՛ առկա տարբերակով համախմբել է ոլորտի գիտականներին՝ աշխարհի տարբեր երկրներից: Կառավարությունը հաստատել է առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը, որի բաղադրիչներից մեկն էլ բնակչության առողջության պահպանման և ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցման համար նպաստավոր պայմաններ ստեղծելն է:<sup>120</sup>

ՀՀ ԱՆ N 2341-Լ հրամանով սահմանվել է սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը, որով միջոցառումների մի մասը ուղղված է բնակչության և բժիշկների իրազեկվածության բարձրացմանը, մյուս մասը՝ ՍԱՀ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների հասանելիության ապահովմանը, կատարման ժամկետն է սկսած 2019թ. առավելագույնը մինչև 2023թ.<sup>121</sup>: ՀՀ կառավարության որոշման 2022թ. առողջապահական նպատակային ծրագրերի համաձայն 2022 թվականին ծրագրի ֆինանսական միջոցառումներն ուղղվելու են՝ սիրտ-անոթային վիրաբուժական ծառայություններ, այդ թվում՝ սրտի վիրահատություններ, կորոնար անոթների ստենտավորում և բալոնային դիլատացիա, աորտայի անևրիզմալների պատռվածքների և շերտազատումների վիրաբուժական բուժում, սրտի ռիթմը վարող սարքի իմպլանտացիա, սրտի փականների պրոթեզավորում, կարդիովերտերոբեֆիբրիլատորի իմպլանտացիա, սրտի կաթետերային արլացիա, խոշոր և պերիֆերիկ անոթների բալոնային դիլատացիա և ստենտավորում, սիներակի (Վ. Կավա/V. Cava) ֆիլտրի տեղադրում: Իրականացվելու են քայլեր սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների ուղղությամբ՝ ա. սրտամկանի ինֆարկտով հիվանդների հիվանդանոցային բուժման կազմակերպումը մասնագիտացված, ինտերվենցիոն սրտաբանական և թերապևտիկ բաժանմունքների միջոցով, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ անհրաժեշտ հետազոտությունների իրականացումը՝ ամբողջ բնակչության համար, բ. սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատական (կորոնար անոթների ստենտավորում) ծառայությունների իրականացումը, ծառայությունների կազմակերպումը, ամբողջ բնակչության համար անկախ սոցիալական կարգավիճակից՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 15.07.2021թ. N 54-Ն հրամանով հաստատված կարգի<sup>122</sup>:

- **Բնակչության շրջանում թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) ռիսկի գործոնների մասին բնակչության իրազեկմանն ուղղված միջոցառումներ (տեղեկատվական թերթիկների, պաստառների տպագրում և տարածում)**

<sup>119</sup> «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» նախագիծ, <https://www.gov.am/files/meetings/2010/4507.pdf>

<sup>120</sup> Անահիտ Ավանեսյանը մասնակցել է սրտանոթային հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջազգային գիտաժողովին, <https://www.moh.am/#1/4049>

<sup>121</sup> ՀՀ առողջապահության նախարարի N 2341-Լ «Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.moh.am/images/legal-420.pdf>

<sup>122</sup> ՀՀ կառավարության որոշումը «2022 թվականի առողջապահական նպատակային ծրագրերը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=156457>

Ըստ առողջապահության նախարարությունից ստացված ստացված տեղեկության, դեռևս իրականացվում են իրազեկման միջոցառումներ, մասնավորապես՝ պաստառներ են փակցվում հիվանդանոցների տեղեկատվական անկյուններում, տեղեկատվական թերթիկներ են բաժանվում բնակչության շրջանում: Համաձայն կառավարության 2019-2023թթ. գործունեության ծրագրի<sup>123</sup> կատարումն ապահովող միջոցառումների ցանկի, նախատեսվում էր մինչև 2019թ. օգոստոսի վերջ մշակել և ներկայացնել վարչապետի աշխատակազմին «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծ: Չնայած մի շարք քննարկումների և հրապարակումների, ռազմավարությունը չհաստատվեց<sup>124</sup>:

- **Հոգեբուժական ծառայությունների բարեփոխումների շրջանակում ծառայության հզորացմանն ուղղված միջոցառումներ՝ ա) հանրապետության հոգեբուժական բժշկական 7 հաստատությունների աշխատակիցների կրթում, բ) համայնքային հոգեբուժական ծառայության մոդելի ստեղծում և զարգացում**

Հոգեբուժական ծառայությունների բարեփոխմանն ուղղությամբ լիազոր մարմինը նախաձեռնել է գործողություններ ուղղված միայն որոշ տեղերում շենքային պայմանների բարելավմանը: Որևէ կերպ ադրադարձ չկա համայնքային ծառայությունների զարգացմանն ուղղված գործողություններին:

- **«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելուն ուղղված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում և կիրարկում**

Օրենքի ընդունումից հետո մշակվել և ընդունվել են մի շարք ենթաօրենսդրական ակտեր՝ ուղղված Օրենքի կիրարկմանն ապահովմանը, մասնավորապես՝

- 1) Կառավարության 27.08.2020թ. «Ծխախոտային արդյունաբերության մեջ ներգրավված անձանց կողմից ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վնասակար ազդեցության մասին բնակչությանն իրազեկելու կարգը հաստատելու մասին» N 1398-Ն որոշումը<sup>125</sup>,
- 2) Կառավարության 29.04.2021թ. «ՀՀ կառավարության 05.03.2015թ. N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 675-Ն որոշումը<sup>126</sup>,
- 3) ՀՀ առողջապահության նախարարի 27.05.2020թ. «Ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 14-Ն հրամանը<sup>127</sup>,

<sup>123</sup> ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/Annexes/5/Lokal-2019N650.1k.v..pdf>

<sup>124</sup> Նախարարությունը մշակել է թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության դեմ պայքարի հնգամյա ծրագիր, <https://armenpress.am/arm/news/982716>, <https://www.e-draft.am/projects/1825/about>

<sup>125</sup> ՀՀ կառավարության որոշումը ծխախոտային արդյունաբերության մեջ ներգրավված անձանց կողմից ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վնասակար ազդեցության մասին բնակչությանն իրազեկելու կարգը հաստատելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145553>

<sup>126</sup> ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ կառավարության 05.03.2015թ. N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152170>

<sup>127</sup> ՀՀ առողջապահության նախարարի հրամանը ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142877>



4) «Կալանավորվածների և դատապարտյալների պահման վայրերում ծխախտային արտադրատեսակների, ծխախտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և ծխախոտի ծխի բացասական ազդեցության նվազեցմանը և կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 25.02.2021թ. N 09-Ն և ՀՀ արդարադատության նախարարի 15.02.2021թ. N 47-Ն համատեղ հրամանը,

5) ՀՀ առողջապահության նախարարի 07.05.2021թ. «Օդանավակայաններում ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանելու մասին» N 22-Ն հրամանը<sup>128</sup>,

6) «Հիվանդանոցային ձևով հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանը<sup>129</sup>,

7) Մշակվել է «Ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվական ծառայությունների» ձեռնարկը դասավանդողների և «Ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվական ծառայությունների» ձեռնարկ-ուղեցույցը՝ առողջության առաջնային պահպանման օղակի բժիշկների համար, ինչպես նաև ստեղծվել է ծխախոտի օգտագործման դադարեցմանն ուղղված աջակցության ծառայություն. գործարկվել է «Ծխելը դադարեցնելու թեժ գիծը»<sup>130</sup>:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի<sup>131</sup> որոշ դրույթներ մեկ տարի ուշացումով: Համաձայն այդ դրույթների, արգելվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների)՝ հրապարակային ցուցադրումը վաճառարահներում և հանրային սննդի օբյեկտներում, բացառությամբ օդանավակայանների անմաքս առևտրի խանութների: Դրանց ցանկը՝ գների մասին նշումով, վաճառողը տրամադրում է չափահաս անձին՝ վերջինիս պահանջով: Ցանկը վաճառարահում և հանրային սննդի օբյեկտներում չի փակցվում: Մարտի 15-ից ուժի մեջ է մտնելու հանրային սննդի օբյեկտներում, այդ թվում՝ բացօթյա (ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ) ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման արգելքը: Միաժամանակ, օրենքով սահմանված այս դրույթների կիրարկումը հնարավորություն է ընձեռնելու նվազեցնել տարբեր ոչ վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ դիաբետի, սրտանոթային հիվանդությունների, թոքերի քրոնիկ հիվանդությունները, քաղցկեղի դեպքերը՝ նպաստելով դրանց դեմ արդյունավետ պայքարին ու նաև տարբեր համավարակների դեպքում (ինչպիսին է COVID-19) նշված հիվանդություններով ապրող անձանց շրջանում ծանր հիվանդացության դեպքերի և մահերի կանխմանը:

<sup>128</sup> ՀՀ առողջապահության նախարարի հրամանը օդանավակայաններում ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152104>

<sup>129</sup> ՀՀ առողջապահության նախարարի հրամանը հիվանդանոցային ձևով հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման համար առանձնացված հատուկ տարածքներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152782>

<sup>130</sup> Հասարակությունն ուժեղ է առողջ քաղաքացիներով, <https://www.moh.am/#1/4298>

<sup>131</sup> ՀՀ օրենք, «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148983>



- **«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի կիրարկման վերահսկողությունը իրականացնող մարմինների և համապատասխան շահագրգիռ կողմերի համար թրեյնինգ-դասընթացների կազմակերպում**

ՀՀ օրենքի կիրարկման վերահսկողությունը իրականացնող մարմինների և համապատասխան շահագրգիռ կողմերի համար թրեյնինգ-դասընթացներ են կազմակերպվել: Իրականացվել են թրեյնինգ-դասընթացներ, մշակվել են թրեյնինգ-դասընթացների շնորհանդեսներ, տեղեկատվական նյութեր:

- **Հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության, դետրային համաճարակաբանական հսկողության համակարգի ներդրում, մասնավորապես արյան հունի վարակների համաճարակաբանական հսկողության համակարգի (համաձայն CEASAR մեթոդաբանության), մանրէաբանների EUCAST մեթոդաբանության ուսուցում**

Հարկ է նշել, որ 2016 թ. հաստատվել է հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրեային դեղերի սպառման կարգավորմանն ուղղված գործողությունների իրականացման համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին<sup>132</sup>, իսկ մինչև այդ 2015թ.՝ հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության 2015-2020թթ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին<sup>133</sup>:

- **Կենդանիների համար կիրառվող հակամանրեային դեղերի ռեգիստրի ստեղծում, մասնագետների համապատասխան մեթոդաբանության ուսուցում**

Ծրագիրն իրականացվելու է 2022թ.: Ծրագրի ավարտին նախատեսվում է կենդանիների համար նախատեսված հակամանրեային դեղերի կիրառման մշտադիտարկման համակարգ ստեղծել և օգտագործման օրինաչափությունների գնահատում իրականացնել:

- **Փորձի փոխանակում, իմունականիսարգելման ոլորտի մասնագետների կրթում և վերապատրաստում**

2021թ. հաստատվել է ՀՀ կառավարության որոշումը «2021-2025թթ. իմունականիսարգելման ազգային ծրագիրը և իմունականիսարգելման ազգային ծրագրի գերակա միջոցառումների ցանկը» պետական ծրագիրը հաստատելու մասին<sup>134</sup>: Իրականացվել են մի շարք հանդիպումներ, առցանց քննարկումներ, տարբեր միջոցառումներ փորձի փոխանակմանն ուղղված ՀՀ առողջապահության

<sup>132</sup> ՀՀ վարչապետի N 31-Ա որոշումը «Հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրեային դեղերի սպառման կարգավորմանն ուղղված գործողությունների իրականացման համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103551>

<sup>133</sup> ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից N 32 քաղվածք «Հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության 2015-2020թթ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99255>

<sup>134</sup> ՀՀ կառավարության որոշումը «2021-2025թթ. իմունականիսարգելման ազգային ծրագիրը և իմունականիսարգելման ազգային ծրագրի գերակա միջոցառումների ցանկը» պետական ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/documentView.aspx?docID=148508>

նախարար Անահիտ Ավանեսյանը և Վրաստանի օկուպացված տարածքներից տեղահանված բնակչության, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարար Եկատերինե Տիկարաձեն<sup>135</sup>; առողջապահության նախարարը ընդունել է Բելգիայի Թագավորության նորանշանակ դեսպան Մարկ Միխիլսենին և շնորհակալություն է հայտնել COVAX նախաձեռնության շրջանակներում Բելգիայի կողմից Հայաստանին նվիրաբերված պատվաստանյութերի հերթական խմբաքանակի համար<sup>136</sup>; Հայաստանի և Լիտվայի միջև գործակցությունն ամրապնդվել է առողջապահության և բժշկագիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրի ստորագրմամբ, մասնավորապես՝ համաձայնագրով նախատեսվում է փոխգործակցություն հանրային առողջության, առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ), մոր և մանկան առողջության պահպանման ոլորտներում, առողջապահական ապահովագրության ներդրման և զարգացման շուրջ, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում և այլ ուղղություններով<sup>137</sup>; Հայաստանը և Ֆրանսիայն քննարկել են մասնագետների վերապատրաստումների կազմակերպման հարցերը, հստակեցրել ոլորտային համագործակցության հիմնական ուղղությունները, անդրադարձել են նաև Հայաստանում COVID-19-ի դեմ պատվաստումային գործընթացին և պատվաստանյութերի ձեռքբերմանն առնչվող մանրամասներին<sup>138</sup> և այլն:

- **Առողջապահության բնագավառի հիմնական և նեղ մասնագիտությունների ցանկի արդիականացում, ինչպես նաև հարբժշկական մասնագիտությունների ցանկի մշակում**

06.05.2021թ. ՀՀ առողջապահության նախարարի N 29-Ն հրամանով հաստատվել է հարբժշկական ծառայությունների ցանկը<sup>139</sup>:

- **ԱԱՊ բարեփոխումների շրջանակներում ընտանեկան բժիշկների մանկաբույժների, դեռահասային բժիշկների և դպրոցական բուժքույրերի պատրաստում և շարունակական մասնագիտական զարգացման գործընթացի ապահովում:**

Համաձայն ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտից ստացված տեղեկությանը իրակացնվում են բժիշկների, մասնավորապես՝ մանկաբույժների շրջանում դարձնաթացներ: Ձևակերպվել է մանկաբույժության ամբիոն: Նախատեսվում է ներդնել բժիշկների կրեդիտավորման համակարգ, համաձայն որի 3-5 տարվա ընթացքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձիք պետք է վերապատրաստվեն: Չնայած նրան, որ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգին մասնակցող անձանց թիվը վերջին 2 տարվա ընթացքում նվազել է, ինչը պայմանավորված է COVID-19 վարակով, «Zoom» հարթակի օգնությամբ դեռևս ապահովվում է մասնագետների պատրաստումը և ՇՄՁ գործընթացը: ՀՀ կառավարության որոշման<sup>140</sup> 2022թ. առողջապահական նպատակային ծրագրերի համաձայն նախատեսվում է 2022թ. ընթացքում իրականացնել մի շարք միջոցառումներ ուղղված առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) ոլորտի զարգացմանը: Նախատեսվում առաջնային բուժօգնության գծով իրականացնել ԱԱՊ ծառայություններ մատուցող մասնագետների (տեղամասային թերապևտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, վարակաբանների)

<sup>135</sup> Հայաստանի և Վրաստանի առողջապահության նախարարները հեռախոսազրույց են ունեցել, <https://www.moh.am/#1/4245>

<sup>136</sup> Քննարկվել են փորձի փոխանակման հնարավորությունները, <https://www.moh.am/#1/4295>

<sup>137</sup> Անահիտ Ավանեսյանն աշխատանքային այցով Լիտվայում է, <https://www.moh.am/#1/4371>

<sup>138</sup> Հումանիտար ուղղությունից՝ մասնագիտական գործակցություն. հանդիպում Ֆրանսիայի դեսպանի հետ, <https://www.moh.am/#1/4399>

<sup>139</sup> ՀՀ ԱՆ N 29-Ն հրամանը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152474>

<sup>140</sup> ՀՀ կառավարության որոշումը «2022թ. առողջապահական նպատակային ծրագրերը հաստատելու մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=156457>

բնակչության կողմից ազատ ընտրության սկզբունքի կիրառման գործընթացի շարունակականության ապահովում և դրա վերաբերյալ տարվա ընթացքում հավաքագրված տեղեկատվության մշակում ու ամփոփում, ԱԱՊ ծառայություններ մատուցող մասնագետների, պոլիկլինիկաների համապատասխան կաբինետների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև մասնագիտացված բժշկական կենտրոնների, միավորումների, համալիրների դիսպանսերային ստորաբաժանումների մասնագետների միջոցով ոչ վարակիչ քրոնիկ հիվանդությունների բարդությունների երկրորդային կանխարգելման նպատակով այդ հիվանդությունների շարունակական կառավարման իրականացում:

- **Առողջապահության ոլորտում մարդկային ներուժի ռեզիստի ստեղծում, ռեզիդենտուրայի կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շուրջ համագործակցություն**

Ծրագիրն իրականացվելու է 2024թ.: Ծրագրի ավարտին նախատեսվում է ստեղծել առողջապահության բնագավառի մարդկային ներուժի համապարփակ ռեզիստ, իրականացնել ռեզիդենտի կրթական գործընթացի համապատասխանեցում միջազգային մոտեցումներին:

- **Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությունը**

*Գործողությունը՝ օրենսդրորեն սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կանոնները*

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության՝ այս գործողությունը բաղկացած է երկու ենթագործողություններից, որոնցով նախատեսվում է 2020 թ. առաջին կիսամյակի ընթացքում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագծերն ուղարկել ԱԺ: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը<sup>141</sup> և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը<sup>142</sup> ընդունվեցին ՀՀ ԱԺ կողմից 2021թ. մայիս ամսին: Թեև օրենքների նախագծերն անցել են երկար տարիների քննարկման ճանապարհ, սակայն դրանց ընդունումն իրականացել է ՀՀ քաղաքացիական հասարակության և շահագրգիռ կողմերի հետ լայն քննարկումների արդյունքում:

04.06.2021թ. ուժի մեջ մտած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի (ՀՈՒԱԻ օրենք) 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության ուղղություններից է՝ «հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ապահովումը՝ զբաղվածությանը, կրթությանը և կենսագործունեության այլ ոլորտներում նրանց լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով»: Նույն օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հաշմանդամության հիմքով խտրականության արգելքը: Նույն հոդվածի 2-րդ կետով ամրագրվում է հաշմանդամության հիմքով խտրականության կանխարգելման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ու իրավունքների պաշտպանության, հատուկ ժամանակավոր միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման շրջանակներում ՀՈՒԱԻ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է աշխատանքային իրավունքների ապահովման ուղղությամբ քայլերի իրականացում, ներառյալ զբաղվածության ծրագրերի հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու, անձի մասնագիտական ունակությունները, հմտությունները, կարողությունները պահպանելու և զարգացնելու, աշխատատեղը մատչելի դարձնելու (աշխատավայրում խելամիտ հարմարեցումներ տրամադրելու) և այլ միջոցներով:

<sup>141</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152960>

<sup>142</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152964>

ՀՈՒԱԻ օրենքի 20-րդ հոդվածը 2000/78/ԵՄ հրահանգի 5-րդ հոդվածին համապատասխան սահմանում է աշխատավայրում կամ ուսումնական հաստատությունում խելամիտ հարմարեցումների ապահովումը, որի տրամադրումը, համաձայն նույն հոդվածի 4-րդ կետի, կարող է մերժվել, չառաջացնելով հաշմանդամության հիմքով խտրականություն, եթե պարտականություն կրողը հիմնավորում է, որ այն իրագործելի չէ (իրավական և (կամ) գործնական տեսանկյուններից), համապատասխան չէ (խելամիտ հարմարեցումը չի համապատասխանում նպատակին կամ անհրաժեշտ չէ), օգտագործված միջոցների (ժամանակի, արժեքի, տևողության և ազդեցության) առումով անհամաչափ է կամ առաջացնում է անհարկի բեռ:

ՀՈՒԱԻ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ «Պետությունը հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովում է արդարադատության մատչելիության իրավունքի իրականացումը՝ դատական գործընթացներին նրանց մասնակցությունը ապահովելու համար ստեղծելով մատչելի պայմաններ և տրամադրելով անհրաժեշտ հարմարեցումներ», որն արտացոլում է 2000/78/ԵՄ հրահանգի 9-րդ հոդված 1-ին կետի պահանջները: Օրենքի ընդունմամբ՝ հարակից օրենքներով նաև ամրագրվել է հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների՝ խտրականության գործերով դատարան դիմելու իրավունքը (actio popularis): Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այս իրավունքը վերապահված է միայն հաշմանդամություն ունեցող անձանց կողմից դեկլարավոդ (երբ անդամների մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք են) կազմակերպություններին, մինչդեռ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այն կազմակերպությունները, որոնց անդամների մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք չեն, զրկված են խտրականության գործերով դատարան դիմելու իրավունքից, ինչը զգալիորեն սահմանափակում է այս իրավունքը: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը բխում է 2000/78/ԵՄ հրահանգի պահանջներից, թեև կա որոշակի բարելավման անհրաժեշտություն:

## Իրավահավասարություն, խտրականության արգելք

### • Ատելության խոսքը

*Գործողությունը՝ Պատասխանատվություն սահմանել ատելության խոսքի համար՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Բարձրացնել իրազեկվածությունը ատելության խոսքի վերաբերյալ:*

Որպես ակնկալվող արդյունք նշված է վերլուծության իրականացումը՝ ատելության խոսքի (ներառյալ առցանց տիրություն) համար պատասխանատվության վերաբերող միջազգային չափանիշների և լավագույն փորձի վերաբերյալ և համապատասխան իրավական ակտ(եր)-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի քննարկումը ԱԺ-ում: Թեև Մշտադիտարկման ճանապարհային քարտեզով այս գործողության համար վերջնաժամկետ է նախատեսված 2021թ., սակայն ՄԻՊ ռազմավարության նույն գործողության վերջնաժամկետը 2022թ. է:

2020թ. ընթացքում ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի կողմից ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված ՀՀ օրենսդրության բարեփոխումների նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Թեև խմբի կազմում ընտրվել են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, սակայն նրանց մասնակցությունը

քննարկումներին սահմանափակվել է 1 հեռավար հանդիպմամբ: Այս առումով ՔՀԿը բազմիցս նշել են խմբի ոչ մասնակցային և ոչ թափանցիկ աշխատանքի մասին:

ԱԺ մարդու իրավունքների հանձնաժողովը վերլուծության իրականացումը՝ ատելության խոսքի (ներառյալ առցանց տիրություն) համար պատասխանատվության վերաբերող միջազգային չափանիշների և լավագույն փորձի վերաբերյալ պատվիրակել է իրավաբան Արա Ղազարյանին: Հատկանշական է, որ թեև հետազոտությունն<sup>143</sup> ու դրա արդյունքներն արդեն հրապարակված են, սակայն այն հնարավոր եղավ գտնել միայն հետազոտության հեղինակի կայքում, քանի որ ԱԺ կայքում հետազոտությունը հրապարակված չէ: Նույնաբովանդակ հետազոտություն<sup>144</sup> նույն իրավաբանին՝ միջազգային փորձագետի ներգրավմամբ իրականացվել է նաև ՀՀ ԱՆ խնդրանքով՝ Եվրոպական միության եւ Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ ֆինանսավորվող՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) շրջանակներում իրականացվող «Արդարադատության մատչելիության խթանում Արեւելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հանցագործությունների եւ ատելության խոսքի գոհերի համար՝ արտադատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագրի համատեքստում: Այնուամենայնիվ, ո՛չ ԱԺ աշխատանքային խումբը, ո՛չ ՀՀ ԱՆը մինչ օրս չեն հրապարակել իրականացված վերլուծությունների արդյունքում մշակված օրենսդրական փոփոխությունների որևէ փաթեթ, այդ թվում նաև «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծի սպասվող փոփոխությունները: Քանի որ մշակված որևէ նախագիծ դեռ չի հանրայնացվել, ուստի բովանդակային գնահատական դրան չի կարող տրվել:

Ատելության խոսքի մասին իրազեկման բարձրացմանն ուղղված գործողությունների առումով ՀՀ օմբուդսմենի կայքում 2021թ. դեկտեմբեր ամսին հրապարակվել են 3 տեսանյութեր<sup>145</sup>, որոնք իրազեկում են հանրությանը ատելության խոսքի վտանգավոր կողմերի և դրա դեմ պայքարի անհրաժեշտության մասին: Տեսանյութերը պատրաստվել են «Արդարադատության մատչելիության խթանում Արեւելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հանցագործությունների եւ ատելության խոսքի գոհերի համար՝ արտադատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագրի շրջանակում՝ ԵՄ և ԵԽ ֆինանսավորմամբ:

#### • Գենդերային հավասարության ապահովումը

*Գործողությունը՝ Կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ ազգային ռազմավարության մշակումը*

ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունն<sup>146</sup> ընդունվել է ՀՀ կառավարության որոշմամբ 2019թ-ին: Ռազմավարության ընդունմանը նախորդել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումները: Այս առումով գործընթացն իրականացել է մասնակցային և թափանցիկ: Մինևնույն ժամանակ հարկ է նշել, որ այս ռազմավարությունը մեր գնահատմամբ չի կարող համարվել համապարփակ ազգային ռազմավարություն կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ, հատկապես որպես ՀԸԳՀ շրջանակներում իրականացվող գործողություն: ՀԸԳՀ շրջանակներում ՀՀ ստանձնել է գենդերային հավասարության ապահովմանն ուղղված մի շարք ԵՄ հրահանգներին ՀՀ օրենսդրության մոտարկման պարտավորություն: Այդ հրահանգները նախատեսում են գենդերային հավասարության ապահովման գործուն մեխանիզմների առկայություն և կիրառում համապարփակ հակախտրական օրենսդրության ընդունումից մինչև սոցիալական քաղաքականության վերանայում, սեռական ոտնձգությունների կանխարգելմանն ուղղված կարգավորումների ընդունում և հղի և վերջերս ծննդաբերած աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներմուծում: Հետևաբար, այս պարտավորությունների շրջանակում ընդունված

<sup>143</sup> Հասանելի է այստեղ՝ <https://aglaw.am/img/b845a3de0f2ca536e9af2769aa918008.pdf>

<sup>144</sup> Հասանելի է այստեղ՝ <https://rm.coe.int/final-report-on-reforming-armenian-hate-speech-laws-arm/pdf/1680a0b84d>

<sup>145</sup> Հասանելի է այստեղ՝ [https://ombuds.am/am/site/NewsVideoGallery?place=media\\_informing\\_video](https://ombuds.am/am/site/NewsVideoGallery?place=media_informing_video)

<sup>146</sup> Հասանելի է այստեղ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904>

համապարփակ ռազմավարությունը պետք է առնվազն անդրադառնա վերոնշյալ խնդիրներին՝ որպես առաջնայնություններ և նպատակներ: Մինչդեռ 2019թ. ընդունված ռազմավարության առաջնայնություններն ու նպատակները թեև կրկին կարևոր են, սակայն չեն ներառում վերոնշյալ հարցերից որևէ մեկը: ՀՀԳՀ շրջանակներում ընդունված համապարփակ ռազմավարության ժամկետը նույնպես պետք է լինի առնվազն մինչև 2026թ., ուստի կարծում ենք, որ ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունը չի կարող համարվել ՀՀԳՀ պարտավորությունների շրջանակում ընդունված համապարփակ ազգային ռազմավարություն և անհրաժեշտ է ընդունել նոր՝ 2023-2026թթ. ռազմավարություն նոր առաջնահերթություններով:

## Խոշտանգումների արգելք

- **Խոշտանգումների արգելքը**

*Գործողություն՝ Օրենսդրորեն սահմանել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթները*

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով նախատեսված են առանձին հանցակազմեր ֆիզիկական ներգործության և հոգեկան ներգործության, ինչպես նաև ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու համար: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով նախատեսված են առանձին հանցակազմեր ֆիզիկական ներգործության և հոգեկան ներգործության, ինչպես նաև ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու համար:

Հոդված 194՝ հոգեկան ներգործությունը՝ Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը (...): Հոդված 195՝ ֆիզիկական ներգործությունը՝ հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը, եթե չեն առաջացել սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հետևանքները (...): Հոդված 196՝ անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները (...):

## Գործի արդար քննության իրավունք

- **Գործի արդար քննության իրավունքը, բերման ենթարկելու ինստիտուտի իրավակարգավորումները**

*Գործողությունը՝ Օրենսդրորեն ամրապնդել իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց քրեաիրավական պաշտպանության երաշխիքները:*



Բերման ենթարկելու ինստիտուտի հստակ իրավակարգավորումները, դրա իրացման մեխանիզմներում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հստակեցման հիմնախնդիրը իր լուծումն է ստացել քրեական դատավարության օրենսգրքի նախագծում: Հարկ է նշել, որ բերման ենթարկելու ինստիտուտի իրացման դատավարական գործընթացի պատշաճ վիճակագրություն իրավապահ մարմինների կողմից, ըստ էության, չի վարվում, ինչը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկեր ունենալ հատկապես մարդու իրավունքների խախտումների արձանագրումների վերաբերյալ: Դատախազության, ԱԱԾ, ոստիկանության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ բերման ենթարկված անձանց, նրանց իրավունքների պաշտպանության ոլորտում ստացված բողոքների վերաբերյալ առանձին վիճակագրական հաշվառում 2021թ. ևս չի վարվում: Բերման ենթարկելու իրավական գործընթացներում արձանագրվում են նաև ուժի անհամաչափ կիրառման դեպքեր, որոնց վերաբերյալ պատշաճ քննություն չի իրականացվում: Ընդ որում, այլ իրավապահ մարմինների կողմից բերման ենթարկելու դեպքերի վերաբերյալ հաշվառում չվարելը և ուսումնասիրություններ չիրականացնելը կարող է հանգեցնել նաև դեպքերի թաքցման մեծ ռիսկերի: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից նախատեսվում է 2021թ. տարեկան հաշվետվության մեջ անդրադարձ կատարել նաև բերման ենթարկելու գործընթացում մարդու իրավունքների խախտման դեպքերին, ինչպես նաև այդ ոլորտում այլ խնդիրների ուսումնասիրությանը: Ոլորտի վերաբերյալ ամբողջական պատկեր ունենալու լուծումը դատախազության կողմից միասնական վիճակագրության վարումն է, ինչը հնարավորություն կտա բացահայտել բերման ենթարկելու իրավական ընթացակարգերի խախտման պատճառները և վերլուծությունների արդյունքում ներկայացնել նաև առաջարկներ:

Հարկ է նաև նշել, որ ԱՆը 03.06.2021թ. ՄԻՊ ազգային ռազմավարության համակարգող խորհրդի անդամներին տեղեկացրել է, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրի 33-րդ կետով նախատեսվում է օրենսդրորեն ամրապնդել իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց քրեաիրավական պաշտպանության երաշխիքները: Սույն գործողության անմիջական ակնկալվող արդյունք են սահմանվել իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց քրեաիրավական պաշտպանությանն առնչվող միջազգային չափանիշների և լավագույն փորձի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացումը և ըստ ուսումնասիրության արդյունքների՝ օրենսդրական առաջարկների կամ համապատասխան ուղեցույցների մշակումը: Սույն գործողության իրականացման շրջանակներում Արդարադատության նախարարությունը համագործակցում է Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող (SIDA) և Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի ինստիտուտի (Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law) կողմից իրականացվող Ծրագրի հետ: Խորհրդի անդամներին է ներկայացվել Ծրագրի ազգային և միջազգային փորձագետի կողմից կազմված իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց քրեաիրավական պաշտպանությանն առնչվող միջազգային չափանիշների և լավագույն փորձի վերաբերյալ ուսումնասիրության նախագիծը և խնդրել ԱՆը ներկայացնել դիտարկումները սույն նախագծի վերաբերյալ: Նախագծի վերաբերյալ դիտարկումները ներկայացվել են սույն մշտադիտարկումն իրականացնող կազմակերպությունների կողմից: Հետագա զարգացումների մասին տեղեկություններ չկան:

▪ **Ազդարարման համակարգ**

2021թ. ազդարարման համակարգի կատարելագործման օրենսդրական և ոչ օրենսդրական աշխատանքներ չեն իրականացվել: Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ

համակարգով 2021թ. ստացված հաղորդումների վերաբերյալ ամփոփման արդյունքներ ՀՀ գլխավոր դատախազությունը դեռևս չի հրապարակել:

## Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցեր

*Գործողությունը՝ ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի կիրարկման շրջանակում վերադարձողների համար աջակցություն տրամադրել:*

*(1) Վերադարձի և վերաինտեգրման հարցերով ֆորումի աշխատանքներ*

2021թ. ընթացքում ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության նախաձեռնությամբ տեղի է ունեցել Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի (այսուհետ՝ ֆորում) երեք հանդիպում (2021թ. փետրվարի 16-ին<sup>147</sup>, հուլիսի 12-ին<sup>148</sup> և նոյեմբերի 9-ին<sup>149</sup>): Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստան վերադարձի և վերաինտեգրման հետ կապված խնդիրներ, դրանց լուծմանը միտված քայլեր, ոլորտի պետական քաղաքականության հետ կապված հարցեր: Հանդիպումների արդյունքներն ամփոփվել են արձանագրությունների մեջ, որտեղ, բացի օրակարգում ընդգրկված հիմնական հարցերի ներկայացումից, ամփոփվել են նաև ֆորումի անդամ հանդիսացող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերում 2021թ. ընթացքում տեղի ունեցած վերջին զարգացումները, փոփոխություններն ու առաջիկա անելիքները:

Մասնավորապես, ֆորումի հանդիպումների ընթացքում քննարկվել են՝ առաջիկայում նախատեսվող միգրացիայի կառավարման համակարգի բարեփոխումները, ըստ որի՝ առաջիկայում նախատեսվում է ունենալ ՀՀ ներքին գործերի նախարարություն, որի կազմավորման արդյունքում կմիավորվեն ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայությունը և Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը (նոր ձևավորվող մարմինը կոչվելու է Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն), ՀՀ քաղաքացիների վերադարձի և վերաինտեգրման գործընթացում պետության դերն ու այդ ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ «ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի» իրականացման ընթացքը, ծրագրում կատարված փոփոխություններն ու գրանցված արդյունքները, «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի N 801-Լ որոշումը, «ՀՀ միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2022-2032 թվականների ռազմավարության» նախագծի մշակմանն ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչպես նաև փաստաթղթով ամրագրված հիմնական ռազմավարական նպատակներն ու ուղղությունները, ՀՀ-ում իրականացվող վերաինտեգրման ծրագրերի վերաբերյալ տարեկան ամփոփ վիճակագրությունը՝ տրամադրված ֆորումի անդամ կազմակերպությունների կողմից, ֆորումի անդամ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում 2021թ. ընթացքում վերաինտեգրման աջակցություն ստացած

<sup>147</sup> 2021թ-ի ընթացքում կսկսվի աջակցության տրամադրում ՀՀ վերադարձողներին: <http://migration.am/news/414>

<sup>148</sup> Կայացավ վերադարձի եւ վերաինտեգրման հարցերով ֆորումի 10-րդ հանդիպումը: <http://migration.am/news/423>

<sup>149</sup> Կայացավ վերադարձի եւ վերաինտեգրման հարցերով ֆորումի 11-րդ հանդիպումը: <http://migration.am/news/441>

շահառուների վերաբերյալ վիճակագրություն, վերադարձած միգրանտների մասին հաջողված պատմություններ:

*(2) Վերադարձի և վերահինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN Հայաստան) ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացում*

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ/ICMPD) հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «ERRIN Հայաստան» ծրագրի շրջանակում «Վերահինտեգրման» բաղադրիչին ավելացած 2-րդ՝ «Կարողությունների զարգացման» բաղադրիչը մեկնարկեց հուլիսի 1-ից և դրա աշխատանքներում ներգրավվել են երկու նոր փորձագետ՝ ծրագրի պատասխանատուն և հոգեբանը: «Կարողությունների զարգացման» բաղադրիչի շրջանակներում 2021թ-ի հուլիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են միգրացիոն ծառայության մարդկային և տեխնիկական կարողությունների հզորացմանն ուղղված մի շարք աշխատանքներ, որոնց մասին մանրամասները ներկայացվում են ստորև:

Միգրացիոն ծառայության աշխատակազմի հետ վերապատրաստման և Հայաստան վերադարձող շահառուների հետ տարվող հոգեբանական աշխատանքների իրականացում: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ Ծրագրի սկզբից ի վեր 14 շահառու ստացել է հոգեբանական խորհրդատվություն, որից երեքը եղել է երեխա: Բացի այդ, Միգրացիոն ծառայության աշխատողների հետ իրականացվել են հոգեբանական վերապատրաստման պրակտիկ հանդիպումներ, որի ընթացքում քննարկվել են խնդրահարույց դեպքերը, աշխատանքի հոգեբանական կողմին վերաբերող հարցեր, ինչպես նաև քննարկվել են հոգեբանի կողմից ներկայացվող պայմանական դեպքեր: Ի լրումն, ՄԾ աշխատակազմի հետ կազմակերպվել են տեսական միջոցառումներ՝ հետևյալ թեմաներով. «Միգրացիան որպես տրավմատիկ փորձառություն», «Վիկարյան տրավման միգրանտների հետ աշխատող մասնագետների մոտ», «Մասնագիտական սահմանի պահպանումը», «Հոգեկան խնդիրներ ունեցող շահառուների հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Բողոքող և ագրեսիվ վարքով շահառուների հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Շահառուի խոցելիության հարցը և տրվող օգնության հոգեբանական կողմը»: Տեսական այս թեմաների հիման վրա գրվել են օրիգինալ տեքստեր՝ նախատեսվող ուղեցույցի համար:

Հայաստան վերադարձած միգրանտների հետ աշխատանքում աշխատակիցների հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների կազմակերպում: Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) կողմից իրականացվող «ERRIN Հայաստան» ծրագրի կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակներում Միգրացիոն ծառայության աշխատակիցները, ինչպես նաև գործընկեր միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցեցին վերադարձի և վերահինտեգրման խորհրդատուների համար կազմակերպվող հաղորդակցության հմտությունների դասընթացին: Նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 3-ը Միգրացիոն ծառայությունում անցկացվել են Հայաստան վերադարձած միգրանտների հետ աշխատանքում աշխատակիցների հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթաց: Դասընթացի նպատակն էր Ծառայության Վերադարձի և վերահինտեգրման բաժնի աշխատակիցների, ինչպես նաև ոլորտի համագործակից կառույցների և կազմակերպությունների աշխատակիցների՝ հաղորդակցության ոլորտում վերապատրաստումը, խնդրահարույց շահառուների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպումը:

*(3) «EU4IMPACT ARMENIA» ծրագիր*

Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և Միգրացիոն քաղաքականության Միջազգային կենտրոնի կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն միգրանտների ներուժի հզորացման» ի նպաստ Հայաստանի զարգացման» (EU4IMPACT ARMENIA) ծրագրի պաշտոնական մեկնարկը տեղի է ունեցել ս.թ. մարտի 15-ին: Մինչ գործնական փուլ թևակոխելը՝ մարտ-սեպտեմբեր ամիսներին

իրականացվել է ակտիվ նախապատրաստական աշխատանք, այդ թվում երկարատև քննարկումների արդյունքում ընտրվել է ծրագրի կրթական փուլի իրականացման գործընկերը՝ «ԻԲԻՄ Բիզնես Ինկուբատոր» հիմնադրամը և հստակեցվել են վերջինիս հետ համագործակցության պայմանները: Միաժամանակ ընթացք տրվեց հանրային իրազեկման լայնածավալ արշավին, որի շրջանակներում նախնառաջ մշակվեց և հաստատվեց իրազեկման նյութերի (ինչպես տպագրական, այնպես էլ՝ տեսաձայնային) դիզայնն ու բովանդակությունը, ապա ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության աջակցությամբ կապ հաստատվեց ՀՀ մարզպետարանների հետ՝ իրազեկման այցերի արդյունավետ պլանավորումն ապահովելու նպատակով: Մարզպետարաններում նշանակվեցին համապատասխան կոնտակտային պաշտոնատար անձինք և հստակեցվեց վերջիններիս համակարգող դերը:

Այդ ամենը թույլ տվեց, ըստ ծրագրի հաստատված միջոցառումների ծրագրի, սեպտեմբերի 23-ից մեկնարկել մարզային իրազեկման այցերի շարքը: Մեկ ամսվա ընթացքում, մինչև ս.թ. հոկտեմբերի 22-ը, իրականացվել են 12 մարզային և համայնքային իրազեկման այցեր և հանդիպումներ մարզային և համայնքային պատասխանատուների, ինչպես նաև ոլորտում գործող ՀԿ-ների և համայնքային կառույցների ներկայացուցիչների հետ: Ընդհանուր առմամբ նշված հանդիպումներին մասնակցեց մինչև 250 անձ, տարածվեց ավելի քան 1000 թերթոն և 500 պաստառ: Մարզային հեռուստաալիքներով հեռարձակվեցին բովանդային ռեպորտաժներ և հարցազրույներ ծրագրի պատասխանատուների հետ: Միաժամանակ, հոկտեմբերի 1-ին հրապարակվեց հայտադիմումների ներկայացման առաջին հայտարարությունը՝ երկու ամիս ժամկետով: Հայտադիմումների ներկայացման ակտիվությունը թույլ տվեց հաստատել իրազեկման արշավի բացառիկ արդյունավետությունը: Մինչև նոյեմբերի 30-ը ծրագիրն ստացել է 126 հայտադիմում: Ներկայում կատարվում է հայտադիմումների նախնական ուսումնասիրում ու հեռախոսային հարցազրույցներ դիմորդների հետ, ինչի հիման վրա կառանձնացվեն ուսումնական փուլի մասնակիցները: Բուն ուսումնական փուլի մեկնարկը նախատեսվում է 2022թ. հունվարի երկրորդ շաբաթվանից: Դասընթացին առանց բացակայությունների մասնակցած, քննությունը հաջողությամբ հանձնած ու մրցութային հանձնաժողովի կողմից հավանության արժանացած բիզնես-պլան մշակած 25-30 մասնակիցները կդառնան ծրագրի շահառու և ծրագրի կողմից հատկացվելիք 2.000-10.000 եվրո չափի դրամաշնորհի (և նույն չափի սեփական ներդրման) օգնությամբ հնարավորություն կստանան հիմնել կամ ընդլայնել սեփական գործը:

Գործողությունը՝ Համագործակցել ԵՄ երկրների հետ համագործակցություն ռեադմիսիայի ոլորտում

Ըստ Միգրացիոն ծառայության տեղեկությունների, Ծառայությունն ակտիվորեն մասնակցել է միգրացիայի հարցերով միջազգային համաձայնագրերի, մասնավորապես՝ հետընդունման (ռեադմիսիայի) մի շարք միջպետական համաձայնագրերի նախապատրաստման և կնքման գործընթացներին: 19.04.2013թ. «ՀՀ և ԵՄ միջև առանց թուլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի շրջանակներում 2021թ. ընթացքում կիրարկման երկկողմ համաձայնագրեր են ստորագրվել Լեհաստանի Հանրապետության (հոկտեմբերի 29-ին) և Լիտվայի Հանրապետության (հունիսի 15-ին) հետ: «ՀՀ կառավարության և Լատվիայի Հանրապետության կառավարության միջև «ՀՀ և ԵՄ միջև առանց թուլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկող արձանագրությունը պատրաստ է ստորագրման: Ընդհանուր առմամբ, մինչև այսօր 19.04.2013թ. «ՀՀ և ԵՄ միջև առանց թուլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրություններ են վավերացվել ԵՄ անդամ 5 երկրների հետ:

Գործողությունը՝ Ներդնել և գործարկել ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգ

Գերմանիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Բելգիայի, Բուլղարիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի և Իտալիայի միգրացիոն հարցերով զբաղվող համապատասխան մարմինների ներկայացուցիչների կողմից ստացված հայցերի վարման ամբողջ գործընթացը տեղի է ունենում

Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (ՌՀԿԷՀ) միջոցով: 2021թ. ԵՄ անդամ երկրներից համակարգին միացել են նաև Դանիան, Լյուքսեմբուրգը և Շվեդիայի միգրացիոն ծառայությունը: 2021թ. կատարվել են ՌՀԿԷՀ-ի շարունակական բարելավման աշխատանքներ, որոնք որոշակի նորացված տեխնիկական հնարավորություններ են ընձեռում:

*Գործողությունը՝ անկանոն միգրացիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացում և դրա հետևանքների մասին իրազեկում պոտենցիալ հայ միգրանտների ու բնակչության շրջանում*

2021թ-ի ընթացքում շարունակվել են անկանոն միգրացիայի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական արշավներն ու տարաբնույթ ծրագրերը, որոնք իրականացվում են միջազգային կազմակերպությունների հետ համատեղ: Սույն մշտադիտարկման անդամ կազմակերպության՝ Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից 27.07.2021թ. և 27.11.2021թ. անցկացվեցին սեմինարներ՝ «ՀՀ և ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի իրականացման վերաբերյալ<sup>150</sup>: Միջոցառման ընթացքում ՀՀ-ում մի շարք օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, փորձագետներին, ուսանողներին, լրագրողներին ներկայացվեցին Հայաստան-ԵՄ հարաբերությունների պատմությունը, ՀՀ վերադարձի քաղաքականության, ինչպես նաև ՀՀ-ԵՄ հետընդունման և վիզաների ազատականացման վերաբերյալ զարգացումները:

Միգրացիոն ծառայության աշխատակիցների կողմից պարբերաբար հարցազրույցներ են տրվել լրատվամիջոցներին՝ անկանոն միգրացիայի ռիսկերի ու հետևանքների, ինչպես նաև հետընդունման (ռեադմիսիոն), վերադարձի և վերաինտեգրման հարցերի վերաբերյալ: 15-06.11.2021թ. Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան առաքելության գրասենյակը (ՄՄԿ) EMERGE-ի<sup>151</sup> շրջանակներում, համագործակցելով ՄՄԿ-ի վրաստանյան գրասենյակի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ Միգրացիոն ծառայության հետ, կազմակերպել է երկօրյա համաժողով որտեղ քննարկվել են ԿՈՎԻԴ-19 համաճարակի ազդեցությունը և դրա հետևանքները միգրացիայի տարբեր ուղղությունների վրա, մասնավորապես՝ աշխատանքային միգրացիային առնչվող խնդիրները<sup>152</sup>:

<sup>150</sup> Վերադարձ և վերաինտեգրում թեմայով աշխատաժողով՝ Երևանում, հասանելի է այստեղ՝ <http://migration.am/news/451>

<sup>151</sup> Enhancing Migrants' Rights and Good Governance in Armenia and Georgia (EMERGE)

<sup>152</sup> Հասանելի է այստեղ՝ <https://armenia.un.org/hy/163825-migratsiavi-karavarman-erkrord-taracasrjanayin-hamazogovi-srjanaknerowm-karavarowtyowwnneri>